




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հայկերէի
արքայազնի զորք
1928

491.99-8

9-31

09 MAY 2010

14 MAR 2013

491.542-86
Գ-31

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

491.99-8

Գ-31

ՄԱՄԻԿՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

1003
14208

Հասակավոր կիսագրագետների դպրոցների յեվ
իմֆնագարգացման համար

9830

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1928.



15, 2990

8000

491.502-86
9-43

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻՆ

Այս գիրքը գրված է հասակավոր կիսագրագետների դպրոցների և ինքնագրագրական համար: Նա կազմված է Քաղլուսգլխավարի նոր ծրագրով,¹ վորը կիսագրագրություն վերացման դպրոցների վերջին տարիների փորձի հիման վրա վերամշակված, պարզեցված և կրճատված է:

«Հայերենի աշխատանքի գիրք»-ը կազմված է կոմպլեքսային սխեմով և բավարար նյութ է տալիս կիսագրագետների դպրոցում ամբողջ ուսումնական տարում պարապելու: Նա լուսարանում և գյուղական տնտեսության ամբացման, արդյունաբերության բարձրացման, խորհուրդների աշխատանքների աշխուժացման, նոր կենցաղի կառուցման, խորհրդային Միության պաշտպանության և այլ կարևորագույն սոցիալիստական շինարարության խնդիրները:

Ինքնուրույն աշխատանքի վարժեցնելու և սովորողների ինքնագործունեությունն ու ստեղծագործությունը զարգացնելու համար ուսուցիչը դպրոցում լոկ պիտի կազմակերպի սովորողների ինքնագրագրական և ինքնաշխատության գործը, ուղղություն տա, այս գրքով նրանց աշխատել սովորեցնի:

Սակայն մեր կիսագրագետների դպրոցները չեն կարող ընդգրկել բոլոր կիսագրագետներին. շատ բանավորներ ու գյուղացիներ դպրոցից դուրս՝ խմբակով կամ մենակ ինքնագրագրական միջոցով պետք է պարապեն, իրենք իրենց, առանց ուսուցչի կարգալ և գրել սովորելը շարունակեն, վորպեսզի լիկկալանում սովորածը չմոռանան: Հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքներն՝ այս գրքում ուղադրության կենտրոնը փոխադրված է սովորողների ակտիվության և ինքնագործունեության վրա. այդ նպատակով գրքում գրված են մեթոդական ցուցմունքներ, գիրքը բաժանված է որական պարապմունքների և այնքան է պարզեցրած և հեշտացրած գրքից ոգտվելը, վոր նա դառնում է խկական Աշխատանքի գիրք թե դպրոցների և թե ինքնագրագրական համար:

Այսպիսով «Մաթեմատիկայի աշխատանքի գրքից» հետո հրատարակելով սույն «Հայերենի աշխատանքի գիրք»-ը՝ Քաղլուսգլխավորը հնարավորություն է ստեղծում կարգալու, գրելու և հաշվելու ունակություններն ուժեղացնելու կիսագրագետների դպրոցներում և ինքնագրագրական խմբակներում:

Այս հիմնական դասագրքերի հետ միաժամանակ նոր ծրագիրը հաջող մշակելու համար հարկավոր է ոգտագործել նաև Ռ. Աբրահամյանի և Յե.

¹ «Կիսագրագետների դպրոցների և խմբակների ծրագիր», Յերևան, 1928 թ. Քաղլուսգլխավարի հրատարակություն, էջ 40, գինը 15 կոպ.:

Հասարթյանի «Ձեռնարկ Տնտեսական աշխարհագրության և բնագիտության» (Յերևան, 1927 թ., Քաղլուսգլխվարի հրատարակութուն), Քաղլուսգլխվարի №№-1 և 2 մեթոդական նամակները և այն լրացուցիչ գրականութիւնը, վորը ցույց և տրված ծրագրի 14 էջում:

Պետք է ամեն կերպ աշխատել 90 պարապմունքի որ ունենալ: Այս գրքում 78 պարապմունք է նշանակված, վորպեսզի հնարավորութիւն տրվի դասերի ընթացքում ժամանակ հատկացնելու «Մաճկար», «Ավանդարդ» լրագրներն ու «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը և այլ պարբերականներ, պատին փակցրած հայտարարութիւններ, պլակատներ ոգտագործելու: Այդ դասավանդման անհրաժեշտ տարրն է:

Քաղլուսգլխվարը խնդրում է այս գիրքը գործադրողներին ուղարկել իրենց բոլոր առաջարկութիւններն ու դիտողութիւնները: Միայն պրակտիկ-դասատուների անմիջական մասնակցութեամբ կարելի կլինի հաջող կերպով շարունակել նոր դպրոցին բավարարող «Աշխատանքի գիրք» ստեղծելու գործը:

ՔԱՂԼՈՍԳԼՍՎԱՐ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

1-ԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ԺԱՆՈՐԺԱՆԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ



ԻՆՉ Ե ԱՍԵԼ ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կ. ՄՏԵՓԱՆՅԱՆ

Հասակավորներից շատերն ասում են՝ մեր ժամանակն անցել է. թող յերեխեքը սովորեն:

Դա շատ սխալ է: Յերեխեքը պետք է սովորեն և սովորում են: Հասակավոր անգրագետն էլ չպիտի մնա առանց կարդալու:

Անգրագետը չի կարող յերկիր կառավարել: Անգրագետ բանվորը չի կարող լավ տեսակի և շատ ապրանք պատրաստել: Անգրագետ գյուղացին չի կարող իր տնտեսութիւնը զարգացնել, չի կարող իր գյուղխորհրդի նախագահ կամ անդամ լինել, կոոպերատիվի վարչութեան անդամ դառնալ, չի կարող ժողովրդական դատարանում ատենակալ լինել կամ տրակտորի հետ գործ ունենալ: Անգրագետին շատ դժվար է այդ բոլորը կատարել. յեթե անի եւ, ոգուտը շատ քիչ կլինի:

Բանվորն ու գյուղացին իրենց գործը կուժեղացնեն այն ժամանակ, յերբ նրանք գրագետ են:

Դրա համար եւ, այ ի՞նչ է ասել ընկ. Լենինը.

«Ի՞նչ է ՄԵՁ ՀԱՐԱՎՈՐ.

ԱՌԱՋԻՆԸ՝ ՍՈՎՈՐԵԼ,

ՅԵՐԿՐՈՐԴԸ՝ ՍՈՎՈՐԵԼ ՅԵՎ

ՅԵՐՐՈՐԴԸ՝ ՍՈՎՈՐԵԼ»:

ՆԱԽ ԱՄԵՆ ՄԵԿԳ ԿԱՐԳԱՅԵՔ ՅԵՐԿՈՒԱԿԱՆ ՏՈՂ ՅԵՎ ԱՊԱ ԱՐՏԱԳՐԵՅԵՔ ՀԱՐՅԱԹԵՐԹ ՈՒ ԱՄԵՆ ՄԵԿԳ ՊԱՏԱՍԽԱՆԵՅԵՔ ՁԵՁ ՀԱՄԱՐ.

ՀԱՐՅԱԹԵՐԹ

- | | | | | | |
|---------------------------|-------------------|---|---|---|----------|
| 1. Ազգանուն | . | . | . | . | Թորոսյան |
| 2. Անուն | . | . | . | . | Սարգիս |
| 3. Հայրանուն | . | . | . | . | Գրիգորի |
| 4. Տարիքը | . | . | . | . | 24. |
| 5. Վճիռ միութեան անդամ եր | Հողանտառ միութեան | | | | |
| 6. Վճիռ եր ծառայում | . | . | . | . | գյուղում |

Ստորագրութիւն՝ Ս ԹՈՐՈՍՅԱՆ

Մալխի 15-ին 1928 թ.

2-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ծանոթանա՛ք «Հայերենի աշխատանքի գրքին» և սովորենք աշխատելու ձևերը:

1. Գրքի առաջին յերեսում կարդա՛.

1. Գրքի անունը.

2. Կազմողի կամ հեղինակի անունն ու ազգանունը.

3. Ո՛ւմ համար է գրված գիրքը.

4. Վճիռ ե տպված և վճիռ թվին.

5. Ո՛վ է տպագրել և տարածել (հրատարակել).

2. Գրքի յերկրորդ յերեսի ներքևում կարդա՛.

1. Քանի՞ որինակ է տպագրված (տիրաժ).

2. Վճիռ տպարանում է տպագրված.

3. Գրքի վերջում գտի՛ր բովանդակութիւնը կամ ցանկը և կարդա՛.

1. Բաժինների վերնագրերը.

2. Յուրաքանչյուր բաժնի հարցերը.

3. «Գյուղատնտեսական մեքենաներ պետք է ընկերութեան միջոցով ձեռք բերել» հարցի վերաբերյալ հողվածները, պատմվածքներն ու վոտանավորները (բանաստեղծութիւններ).

4. Յանկով իմացե՛ք, թե՛ վոր պարապմունքի մեջ են.

1. Ակսել Բակունցի «Վարձակայան» պատմվածքը.

2. Հակոբ Հակոբյանի «Բագու» բանաստեղծութիւնը.

3. «Լուկաշեն կոլլեկտիվ տնտեսութիւն» հողվածը:

ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ

1. Մի աշխատիր մինչև բոլորովին հոգնելդ: Դա-
դարներով աշխատիր:

2. Աշխատանքիդ ժամանակ մի ուտի և մի ծխի:

3. Ամեն մի պատահական կողմնակի գործի հա-
մար աշխատանքիցդ մի կտրվի:

4. Յեթե աշխատանքդ լավ չի գնում, մի հոու-
սահառովի. դադարեցրո՛ւ աշխատանքդ, հանգստացիր
և նորից սկսիր աշխատել:

5. Աշխատանքդ կիսատ մի թողնի: Լենինի պես
աշխատանքի մեջ յեղիր դիմացկուն և ճշտապահ:

(Փոխադրություն ռուսերենից)


ԿԱՐԴԱ՝ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԽՈՍՈՒՄ ԵՍ.

ԲԱՌԵՐԸ ՊԱՐԶ ԱՐՏԱՍԱՆԻՐ.

ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԼԱՎ ՀԵՏԵՎԻՐ.

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԱՄՐԱՑՆԵՆՔ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



1. ՀԱՐՅ. ՆՈՐ ԿՅԱՆՔ ԵՆՔ ԿԱՌՈՒՅՈՒՄ

Յ-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Սիրելի Արամ,

Լիկկայանը վերջացրի գարնանը: Այժմ գնում եմ
կիսապրագեաների դպրոց: Մեր գյուղն արդեն զարթ-
նում է: Բոլորը սովորում են և աշխատում են շե-
նացնել մեր գյուղը: Գյուղում բացվել է խրճիթ—
ընթերցարան: Այդտեղ կարդում են թերթեր և լսում
գեկուցումներ, Խրճիթ-ընթերցարանին կից կա գյուղ-
խմբակ: Այդտեղ գյուղացիներն իրենց տնտեսու-
թյունը բարելավելու ձևերն են սովորում: Յերկու
կին գյուղխորհրդի անդամ են ընտրվել: Շուտով բաց-

վերլույն կողմերատիվ: Մեր գյուղն առաջադիմում է:
Շուտ-շուտ նամակ գրիր: Ձեր գործարանի կյան-
քից նորոթյուններ հայտնիր:

Ընկերական բարեներով՝ ԱՌԳԱՐ

նոյեմբերի 10-ին, 1928 թ.

Ծաղկաշեն:

ՀԱՐՅԵՐ.

1. Կարգալու ժամանակ դադարներ անում ես:
2. Դադարների տեղ ի՞նչ նշան ե գրված:
3. Վերջակետերի տեղում ձախդ բարձրացնում ես, թե ցած-
րացնում:
4. Ի՞նչ տառով ե սկսվում վերջակետից հետո չեկող բառը:

ՄԻ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ ԿԱՐԴԱՎ՝ ՎԵՐՋԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԵՐՈՒՄ ԴԱ-
ԴԱՐ ԱՆԵԼՈՎ ՈՒ ՉԱՅՆԴ ԻՋԵՑՆԵԼՈՎ ՅԵՎ ԱՊԱ ԳԵՂԵՑԻԿ ԱՐ-
ՏԱԳՐԻՐ. —

Մեր գյուղն արդեն զարթնում է:

Գյուղում բացվել է խրճիթ-ընթերցարան:

Միջժ բոլորը սովորում են:

ԼՈՒՍԱՆՅՔԸ ՉԱՆՅՆԵՍ.

ՉՄՈՒԱՆԱՍ ԱՄԵՆ ԱՆԳԱՄ ԼՈՒՍԱՆՅՔՈՒՄ ԳՐԵԼ ԿՐՃԱՏ
ԱՄՍԱԹԻՎԸ.

4-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գեղջկուհին

(Նմանություն)

Նույնիսկ չի լսվում
շների ձենը.
խաղաղ ու հանգիստ.
քնած ե շներ:

Ձիթի ճրագն ե
միայն ճարճատում
իր աղոտ լուսով
մի հին խրճիթում:

Չնայած իրա
ճերմակող մազին՝
բուրսու տակ նստած
գեղջկուհի ազին՝

գրիչը ձեռքին
թուղթն ե խզմզում,
եղ տարիքի մեջ
գրել սովորում:

Հոգսերով լիքն ե
թեև գեղջկուհին,
բայց թե գրելուն
տալիս ե մեծ գին:

Նա հասկացել ե
անցյալն ու ներկան.
մի կերպ ճարել ե
մի հին քերեկան:

ՀԱՐՅԵՐ.

1. Ձեր գյուղում ազու պես սովորողներ կան:
2. Ձեր գյուղում կինը լիկկայան գնում ե:
3. Ձեր խրճիթ-ընթերցարանում «Մաճկալ» կարդում են:

Չմռան գիշերը
նստել ե արթուն՝
ամուսնուց ծածուկ
գրում ե, կարդում:

Շատ դժվար հարց ե. —
հա մարդն ե փնջում,
լացկան մանկիկը
հանգիստ չի ննջում:

Նա խիստ ուզում ե
դառնալ գրագետ.
բայց միտքը թույլ ե...
կռվի գրքի հետ.

— Բռնիր, ա կնիկ,
հերիք ե կարդաս.
դու որ ծերության
տերտե՞ր պիտ դառնաս:
Խնդրելով մարդուն,
կաթ տալով վորդուն,
մեր գեղջուկ ազին
գրում ե, կարդում:

Գիտության լույսն ե
գյուղում ճառագել,
գեղջուկ պարզ հոգին
նորով վարակել:

ՊՐՈԼԵՏԱՐԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ՄԱՃԿԱԼ

ԳՅՈՒՂԱՑԻՍԿԱՆ ԹԵՐԹ

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆՈՒՄ
ՇԱԲԱԹԸ 2 ԱՆԳԱՄ
„МАЧКА“

Крестьянская газета
Издательств. ЦККН(Б.А)

5-րդ № 94 (473)
ՆՈՅԵՄԲԵՐԻ
29
ՅԵՐԿՐԵՐԻ
1928 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՎԿ (Բ) Կ. ԿՈՄԻՏԵՅԻ

ԳԻՆԵ Ե ԿՈՊԵԿ
Բաժանորդագրությունը
1 տարի 2 ԿՈՊԵԿ
1/2 տարի 1 »
3 ամիսը 60 ԿՈՊ.
1 ամիսը 20 »
Խմբագրության հասցեն
Ցեքևան՝
Ռուբենի փ. № 2 Մաճկալ
Հեռախոս № 35

Ինչո՞ւ այս թերթի անունը «Մաճկալ» է. եւ ի՞նչ թերթի անուններ գիտես: Ի՞նչ կոչ է տալիս լինում բոլոր թերթերի ճակատին: Կարգա՞ «Մաճկալ»-ի կոչը:

Շաբաթական քանի անգամ է լույս տեսնում. մինչեւ այժմ քանի՞ համար է լույս տեսել, հրատարակության առաջին որից (փակագծի միջի թիվը), իսկ քանի՞ համար է լույս տեսել ընթացիկ տարվա սկզբից:

Քանի՞ տարի յե հրատարակվում. ով է հրատարակում, Կարգա՞, թե՞ ձեռ համարը վճարողն է (տարին, ամիսը և օրը):

Ի՞նչ արժե «Մաճկալ»-ի մի համարը, ամսական և տարեկան բաժանորդագինը:

Ընկերովի բերել տվեք «Մաճկալ» լրագիրը և հերթով կարդացեք:

Լրագիրը լրացնում է դասողը՝ անցածի պակասը:

Լրագրին մեծ տեղ տվեք ձեր դպրոցում:

ՎԱՐԺ ԿԱՐԴԱՅԵՔ ՅԵՎ ԱՊԱ ԱՐՏԱԳՐԵՅԵՔ ԲԱՌԸ ՄԻԱՆԿԱՄԻՅ ԳՐԵԼՈՎ

Հիմա գյուղացու կինը գրագետ է դառնում: Նա տղամարդուն հավասար իրավունք է ստացել և մասնակցում է գյուղի գործերին:

ԳՐԻՐ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԳՐՔՈՒՄ Ե ԳՐՎԱԾ:

ՎՈՉ ՄԻ ՍԽԱԼ ԶՊԻՏԻ ԱՆԵԼ:

ԶՄՈՒՍՆԱՍ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍԵԼ ՄԵԾԱՏԱՌՈՎ:

5-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

*
*
*

ԳՐՈՒԶԻՇՎԻԼԻ

Զարկիր, զարկիր, սալին մուրճ,

զարկիր, ուժգին զնգացրո՛ւ,

շահագործող մարդիկ փուչ

այս աշխարհից հեռացրո՛ւ:

Աշխատանքի յերգն ու հանգ

անկախ, ուրախ հնչեցրո՛ւ

ու բրտնաթոր ալ շապիկդ,

գրոշակի տեղ բարձրացրո՛ւ:

Զարկիր, զարկիր, ալ բոցեր

վառ յերկնքում թող ճախրեն,

ազատությունը սիրողներ

թող մեր հնոց հաճախեն:

Զարկիր, զարկիր, սալին, մուրճ,

զարկիր, ուժգին զնգացրո՛ւ,

շահագործող մարդիկ փուչ

այս աշխարհից հեռացրո՛ւ:

Թարգմ. Ա. ԱՌԻՇՏԻՅԱՆ

ՎԱՐԺ ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐԻ ՅԵՎ ԱՊԱ ԱՐՏԱԳՐԻՐ ՏՈՂ-ՏՈՂ ՎՈՍԱՆԱՎՈՐԻ ԶԵՎՈՎ:

ՆՈՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Խրճիթները գյուղիցնալու,

Խաճերի փեղ բե՛՛ թալարուն:

Թերթեր, դպրոց, լիկկայան,

Պեղ ու բժիշկ գյուղ յեկան:

6-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Մանիշը

Զմեռվա որերից մեկն էր: Մանիշը չորած թռնրի առջև հաց էր թխում, սկեսուրն էլ նստած բուրդ էր մանում:

— Մանիշ, Մանիշ,— դրսից բարձր կանչելով ներս մտավ Աշխենը: Ախշի, վճռեղ էս, ժողովի չելիր լեկել: Քեզ գյուղի խորհրդի անդամ ընտրեցին... լերեք կին անցկացրին: Լավ կաշխատես, տես, յերեսներս պարզ արա...

— Եղ էր պակաս, վոր հիմի յել տղամարդկանց հետ նստենք վերկենանք, — բղավեց Մանիշի սկեսուրը: — Ել վոչ ամոթ է մնացել յերեսներիդ, վոչ աբուռ. ամեն ինչ վոտի տակ եք տվել:

— Ե՛հ, դուք՝ պառավերդ եղպես ապրել եք, եղպես էլ պտի մեռնեք, մեզ ջահիլներն համար նոր է ծագել կյանքը: Ե՛հ, յես գնացի, Մանիշ ջան, ուշք մի դարձնի, ինչքան ուղում են փրկութիւթան, — ասաց Աշխենը Մանիշի ականջին ու դուրս գնաց:

— Ի՞նչ լավ, ի՞նչ լավ. — կրկնում էր ինքն իրեն Մանիշը առանց լսելու սկեսուրի մըթմըթոցը. — Ինչ ուղում են ասեն. յես

կգնամ խորհրդի մեջ կաշխատեմ ու ցույց կտամ, վոր կինն ել կա-
րող ե աշխատել:

Մանիշն աչքքան տարվել եր իր մտքերով, վոր չնկատեց, թե
ինչպես ամուսինն՝ Ապոն ներս մտավ:

Պառաջն Ապոյին տեսնելուն պես խելագարի նման վրա վազեց
և ձեռներով ծնկներին խփելով:

— Տններս քանդվեց, բալա ջան,—բղավեց,—հերիք չե, վոր
Մանիշը կնանոց ժողով ե գնում, հիմի յեւ ուզում ե տղամարդ-
կանց հետ ընկնել: Վայ, քոռանամ, աբուռ-նամուս վոռնատակ են
արել:

— Հա՛, ախի՛ր,—աչքերը չռելով գոռաց Ապոն,— են աննամուս
Աշխենը դրուստ վոր քեզ ճամպից հանել ե: Մեկ ել վոր նրան ես-
տեղ տեսա, քեզ կսպանեմ. լսում ես, թե չե:

Յեվ մինչ Ապոյի բռունցքը դեռ ճոճում եր ողում, Մանիշը
ճչաց դողդոջուն ձայնով:

— Սխալ եք, Աշխենը նամուսով ե. նա վոչ մի մեղք չունի:
Ինձ գլուզն ընտրել ե, և յես պարտավոր եմ աշխատել. սրա մեջ
վոչ մի վատ բան չկա:

Ապոն խոսք չեր գտնում ասելու. նա բարձրացրեց ձեռը և ու-
զեց խփել Մանիշին:

— Թող, հեռացիր,—հպարտ բացականչեց Մանիշը յետ մղելով
Ապոյին.—անցել են այն ժամանակները, յերբ կնոջը կարելի չեր վի-
րավորել և ձեռքեր Խելք գլուխդ ժողովիր, աչքերդ բաց արա, նա-
լիր շուրջդ և տես նոր կյանքի պայծառ շողերը:

Ապոն բռունցքը ցած թողեց և լուռ ու մտախոհ դուրս յեկավ
սենյակից:

ՀԱՐՅԵՐ.

1. Բանավոր նկարագրեր կնոջ վիճակը հեղափոխությունից առաջ
և հիմա:

2. Ձեր գլուխորհրդի կազմի մեջ կին կա:

ՄԻՇՏ ԿԱՐԴԱ. ԲԱՐՁՐ ՁԱՅՈՎ. ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ ԲԱՌԵՐԸ
ԳՐԻՐ ԾՈՅԱՏԵՏՐՈՒՄ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՁԻՆ ՀԱՐՅՐՈՒ.

Վարժ կարգաւ սովորեցեք և ապա արտագրեցեք տող-տող վո-
տանավորի ձևով:

Յետ մի մնաք դուք կյանքից

Մահն ե դահիճ,

մահն ե ճահիճ,

կյանքը հոսող

մի գետ ե:

Յետ մի մնաք

դուք կյանքից,

կյանքը թռչող

մի նետ ե:

ՉՄՈՌԱՆԱՔ ԿԵՏԵՐԸ ՆՇԱՆԱԿԵԼ.

7-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Սա պատմական խոշոր անցք — Սրփաշայր
Շիրջրանցք

ԽՆԿՈ ԱՊԵՐ.

Շիրակ, անշուր Շորագյալ,
Դու աղոթող, դու անկյալ,
միշտ ապրեցիր յերկնքով,
յերկնք թուար միշտ մաքով,
չեղար յերբեք տնարար,
չեղար յերբեք շինարար:

Հպարտացար ժամերով,
ճունկ չոքեցիր դարերով,
խնկով, մոմով, մատաղով,
լացով, թացով, յերկնքով
թոն ուզեցիր յերկնքեն,
բալց թոն չեկավ քո «մեղքին».

Փոխարենը միշտ յերաշտ,
եղ քո հախն եր խաչապաշտ:
Բաց թե առանց հիսուսի,
ասավ Մեծ մարդն հլուսիսի.
«Մեծ սարերը շուռ տվեք,
Հայաստանին շուր տվեք»:

Մենք ել խոսքը Լենինի
կատարեցինք այ հիմի.—
Կապսի ձորը քանդեցինք,
Արփաշայր քանդեցինք.
Նրան տվինք մի նոր հուն,
Նրան տվինք նոր անուն—
Արփաշային՝ Շիրջրանցք,
սա պատմական խոշոր անցք:

Շիրջրանցքը «գլուռ» կուգա,
կուտակ, կուտակ շուռ կուգա,
չոր հանդերին բույս կուտա,
խրճիթներին նավթալիս՝
ելեքտրական լույս կուտա:

Գնա՛, ապրի, նոր Շիրակ,
սիրտդ տարանք լեն - յերակ:

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ եւ լսել Շիրշրանցքի մասին. յ՞երբ եւ վերջացրել:
2. Ի՞նչ ոգուտ եւ տալիս ջրանցքները:
3. Ի՞նչ եւ ասել Լենինը Հայաստանի հողերը ջրելու մասին:

ՈՒՇԱԴԻՐ ՅԵՎ, ԴԱՆԴԱՂ, ԱՐՏԱԳՐԻՐ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՈՒՆԸ

Վերնագիրն սկսել մեծատառով և գրիւր տողի մեջտեղում:

Վերնագրից հետո միջակետ գիր:

Չմոռանաւ արտագրել ամբողջական բառերով:

Վորպեսզի բառի մեջ տառեր չթողնեք՝ բառն ստուգեցեք մասերով կամ, ինչպես ասում են, վանկերով:

2-ՐԴ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Ե ԱՆՅՆԵԼ ՍԵՐՄԱՓՈԽՈՒԹՅԱՆ

8-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Սերմափոխությունը բարձրացնում ե բերքը

Մեր գյուղացիները հողը մշակում են հին ձևով: Ամեն տարի հողի մի մասը թողնում են հանգստանալու: Վորպեսզի հողն ամբողջովին ոգտագործենք և հանգստի համար հող բոլորովին չթողնենք. մենք պետք ե անցնենք սերմափոխության, այսինքն՝ միևնույն տեղում միշտ հացահատիկ չպիտի ցանենք, այլ հացահատիկից հետո՝ արմատապտուղ, ցանովի խոտաբույս և այլն:

Հին ձևով հողի մշակումը կրճատում ե ցանքսագաշտը, քիչ բերք ե տալիս. անասունները շատ քիչ կեր են ունենում: Անասուններին արածացնում են ցեխտեղում. նրանք ախտեղ կոխտում են և հողը պնդացնում: Հողի մեջ չի հավաքվում բույսի համար հարկավոր սնունդ և ջուր:

Սերմափոխության ժամանակ շատ առվույտ և այլ խոտաբույսեր են ստացվում: Առվույտ ցանելով մենք հողը պարարտացնում ենք:

Առվույտից հետո հացահատիկները, կտավհատը և այլ ոգտակար բույսերը մեծ բերք են տալիս:

Այսպիսով սերմափոխությունը բարձրացնում ե բերքի քանակը և շատացնում անասունների կերը:

(Փոխադրություն ուսերենից):

ՀԱՐՑԵՐ.

1. Ինչպե՞ս եւ հողը մշակում ձեր գյուղում:
2. Ի՞նչ փաստ ե տալիս հին ձևի մշակումը:
3. Ի՞նչ բան ե սերմափոխությունը. ասացե՛ք նրա ոգուտները:
4. Ձեր շրջանում վճր անտեսությունն ե սերմափոխության անցել:

Պետք ե կարգալ գիտակցաբար, այսինքն հասկանալով:

Յեթե վերևի չորս հարցին ազատ պատասխանում ես՝ նշանակում ե գիտակցաբար եւ կարգում:

ՎԱՐԺ ԿԱՐԴԱ, ՅԵՎ, ԱՊԱ, ԱՐՏԱԳՐԻՐ ԲԱՌԵՐԸ ՁԵՌՔԻ ՄԻ ՇԱՐԺՈՒՄՈՎ՝ ԱՌԱՆՅ ԿՏՐԵԼՈՒ ԳՐԵԼՈՎ.

Ինչ պետք ե անեմ յես

Մեր խմբի դասերին կանոնավոր պիտի հաճախեմ, «Մաթեմատիկալի աշխատանքի գրքիցս» խնդիրներ պիտի լուծեմ, միշտ պիտի կարդամ «Մաճկալ» լրագիրը, վոր վարժ գրել, կարդալ և հաշվել սովորեմ:

ՉՄՈՌԱՆԱՄ.

1. Վերնագիրն սկսել մեծատառով:
2. Գրությունն սկսել մեծատառով և միքիչ խորքից:
3. Գրության վերջում վերջակետ դնել:

3-ՐԴ ՀԱՐՑ. ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ, ՄԱԲՐԱԾ ՍԵՐՄԸ, ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՅԵՎ ՇՈՒՏ ԳԱՐՆԱՆԱՎԱՐԸ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԲԵՐՔԸ

9-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Աղբի և հողի բողոքները

Ա

— Յես եստեղ ի՞նչ եմ շինում, ի՞նչ են ինձ վտրբի տակ գցել ու տրորում. ես իմ տեղն եմ, ես տանելու բան եմ, — խոսեց բակում փռած թրիքը:

— Բա լեւս,— ավելի ուժգին բողոքեց աթարի գեղը,— ինչ գործ ունեւ եստեղ: Ամեն առաւոտ թոնրի միջին խըրը, լցնում են մի մեծ քթոց ու իմ ծխով ինձ ել են խեղդում, իրենց ել: Ախր ինչու լեւս դաշտում փռված չպետք է լինեմ, վոր ես ցանի գեղի չափ հոր լցնեմ վոսկու նման ցորենով: Յես եստեղի համար եմ սաեղծված, թոնիրն է իմ տեղը:

— Տո, մի տար ինձ դաշտ, փոխր ենտեղ, գութանդ լծիք ու հողի տակն արա ինձ: Բեր մի լավ ընտրած սերմ, ցանիք շաքաքանով, վոր խիտ չլինի, հետո արի ու տես՝ բո բոլից բարձր արտ կտամ, տունդ հացով ու հարստությունով կլցնեմ, թե՛ չե: Ախպեր, ասենք ինձ վառում եք, ուրիշ շնորհք ու խելք չաւնեք, գոնե մոխիրը դաշտ տարեք, վոր նրանով հողը միքիչ ուժի գա: Ախր վոչ ինձ եք դաշտ տանում, վոչ մոխիրս, վոչ ել հողը կարգին հերկում ու մշակում և հետո ուզում եք կուշտ փորով հաց ուտել:

(Շարունակությունը մշտապարտապահին):

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Ձեր գյուղում արտերն ինչո՞վ են պարարտացնում:
2. Ի՞նչպես պետք է պահել գոմաղբը (հարցրեք գյուղատերետեսին):
3. Ի՞նչ բան է հանքային պարարտացում (տես «Մաթ. աշխ. գիրքը» 66 և 68 էջ):

ՎԱՐԺ. ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐԻՐ ՅԵՎ. ԱՊԱ. ԱՐՏԱԳՐԻՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲԱՌԵՐՈՎ.

Պարարտացրեք ձեր արտերը

Գոմաղբի փոխարեն կարելի չե նաև գործաղբել կանաչ պարարտացում: Վիկի կամ սիսեռի ծաղկման շրջանում հողի տակն են անում ցանքսը և հաջորդ տարին վրան բամբակ, ցորեն և այլ բույսեր ցանում: Կարելի չե պարարտացնել նաև բամբակի քուսպով:

Հ Ա Ր Յ Ե Ր.

1. Գրության վերջում ի՞նչ կետ է դրվում:
2. Տպագրի մեջ վերնագրից հետո կետ չի դրվում:

10-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Աղբի յեվ հողի բողոքները

Բ.

— Եղ ասեք է, եղ ասեք, խնամի թրիք, աթարի գեղ: Ձեզ եղտեղ են տանջում, ինձ ել եստեղ,— խոսեց մոտակա հողը: Բերում են են անտեր չուլթը, ջանա ճանկրաում, մանր ու կեղտոտ ցորեն են շաղ տալիս, թե բերք տուր, բուսցրու: Ախր վոնց բուսցնեմ, ինչ բուսցնեմ: Մի մասը խոտ ու պրչուկ, մյուս մասը գլու ու փշփշուկ, խոտերից կիսի արմատներն ել սաղ, գարունից տափ ելած. գարունքը գալիս է թե չե, վրա չեն տալիս ցորենի ծիլերին խեղդում: Դեհ, ասեք տեսնեմ, թե վո՞րը բուսցնեմ: Այ խելոք հողատեր, մի առաջ արի, չերեսս փեշնով շաղ տուր, չուլթով մի լավ չանգոխր, հետո գութանով հերկիր, մաքուր ընտրած ցորեն ցանիր, թեթե փոցխիր, ավելորդ խոտերը քաղհանիր, տես, թե ինչպիսի արտ եմ բուսցնում, ինչքան ցորեն, գարի ու դարման եմ տալիս է: Մի եսենց արա ու փորձիր: Համ ել եղ ի՞նչ հիմարություն է, ամեն տարի ցորեն կամ գարի ցանելը: Եղքան խելք չունի մեր տերը վոր հասկանա, թե ցորենի ու գարու համար ել ուժ չի մնացել ինձանում, հիմա հարկավոր է, վոր կարտոֆիլ ցանի կամ տակ, կամ գազար, կամ հենց ուղղակի կորնգան, սիրի-սիրի կամ մի ուրիշ խոտ՝ հերթով. հետո կարող ե նորից ցորեն և գարի չել ցանել: Թող փորձի, մի աղպիսի բան անի, ու տեսնի, թե վոնց է շենանում:

(Յալսացու «Խոհանարանը սրտունցներ» գրքից):

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչպիսի սերմացու պիտի ցանել:
2. Ձեր գյուղում ի՞նչպիսի սերմացու չեն ցանում:
3. Ձեր գյուղում սերմագործի մեքենա կա:

ԱՐՏԱԳՐԻՐ.

Յանեցեք խոշոր, մաքուր յեվ լավ ծլող սերմացու

ՀԱՏ ՍՏԱԼԻՆԻ

Մաքրած սերմը մեկ հեկտարին միջին թվով տաս փուլթ ավելի բերք է տալիս: Յեթե բոլոր գյուղացիներն իրենց սերմը մաքրեն՝ ապա ամբողջ Խորհրդային Միության մեջ մի միլիոն վագոն ավելի հացահատիկ կստանանք: Բերքի աչպիսի խոշոր աճում ինչպիսի գարկ կտա մեր սոցիալիստական շինարարության...

Աշխատանքով—վոչ աղոթքով

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Մենք իրար զրկից՝
սրտերս իրար կից.
նալիր քո արտին—
կպել ե գետին,
խեղդել ե սեզը,
բռնել չերեսը:

Նալիր իմ արտին՝
փովել ե չորս դին.
հասկերը լիք-լիք,
տալիս են ալիք:

Ինչիցն ե զրկից,
արագ իմիս կից,
զուրկ ե լավ բերքից:
Ասեմ. «Քո խելքից»:

Դու աստվածապաշտ,
իսկ չես՝ անաստված:

Չգտած սերմը,
տերտերից որհնած՝
ցանեցիր հողում
վոչ թե կրկնավար

ալլ այնպես խոզան
հոգնած ու բեզար:

Իսկ չես հարուստ
հերկեցի աշնան,
գոմաղբ կրելով՝
փռեցի վրան:

Գարնանը նորից
վարեցի նրան,
այդպես վար տվի
չես չերկու բերան:

Ձտեցի սերմը
պրչուկ—մրիկից:

Արտս մաքրեցի
քարերից, սեզից,
քեզ պես կախ չնկա
սրբերի վզից:

Արտս կանաչեց
ու դարձավ մեծ ծով,
իմ աշխատանքով
և վոչ աստծով:

ԼԵԶՎԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախ կարգա ձախ և ապա աջ հատվածները.

Շուտ գարնանավարը մեզ ոգնեց
մեր գլուղացիները վարն արին,
հենց վոր ձյունը հալվեց, հողը
դեռ խոնավ եր, վարը շատ
թեթե անցավ, չեզները բոլորովին
չհոգնեցին: Շատ լավ էրք
ստացվեց:

Շուտ գարնանավարը մեզ ոգնեց
Մեր գլուղացիները վարն ա-
րին, հենց վոր ձյունը հալվեց,
հողը դեռ խոնավ եր: Վարը
շատ թեթե անցավ. Յեզները
բոլորովին չհոգնեցին: Շատ լավ
բերք ստացվեց:

1. Այս հատվածներից վո՞րն ե ավելի հեշտ կարգացվում:
 2. Ի՞նչու չերկրորդ հատվածն ավելի հեշտ ե կարգացվում:
 3. Կարելի՞ չե առանց դադարների կարգալ, այդպիսի անընդ-
հատ կարգալուց վորեւե բան կհասկացվի: Ձախ հատվածի մեջ դա-
դարների տեղերը ցույց տրվում են:
- Սուսքի աջն մասերը, վորոնք իրարից բաժանվում են դադար-
ներով և ձախի իջեցումով կոչվում են ասուլթ:
4. Ի՞նչով են բաժանվում ասուլթներն իրարից: Ի՞նչ տառով ե
«կալվում չուրաքանչյուր ասուլթը:

12-րԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Մերենա գործածեք

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Աչքովդ մի տես,
հո քեզ չեմ խաբել.
այ քեզ տրակտոր՝
մի ավտոմոբիլ:
Ինչ ել ուզում ես
կապիր չետից՝
սալ ու պավոզկա՝
մեկը մեկին կից:
Գուլթան ու փոցիս,
շարքացան, փափան,
հնձող, խուրձ կապող
մեքենա անգամ:
Թող վարի, ցանի,
հնձի, խուրձ կապի,
հնձածդ բերի
քո կալը թափի:
Կալսող գործիքով
դեզերդ ծեծի.
ձիու փոխարեն
դու նրան հեծի:

Ձյունի չերեսով
կրի փայտ, գերան,
ինչքան ուզում ես
բեռ բարձի վրան:
Կապիր սղոցդ
փոկով շարժիչին.
Թող թախտակ քաշի
աչքիդ առաջին:
Ել վո՞րն ասեմ քեզ.
Ել վո՞րը, վո՞րը.
մեծ ուժի տեր ե
եդ տրակտորը:
Բա ի՞նչ ե նրա
շունչը և հոգին—
սաստիկ կրակը
և ջրի շոգին:
Տրակտորն ունի
փայլուն ապագա.
Եսոր թե եզուց
քո դուռը կգա:

Այո պիտի գա,
աչքդ լույս, քեռի,
եւ դաշտի միջին
մեջքդ չես ծռի:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Պատմիր, թե տրակտորը, բացի հողը վարելուց ել ինչի համար ե գործածվում:

Բարձր և վարժ կարգաւ աշտ հատվածը և դիտիր, թե վորտեղ ես դադար անում և ձայնն իջեցնում. արտագրիւր այդ տեղերը, վերջակետեր գնելով:

Վերջակետերից հետո մեծատառերով սկսիր:

Յերկաթե գութան ձեռք բերեք

Մեր գյուղերում շատերը հողը վարում են արտուր հողբաժինը գյուղերը յերկաթե գութաններ ե ուղարկում շատ գյուղացիներ յերկաթե գութաններ են ձեռք բերում նրանց անտեսությունը բարելավվում ե:

4-ՐԴ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՃՅՈՒՂԵՐՆ ԵՆ ԶԱՐԳԱՅՆՆԲ

13-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Անասուններին լավ չենք պահում

Ա.

Զմեռ եր...

Կաշի ու վոսկոր դարձած անասունները վաղուց վերջացրեք ելին վորո՞ճը, մեջք-մեջքի տվել ու տաքացնում ելին իրար:

— Ուֆ, հառաչեց Մարալը և իր հառաչով դարձեցրեց Զեյրանին:

— Ի՜նչ ե, Մարալ, մըտում ես:

— Բա չեմ մըտում: Ի՜նչ ե մնացել սարից բերած ամառվա ճարպիցս... — Կաշի ու վոսկոր...

— Գոնե ես անտեք գոմի յերդիկներն ու դռան ծակերը կաշիներն, տակներս ցամաքեցնելն, միքիչ դարման ու չոր աղը շաղ տալն, վոր տակից ել չսառչեյինք:

— Բա ջանս ինչքան քոր ե գալիս... Հոկտեմբերի անձրևից հետո, կեղտի ու ցեխի մեջ կորել եմ: Գլուխս ել ամեն տեղ չի հասնում, վոր լեզվովս միքիչ մաքրեմ ինձ: Վտանքս կեղտի մեջ

կորած, ծծերս թրքով պատած, վիզս քոսոտ, աչքերս ճպոտ, կըճղակներս մաշված. ի՜նչ կյանք ե սա:

— Յեվ դարմանալին ես ե, վոր աշտ դրությամբ մեր տերը՝ Գալոն ուզում ե մեզանից շատ չուղ և կաթ ստանա, մեր հորթերից լավ կով ու լավ լծկաններ մեծացնի: Յուրան ու կեղտը մի կողմ թողած, ի՜նչ ե մեր կերածը—չոր ու դեղնած դարման: Իսկի մնունդ կա՞ դրա մեջ. ամենևին. համ իրան ե խաբում, համ մեզ: Են ել բերում ու են տեսակ բարձր մսուրի մեջ ե լցնում, վոր մինչև ուտում, վերջացնում եմ, մեջքս կտարվում ե, կոկորդս սեղմում, խեղդում: Իսկի չի մտածում, վոր մսուրը շատ—շատ գետնից կես մետր բարձրություն պետք ե ունենա, վոր մենք մսուրից ենպես ուտենք, ինչպես հանդուհի ենք արածում: Մսուրն ել պատին կպած, տակն ել քարից ու ցեխից շինած, դարման ուտելիս հող ե վոր բերանդ ե ընկնում ու կուլ ես տալիս:

— Նա չեյ կասի, վոր տավար եմ պահում:

— Յեվ ի՜նչ, քուլըրիկ Մարալ, մի՞թե դժվար ե՞ մի փայտի սանր, առներմի խողանակ, և մեզ ազատեք ես ցեխից ու կեղտից. գոլ ջրով լվանար և միքիչ խողի չուղ կամ վազելին քսեր մեր ծծերին, վոր կալուղ մնալին, չճաքճեյին: Հերու կեղտից պտուկս ճաքեց, կուրծս ուռավ, կաթս փչացավ, մի ամիս չես չեյի կթվում. թե ինքը փառվեց, թե ինձ տանջեց: Զի իմանում վոր եդ ամենը կեղտից ե

— Զեյրան ջան, բա եդ ե մենակ: Յերկու, յերեք որով ամբողջ թրիքը գոմումն ե թողնում, վոր տաք լինի: Յերդիկները չիմով ծածկում ու ես անտեք թրիքի հոտով խեղդում ե մեզ: Ուրիշները հո սրա նման չեն: Ամեն որ գոմը մաքրում են, իրենց տավարի դադրը գիտեն. կարծես հենց մեր որն ե սեպեյ: Ի՜նչ մեծ բան կլինեք, յեթե միքիչ լույս ու արև լիներ մեզ համար: Գոնե արևը ներս կմտներ, լույս կլիներ, և չես իմ հորթուկին կտեսնեյի: Պատի մեջ մի յերկու լուսամուտ բաց աներ, թե լույս կունենայինք, թե մաքուր ող: Ո՛հ, ինչքան կարոտ ենք մնում լույսի և մաքուր ողի, 5-6 ամիս շարունակ. բա սա բանի նման ե:

(Շարունակությունը մյուս պարագմունքին):

ԱՆԳԻՐ ԱՐԱ ՅԵՎ ԱՊԱ ՏՈՂ-ՏՈՂ ԱՐՏԱԳԻՐ.

Վոր չգրկեք լավ կերից՝ միշտ կողտվեք կովերից

Յեթե կովիդ քուսպ,

թեփ լափ տաս,

չուղոտ, առատ

կաթ կստանաս.

Առատ անձրև՝ առատ ծովից,

առատ կաթը՝ կուշտ գեր կովից:

Անասուններին լավ չենք պահում

— Եհ, Մարալ, ցաֆն են ե, վոր ամեն բանում մեզ ե մեղադրում, մեզ ե անշնորհք անվանում: Աշնանը, յերբ Մարույին ու փոքրիկ Մուկուչին տեսնում եյի լալով, ցամաք հաց ուտելիս, սիրտս մղկտում եր, ուզում եյի մսերիցս պոկել, կաթ շինել: Բայց անտեր մնա, պիտի բան ուտես, վոր ինքդ ել մի բան կարողանաս տալ, չէ: Են ցրտին ահագին ճանապարհ եյինք գնում, դունչներս չոր խոզանին ու բարերին քսում ու տուն գալիս, ահագին զիշերները մնում սոված ու ծարավ: Գոնե մի անգամ փորձեր, իրիկնեց մի խորոմ խոտ քցեր առաջներս, տեսներ՝ ինչպես կաթ կտայինք Ե...

— Ջելրան ջան, բա չես: Ախ, ինչքան եմ կարոտել միքիշ քուսպի ու գարու ալյուրով լափի: Մեր տերը բերում, մեր աչքի առաջ յեղներին խոտ, քուսպ ու թեփ ե տալիս, իսկ մեզ միայն դարման: Իսկի չի ուզում մտածել, վոր մենք ել աչք ունենք, մենք ել հոտ ենք առնում:

— Հո ձրի չենք ուզում. թող փորձի, թող յերկու շահու ալյուր կամ քուսպ ավելացնի, տեսնենք՝ յերկու տակ յետ կտանք հենց նույն ուրը, թե՞ չե:

— Բա ջուրը. առավոտյան են ցրտին, վոր դուրս չի անում գոմից ու քշում դեպի գետը, ամբողջ մարմինս սառում ե: Հետո ել վոր են սառուցների տակից քլքլացող ջրից չեմ խմում՝ առամներս, բերանս ու ստամոքսս ցրտահար ե լինում. դե արի ու տաքացի բաց յերգիկավոր գոմում: Իսկ յեթե գոմում մեզ ջուր տա, կամ ջրհոր փորի, կամ իրիկվան ջուրը բերի, տաշտի մեջ լցնի ու առավոտյան խմացնի, մենակ դրա փոխարեն յես ուզիդ մի շիշ կաթ կտամ թե հորթուկիս և թե աիրոջս: Իսկ յեթե լավ խոտ տա ու քուսպ, կամ ալրի թեփ, յես ենքան կաթ կտամ, վոր դարմանքից բերանը բաց կմնա: Տվածն ել ի՞նչ ե լինելու վոր: Ամեն մի 40 կիլո քաշիս հարկավոր ե տալ մի կիլո խոտ, իսկ դրանից ավելի ինչքան քուսպ ու ալյուր տա, ամեն մի կիլոյին յերեք կիլո կաթ կտամ: Դրանով նա թե տան ծախսը կհանի, թե յերեխաներին կուշտ կը պահի, թե իմ հորթուկիս:

(Յալսացու «Առհրդավոր սրտուցներ» գրքից):

Մալ պահելու՝ յա դայդա, չցանողը թող վալ տա

Ահա յեկան միացան,
սկսեցին խոտացան՝
սիրի-սիրի,
յերեքնակ,
շամբալա,
կորնկան,

առվույտ-յոնջա,
վեկա-վեկ:
Ու հնձեցին մալի կեր,
և ունեցան շատ ընկեր.
գլուղին որինակ,
մալով լցրին գոմ ու բակ:

15-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Անասունների կերի և հողի պարարտացման համար վիկ ցանեցեք

Գալուստը գիտեր, վոր վիկը շուտ ե հասնում: Ցանելուց յերկու ամիս հետո, կամ թե մի տաս ուր ավել, վիկն արդեն կարելի չե հնձել: Նրան ասել են, վոր հարկավոր ե վիկը փափուկ ժամանակ հնձել, վոր ցողունը կոշտ չլինի: Այդպես թե տավարն ե ախորժակով ուտում, և թե ցողունն ու տերեւները խուրձ կապելիս չեն ջարդվում, չեն փշրվում:

— Ափսոս, վոր շուտ չեմ ցանել: Հողը նոր տաքացած ժամանակը ցանած լինելի, հիմա արդեն խոտը հավաքած կլինելի:

Գալուստին ասել ելին, վոր յերկու տեսակի վիկ կա, մեկը աշվանն են ցանում, մեկն ել՝ գարնանը: Գալուստի ցանածը գարնան նիկ եր:

— Մեկ ել վոտս վոր բազաք ընկնի, են մի տեսակից ել պիտի բերեմ: Իմ խելքով՝ աշնան վիկը մեզ ավելի ձեռնտու չե,—ասում եր Գալուստն իր ընկերներին, վորոնցից միքանիսն արդեն խոտք ելին ավել յեկող տարին վիկ ցանելու:

— Մեր ոգուտի թշնամին ե՞նք,—ասում ելին իրար,—յեկել մեր դռանը չոքել ե, չվերցնենք:

Գալուստը պատմում եր, վոր լսելով՝ ուրիշ յերկրներում վիկով հողերը պարարտացնում են: Վիկը ցանում են, հենց վոր բույս քաշում, ուզում ե պառկի, վարում են վիկի տեղը խոտը հողի տակով անում, իրար խառնում: Հողի մեջ վիկը փառում ե և հողը պարարտացնում:

— Եդ հենց մեզ համար ե: Փելին չունենք, ճամբերը դժվար, տեղներս սար, հողերը հեռու,—ասում ելին նրանք:

— Թող մի չեկամուտն իմանամ, չեկող տարի եղ ել եմ փոր-
ձելու, — ասում եր Գալուստը:

— Ձե, Գալուստ, դու դեռ շատ բաներ ես ցույց տալու մեզ:
ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչ ոգուտ ե տալիս վիկը:

2. Ի՞նչպես են վիկով հողը պարարտացնում:

ԱՐՏԱԳՐԵՅԵՔ ՄԻԱՅՆ ԽՈՇՈՐ ՏԱՌԵՐՈՎ ԳՐՎԱԾ ԲԱՌԵՐԸ.

Վճիր բույսերն են կոչվում տեխնիքական

Տեխնիքական բույսերը բաժանվում են չորս խմբի՝

1. Թելավոր և յուղատու, փորոնց ցողունները գործածում են
գործվածքների համար, իսկ սերմից հանում են յուղ: Այդ բույսերն
են՝ կտավհատ, կանեփ, բամբակ:

2. Արմատապտուղներ: Այս բույսերը գործածվում են մարդ-
կանց սննդի և կենդանիների կերի համար: Այդ բույսերն են՝ կար-
տոֆիլ, շաղգամ, տակ:

3. Լոբիանման բույսեր — սիսեռ, լոբի, վոսպ: Այդ բույսերը
գործածվում են սննդի համար:

4. Խոտաբույսեր, փորոնք անասուններին կեր են տալիս:

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչ տեխնիքական բույսեր են ցանում ձեր գյուղում և դա-
վառակում:

2. Ի՞նչ տեխնիքական բույսեր կարելի չե մացնել ձեր գյուղը:

16-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կարտոֆիլի գանգատը

— Բա մեր սև որն ի՞նչ եր, — լավեց հորած կարտոֆիլի ձախը:
Մենք ի՞նչ որեր ենք քաշել ու հիմի չեի քաշում ենք: Առաջ մեզ
հազար ու մի խոտերն ուժից գցեցին, հետո չեի շնչներս կարվեց,
խեղդվում ելինք առանց ուրի: «Գաղհան, փոցիս, փոցխեցեք մեզ»,
ասում ելինք մենք, բայց ուշք գարձնող չկար: Փափուկ հող ավեք
վրաներս, լավ լցրեք — մենք փափուկ և խոր հող ենք սիրում: Ծած-
կեցեք... ո՞վ եր լսողը: Հունիսի են վերջին, թե հուլիսին, լավ չենք
չիշում, Գալստ ու յերեխաները չեկան, մի քիչ հող քլուեցին վրա-

ներս ու գնացին: Յեթե մի քիչ անձրև եր գալիս, հողի յերեսը
սնդաղացնում, շունչներս կտրում, հետո չեի ճաքճքում ու մեզ վա-
ռում: Մնացինք մի-մի ընկուզի չափ: Անինչ մեզնից ամեն մեկը
կարող եր մի կիլոգրամ դառնալ: Յեթե տնկելուց առաջ մեզ ջուկեր,
հիվանդն ու փտածը հեռացներ, ծուռտիկ-մուռտիկները խաշեր ու
յերեխաներին տար, մեզ ել կարգին տնկեր, մոխրով պարարտաց-
ներ, ծլելուց հետո յերկու անգամ փոցխեր, բողազները կարգին
2—3 անգամ լցներ, իսկի տեղ կունենա՞ր մեզ պահելու: Հիմի չեի բե-
րել, լցրել ե ես փոսը և վրայից հողով ծածկել, մի ծակ, մի խո-
ղովակ չի թողել, վոր մենք ել շունչ քաշենք ու հիվանդութունից
չխեղդվենք, — քչիչալով գանգատվում ելին կարտոֆիլները հողի
տակից:

(Յալսացու «Սորհրդալոր սրսունցներ» գրից):

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչպես են ձեզանում կարտոֆիլ մշակում զարգացած տըն-
տեսատերերը

2. Ի՞նչպես պետք ե կարտոֆիլ պահել:

ԱՅՍ ՎՈՏԱՆԱՎՈՐԸ ՆԱԽ ՇԱՏ ՎԱՐԺ ԿԱՐԳԱՆ ՍՈՎՈՐԻՐ ՅԵՎ
ԱՊԱ ԱՐՏԱԳՐԻՐ ՎԵՐՋԻՆ 12 ՏՈՂԸ.

Թրթուրն ուտի, գորանա՝ խեղճ բոստանչին չորանա:

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Այ բոստանչի, բոստանչի,
բոստան գնել մի բան չի.
բոստան գնել ի՞նչ ոգուտ.
յեթե չտա չեկամուտ.
ունես հազար խնամի,
հազարն ել քեզ թշնամի. —
սաստիկ կարկուտ, տոթ, քամի,
ել ի՞նչ հաշվեմ մի առ մի.
յեկ ու քրտինք դու թափի:
Բա թիթեռը կաղամբի.
անպիտանը թարսի պես,
քողը զլխին հարսի պես,
զիշեր ցերեկ սուս ու փուս
մաղ ե շինում ամեն բույս:

Դեհ, դու ցանի կանաչի,
թիթեռն ուտի ու աճի.
արի, ընկեր բոստանչի,
խերդ ու շառդ ճանաչի.
արի հինը դեն ծալի,
կարգա գիրքը «Մաճկալի»
«Վնասատուն կաղամբի»:
Են աշխարհը դու ճամբի
տունդ քանդող թրթուռին,
քո խնամի թիթեռին,
նրա ածած ձվերը —
եղ խնամուդ նվերը:
Թե չե անխելք անճարը
տուն չի բերի բանջարը:

Գարո բիձու շերամապահությունը

ՀՈՎՀ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գնացի ձորից մի շալակ թթան տերեւ բերի, կապեցի մեծ տան
ամբարի վտարին ու ճիճուն վրան ածեցի: Ինչքան մարդ յեկավ նա-
ջելու, վոչ վոքի տուն չթողինք, վոր աչքով չտան. ասինք՝ թող մի
տեսնենք ինչ ե գուրս գալիս: Այ տղա, ես անտեր ճիճուները մի
քանի որ կացան ու կոտորվեցին: Հիմա թե ասենք՝ նրանից եր, վոր
գոմեշի ձաղը շատ եր մոտիկ կապած, վոտնատակ եր տալիս, թե
նրանից եր, վոր հավերը սուռն ելին թափում՝ կտցահարում, դե
վոնց անենք: Հո չեյինք կարող հավերը կոտորել կամ ձակը սպա-
նել: Թե ասենք՝ անձրեկիցն եր, վոր յերգկովը ներս եր թափվում,
մին ել մարդ միաք ե անում, թե բա քաղաքումն անձրե չի գալի՞...
Մի խոսքով՝ բանը գլուխ չեկավ: Տեսանք, վոր մեր յերկրումը արբը-
շումի ճիճուն անում չի, բան չի դառնում: Դե, զարմանալու ինչ
կա վոր. ենպես յերկիր կա, հավը չի ապրում, ենպես յերկիր կա,
ցերեն չի գուրս գալի. ամեն աշխարք մի տեսակ բնություն ունի:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ՊԱՏՄԵՑԵՔ ՇԵՐԱՄԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.

ՀԱՐՑԵՐ.

1. Ճիշտ ե ասում Գարո բիձեն:
2. Ինչու շերամը չգարգացավ:
3. Ինչ պայմաններ են հարկավոր շերամը զարգացնելու համար:

ԲԱՅՎԱԾ Ե ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
5-ՐԴ ՏԱՐԻ 1928 ԹՎԻ 5-ՐԴ ՏԱՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՅԻ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ՈՐԳԱՆ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵՅԻ ԲԱՆԳԵՂՋԲԱԺՆԻ

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆՈՒՄ ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ

Պատկերագրող, հետաքննողական պատմավեպերով

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12 ամիսը . . .	1 և 20 կ.
6 » . . .	— 60 կ.
3 » . . .	— 30 կ.

ԱՐՏԱՍՍԱՀՄԱՆՈՒՄ 12 ամիսը 1 դոլ.

Մեկ տարով և վեց ամսով բաժանորդագրվածները ձրիաբար կստանան
վորպես հավելված մի որացույց-պլակատ, զանազան հագուստների ձևեր,
ալբոմ՝ մոր և մանկան պաշտպանության վերաբերյալ, գրքույկներ:

Բաժանորդագրության համար դիմել՝ Յերեւան, Արշակունյի փողոց, № 8,
Լենինականի գործակալության և բոլոր գավառներում գործակալներին և
հրահանգիչներին

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՔՍՊՈԶԻԿԻԱ

ՀԱՐՑԵՐ.

1. «Հայաստանի աշխատավորուհի»-ն շաբաթաթերթ ե. թե
ամսագիր (քանի ժամանակ մի անգամ ե լույս տեսնում):
2. Ո՞ւմ որդանն ե «Հայաստանի աշխատավորուհի»-ն:
3. Ի՞նչ արժե 3 ամսվա բաժանորդագրին:
4. Ո՞ւմ դիմել բաժանորդագրության համար:

ՀԱՐՑԵՐԻՆ ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԻՐ

Պահպանենք անտառները

— Տղերք կարելի՞ չե մեր բարեկամներին սպանել:
— Չի կարելի:
— Այն բարեկամներին, վորոնք մեզ ահագին ոգուտներ են
տալիս:

— Վոչ, վոչ, վոչ:
— Իհարկե, վոչ: Բայց մի տեսեք, թե մեր գյուղերում որա-
կան քանի տասնյակներով բարեկամներ են կոտորում, սպանում:

Այդ բարեկամները մեր անտառների ծառերն են: Մեր Խորհրդ-
դալին հայրենիքն առանց այն ել աղքատ ե անտառներով: Վառե-
լիքը քիչ ե, շինարարական փայտը՝ պակաս. բայց տեսեք, թե մեր
գյուղացիք ինչպես անինա վոչնչացնում են մեր անտառները:

Նրանք չեն հասկանում, իհարկե, բայց պետք ե հասկացնել:

Անտառները կտրելով՝ նվազում են աղբյուրները, պակասում ե
շինարարական փայտը, ածուխը, վառելափայտը: Անտառի ծառերն
իրենց արմատներով պահում են լեռան լանջի հողը և չեն թողնում,

վոր գարնան հեղեղներն այդ հողը լվանան, ցած բերեն: Այ, որի-
նակ՝ Մարցի անտառները Լոռու: Գյուղացիք անխնա աչքան են
կտրատել անտառները, վոր հողը լվացվել, քշվել է ներքև ու ա-
ռաջվա խոտավետ լեռների լանջերին այժմ հողի տակի ժայռերն են
ցից-ցից մնացել:

Մեր գյուղացիք, անտառների բացակայության պատճառով,
անասուններից ստացված գոմաղբը աթար են շինում և վառում:
Իսկ յեթե մենք անտառներ ունենայինք, ել աթար չեյինք պատ-
րաստի փեչիկից, այլ գործ կածեյինք մեր դաշտերը պարարտացնե-
լու համար և մեկին յերկու մեր հացահատիկների բերքը կավելաց-
նեյինք:

Անտառը չի կարելի կտրատել:

Անտառում անասուն արածացնել ել չի կարելի: Այն աչժերն
ու խոզերը, վոր արածում են անտառում, ավելի չարժեն, քան ինքն՝
անտառը: Նրանք փորում են ծառերի արմատները, վոչնչացնում
հյուղերը:

(Ըստ «Առխաւսանի»-ի):

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչ ոգուտներ ե տալիս անտառը:
2. Ի՞նչպես ե անտառն ոգևում հողի պարարտացման:
3. Ի՞նչու չի կարելի անտառում անասուն արածացնել:

ԱՅՍ ՀՈՒՎԱԾԻ ԱՍՈՒՅԹՆԵՐՈՎ ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԻՐ.

1. Անտառը կարելի՞ չե կտրատել:
2. Անտառում կարելի՞ չե անասուն արածացնել:
3. Ի՞նչու չի կարելի:

5-ՐԴ ՀԱՐՅ. ԽՈՐՀՐԳԱՅՐՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՅՈՒՂ-
ԽՐԲԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԸ
ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՐ ՁԵՎԵՐ
ՄՏՅՆԵԼՈՒՆ

19-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Մեր խորհրդային տնտեսություններն ոգնում են
չքավոր գյուղացիներին

ԱՐԱՋԻ

Խորհրդային տնտեսության կառավարիչը խոսում եր մշակների
հետ, յերբ մոտակա գյուղի չքավոր գյուղացիների պատգամավոր-
ներն ու գյուղատնտեսը ներս մտան:

Գյուղատնտեսը մի կողմ քաշեց կառավարչին ու բացատրեց
գործի ելութունը:

— Հա, բանն եսպես ե. հիմի ես մարդկանց հույսը քեզ վրա
յե, պիտի մի ճար անես:

— Գիտե՞ք ինչ կա,—ասաց կառավարիչը,—տեսնում եմ, վոր
թունդ նեղն եք ընկել. բայց վո՞նց անենք. յերկու տրակտոր ունենք.
մեկը մեզ համար հարկավոր ե, մյուսն ել փչացել ե:

Դանեին առաջ ընկավ.

— Ընկեր ջան, վոր եսոր քու դուռն ենք չեկել, իմացիր, վոր
տեղներս շատ նեղ ե. պետք ե մեր կուլակներից մեզ ազատեք. են
ե՛ ատամները սրած սպասում են, վոր մեզ գզեն: Հատուկ խնդրում
ենք՝ մեզ վրա քաղցր աչք ունենաք:

— Ընկեր Վոսկան, ես մեր փչացած տրակտորը պիտի նորո-
գենք, իրենց տանք: Հիմի քեզ վրա յե, ինչ ուզում ես՝ արա, հնար-
քով լինի, թե հրաշքով՝ պիտի ես մարդկանց տրակտոր տաս: Իսկ
դուք, ընկերներ, հո լսեցի՞ք. մի շաբաթից հետո կգաք ու կտանեք
տրակտորը:

— Շնորհակալ ենք, մնաք բարով:

Գյուղի պատգամավորները ճանապարհվեցին դեպի գյուղ:

* *

Մի շաբաթից հետո գյուղում ձայն ընկավ տրակտորի գալու
մասին. ել մարդ չմնաց, դուրս չեկավ թամաշա անելու: Սկսած
գյուղի ծալի ջրաղացից մինչև կոոպերատիվի առաջի հրապարակը
տրակտորն անցնում եր անընդհատ «կեցցեների» ուղեկցութամբ:

ԱՐՏԱԳՐԻՐ ՄՐԱՆՑԻՑ ԱՅՆ, ԻՆՉ ՎՈՐ ԿԱ ՁԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՅԵՎ
ՄՈՏԱԿԱ ՔԱՂԱՔՈՒՄ.

Նորը գյուղում

Պիտներական ողակ: Գյուղացիիս դպրոց:

Լիկկայան: Խրճիթ-ընթերցարան:

Գյուղխորհուրդ: Գյուղատնտեսական խմբակ:

Սպառողական կոոպերատիվ: Արտադրական
կոոպերատիվ:

Երեկոտկայան: Տրակտոր:

Վարկային ընկերություն: Վարձակայան:

Նորը բաղադրում

Ֆաբրիկուլ: Գյուղատնտեսական դպրոց:
Տեխնիկում: Բանֆակ: Համալսարան:
Կոնսերվատորիա: Նկարչական ստուդիա:
Քաղխորհուրդ: Ելեկտրոկայան:
Ռադիո: Կինո: Մանկապարտեզ:
Մսուր: Սոցապգանձարկղ: Պրոֆբյուրո:

20-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Մեր գյուղխմբակները և գյուղյերիտ դպրոցները գյուղատնտեսական ցուցահանդեսներում

Հոկտեմբերի 30-ին հշանակված եր Գյավթաուլի շրջանի բերքի տոնն ու գյուղատնտեսական ցուցահանդեսը:

Այս շրջանում մինչև հեղափոխութունը գարի-ցորենից բացի ուրիշ դաշտալին ոգտակար բույս չէ մշակվել: Այնինչ, յեթե մի հեկտար ցորենն ու գարին տալիս են 60 - 70 ուղբլի հասուլթ, բանջարեղենի բերքը հասնում է մինչև 250—300 ուղբլու: Ցուցահանդեսի բանջարաբուծական բաժնի բույսերի մեծ մասը Գյավթաուլի գյուղյերիտ դպրոցի, նույն գյուղի և Պարնիի գյուղխմակների և Մաշտի գյուղի պիտներական կուլեկտիվի կազմակերպածն է:

Գյավթաուլի գյուղխմբակի կես հեկտար ճակնդեղը 700 փուլթ բերք է տվել: Պարնիի խմբակը 18 կիլոգրամանոց դդուհներ է ստացել: Մաշտի գյուղի պիտներական կուլեկտիվը 3 կիլոգրամանոց ճակնդեղ է հասցրել:

Ցուցահանդեսում գյուղացիների մեծ մասն առանձնապես հետաքրքրվում էին յերիտասարդների բերած բույսերով: Վորովհետև նրանց մշակած բույսերը շրջանի համար նորութուն էին. նրանց փորձն է, վոր համոզում է գյուղացիներին, թե այդ շրջանում բանջարներն ավելի չեն ոգուտ տալիս, քան հացաբույսերը:

Բերքի տոնը

Ի՞նչ էմ անում
վոսկի, արծաթ,
տոպրակներով
թուղթ, ստակ:

Յես հող ունեմ,
յես ջուր ունեմ,
ճակտի բրտինք,
վար-վաստակ:

Յես թե ունեմ,
թիկունք ունեմ,
յես կուռ ունեմ,
կուռ դաստակ:

Ձեռքիս տոնն է,
բերքիս տոնն է,
պիտի փայլի
աշխատանք:

ՀԱՐՅԵՐ.

1. Ձեր գյուղի խրճիթ-ընթերցարանը գյուղխմբակ ունի:
2. Ձեր գյուղում կովերի ցուցադրական կերակրում կազմակերպվել է:
3. Ձեր շրջանի գյուղխմբակները գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցում են:
4. Ո՞վքեր են վերջին ցուցահանդեսում մրցանակ ստացել և ինչո՞ւ համար:

ԳՐԻՐ «ՄԱՃԿԱԼ»-ԻՆ ՁԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՓՈՐՁԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳրիՐ, թե ո՞վ է իր անասուններին խոտ ու դարմանից բացի ուրիշ կեր տալիս, ինչպես և վորքան ոգուտ է ստանում: Ո՞վ է կարգի բերել գոմը և ինչպես՝ լուսավորել է, մսուր է սարքել, սպիտակացրել է, սալահատակել է, թե՞ ողանցք է բաց արել:

ԳրիՐ, թե ո՞վ է իր սերմը զտած ցանում: ԳրիՐ, թե ո՞վ է հրսժարվել արորից ու գուլթանով վարում, ինչպիսի գուլթանով և ինչ ոգուտ է ստանում դրանից:

21-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գյուղատնտեսի զրույցներն ողնեցին

— Գիտե՞ս ինչ էմ մտածում, Մարե, —ասաց Գալոն կնոջը՝ խրճիթ-ընթերցարանում գյուղատնտեսի զրույցը լսելուց հետո:

— Ի՞նչ:

— Նախ են, վոր եզուց պիտի վեր կենամ ու կանոնավոր կրտրեմ մեր ուռենիների գլխերը, բոլոր ճյուղերը՝ հենց տակից: Լավ

նարսեմ, վոր չորանա, փայտ դառնա ու վառենք: Հետո պետք է մի առանձին տեղ շինեմ, տավարի աղբը հավաքեմ ու կիսեմ, վոր հեղանակը փոքր ինչ տաքացալ թե չէ, իսկուհն տանեմ ու արաս աղբեմ: Ունեցած ցանս ամբողջ տարին բավական է: Հետո չեմ արաս գուլթանով հերկեմ, տափանեմ ու մի լավ ցանեմ շարքացան մեքենայով, նրանով, վոր գյուղատնտեսը բերել էր ու փորձ էր անում կակոյենց հողումը:

— Յես ել հենց եգուցվանից սկսելու չեմ սերմը ձեռքով շուկել՝ բրնձի նման: Մնացածն ել դու կտանես քաղաք ու մեքենայով մաքրել կտաս, վոր շուկած ու մաքուր սերմ ցանենք:

— Գյուղատնտեսն ինքը բերելու չե մեքենան մեր գյուղը: Են ժամանակ ինչ սերմ ունենք, նրանով կմաքրենք, ել ինչի՞ չեմ գնում քաղաք:

— Արտը վոր դուրս գա, չես ել չերեխաներիս կհավաքեմ ու արտի մեջ մի հատ անպետք խոտ չեմ թողնի, վոր բուսնի: Հետո չեմ, չերբ արտը թփակալի, չեզները կլծեմ ու ամբողջ արտը կփոցխեմ, վոր արաս ծարավ չմնա, լավ աճի ու լավ բերք տա: Իմացար:

— Հէ՛լ գիտի Մարալ ջան, Զեյրան ջան, ել ձեր խեղճությունը պրծավ: Մի վեց չվան եսնեց կորնգան կամ յոնջա ցանեմ, վոր ուտելուց չկշտանաք: Բա բազուկը՝ դդումը՝, կարտոֆիլը՝: Զե, ձեդ եսնեց պահելը խալտառակություն է: Մարե, հենց եգուց փայտե սանրովդ կովերին մի լավ կսանրես, հորթուկին լավ մոխրաջրով կլողացնես ու կցամաքեցնես, վոր չմրսի: Հենց վոր քաղաք գնացի, կերթամ դեղատուն ու մոխրագուլի մաղ կբերեմ վոջիլի դեմ:

— Գալո, չես ուզում եմ չերեկոյան ջուր բերեմ, լցնեմ մեր ես կարասի մեջ և առավոտյան ես ջուրը տամ խեղճերին, վոր առավոտյան ես ցրտին դուրս չանենք ու չմրսացնենք: Տակն ել շուտ շուտ կմաքրենք, փելին ու դարման կլցնենք, վոր մաքուր նստեն ու վեր կենան:

— Մսուրն ել կցածրացնեմ, չերդիկներն ել ապակի կզցեմ: Կտոր կառնեմ, վոր ուժս հաղթի:

— Գալո, բա կարտոֆիլի փոսը... մեկ բաց, տեսնենք, թե մեր կարտոֆիլն ինչ որումն է: Փտածները շուկենք, դեն ածենք, շատ ձաքճաքածներն ու ծուռտիկ-մուռտիկները հանենք, բանեցնենք: Մերմացուն ել առանձին շուկենք ու պահենք, վոր ժամանակին լավ սերմ ցանենք: Իսկ քաղհանը, բողազ տալը դու ինձանից պահանջիր, չերեք անգամ բողազ կտամ:

— Յես ել չերկու անգամ կփոցխեմ ու քաղհան կանեմ: Են պես կարտոֆիլ տուն բերեմ, վոր մեր գյուղը զարմանա:

— Հավերի մասին ել պետք է մտածել: Միքիչ կուտ պետք է ավելացնել, բակում ավազ ու միքիչ կիր լցնել, մի հատ ել աքլոր ճարել, վոր հավերը չդժգոհեն ու գանգատ չանեն: Մեր աքլորն ինչացու չե, իսկապես անշնորհք ու քոսոտ է:

(Յալսացու «Խորհրդավոր սրտնչներ» գրից)

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Վարժ կարգալ սովորելուց հետո ամբողջը չերկու հողով կարգացեք դերերով:

2. Պատմիր. թե Գալո և Մարե ամուսիններն ինչպես են ուզում բարելավել իրենց տնտեսությունը:

ՃՐԴ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՊԵՏՔ Ե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

22-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կազմակերպենք մեքենադատագործական ընկերություններ

Գյուղատնտեսական խոշոր մեքենաները շատ թանգ արժեն: Մի տնտեսատիրոջ համար դժվար է ձեռք բերել, շատ անգամ նույնիսկ փաստակար: Աշխատավոր գյուղացու միջանի հեկտար ցանքատաշտը մեքենան մեկ-չերկու որում կմշակի և նրանից հետո կմնա առանց ոգտագործելու: Գյուղացիները մեքենաները պետք է ոգտագործեն միասին՝ մեքենադատագործական ընկերությունների մեջ համախմբված: Միայն այդ ժամանակ մեքենան կոգտագործվի ամբողջովին և նրա արժեքը ծանր բեռ չի լինի մի տնտեսություն համար:

Խորհրդալին Իշխանությունը շատ է աջակցում մեքենադատագործական ընկերություններին: Մեքենաների գնման ժամանակ ընկերություններին վարկ է տրվում, իսկ վճարման համար ել ժամանակ է տրվում 2—3 տարի:

Մեքենա գնելու համար ընկերություն կազմելը չի նշանակում, թե գյուղացիք անպատճառ իրար պիտի խառնեն իրենց հողերը: Միայն մեքենաներն են ընդհանուր, իսկ ամեն մարդու հողն առանձին ել կմնա:

Ամեն մի գյուղացի իր ընտանիքով իր հողի վրա չե աշխատում:

Միայն ընկերութիւնն կազմող գյուղացիք վորոշում են, թե վոր որք
նւմ մոտ ե աշխատելու մեքենան: Հենց վոր հերթն հասավ մի վորեւե
գյուղացու, նա ինքն ե աշխատեցնում մեքենան:

(Փոխադրութիւնն ոռոտեցնից)

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչու ոգտակար ե մեքենադադարձական ընկերութիւնն-
ներ կազմակերպելը:

2. Հետաքրքրվեցէք, թե ի՞նչպէս պետք ե կազմակերպել մե-
քենադադարձական ընկերութիւնն. հարցրեք Հայգյուղկոտպի հրա-
հանգչին, շրջանային գյուղատնտեսին կամ ձեր գյուղի խրճիթ-
վարին:

ԼՐԱՅՐԵՔ ՅԵՎ ԱՊԱ ԳՐԵՅԵՔ.

Նորը և հինը

1 հեկտար. վարում են 7 հեկտար, իսկ գութանով՝

2 հեկտար. ցանում են 5 հեկտար, իսկ ձեռքով՝

րանդիով 1 հեկտար. ցորենը հնձում են 40 հեկտար, իսկ գե-

գաղով $1\frac{1}{2}$ հեկտար: խոտը հնձում են 5 հեկտար, իսկ ման-

Տեղեկանք. Հնձող մեքենայով, խոտհար մեքենայով, շարքացա-
նով, տրակտորով:

Տրակտորի յերգը

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Հէյ ջան ախպեր, պոխպատ ախպեր,
դե շուտ արի, գարդ բարի,
տրակտոր ջան, մեր նոր ընկեր,
քեզ փեշքեշ ե հանդը գյուղի:

Մեր սրտի հուշ, մեր աչքի լույս.
բեր ճակատդ կարմիր կապենք,
ման յեկ գյուղում, յերթդ անուշ.
գութան ու չութ թող դարդոտվեն:

Ես մեր գյուղը հազար տարվա,
աղքատների մի բանտ եր մութ.
նրանցն ելին՝ թե հող, թե հաց,
ով դորբա յեր, տիրող, անգութ:

Մատաղ լինեմ մեր վրաստին,
յեկավ ու մեզ նոր շունչ տվեց.
բերեց խորհուրդ, կոտպերատիվ,
տրակտոր ջան, հիմի յեկ քեզ:

Դու վոր մերն ես, ել ի՞նչ կուլակ,
ել ի՞նչ դորբա մեզ կնեղի.
սարքը վրան տասը գութան
վոչինչ բան են քո առաջին:

Կարմիր գյուղի աղքատ մարդիկ,
նոր ճամբա յենք հիմի բռնել.
վար ու ցանքը միասին դիփ,
միացել ենք, ախպեր դարձել:

Մեր պապերը լավ են ասել,
«գեղը կանգնեց, գերան կոտրեց»,
նոր վրաստի կամքն ել ե եդ,
նա եդ ճամբան ցույց տվեց մեզ:

Դու վոր յեկար, մեր նոր ճամբան
շատ հեշտացավ, ել դարդ շունենք.
դե, քեզ ցույց տուր, տրակտոր ջան,
հինը քանդենք, նորը շինենք:

Լավ կարդալ սովորիր, աշխնքն՝ ուղիդ, վարժ, գիտակցաբար
ձ գեղեցիկ (արտահայտիչ) կարդա. վորտեղ դրված ե բացականչա-
կան նշան (') ձայնդ յերկարացրու, վորտեղ շեշտ (') ե դրված՝ բա-
ռը շեշտիր, իսկ վորտեղ հարցական նշան (?) ե դրված՝ հարցական
ձևով կարդա:

Լավ կարդալ սովորելուց հետո արտագրիր 1-ին, 5-րդ և
8-րդ տները:

Չմոռանաք գրել վոտանավորի ձևով տող տող աջնպես, ինչ-
պէս գրքում ե գրված:

Չմոռանաք գրել առողջանության նշանները՝

շեշտը (')

հարցական նշանը (°)

բացականչական նշանը ('):

Վարձակայան

Գյուղի վերևում նոր շինած վարձակայանի առաջ հավաքվել են գյուղացիք:

Ընդարձակ կալում մի տեղ քամհարն է աշխատում, քամած ցորենը սերմագործի մեջ են լցնում, և մեքենայի ներքևից թափվում է սերմացուն ջուկ, հավի կուտը ջուկ, ուտելու ցորենն էլ ջուկ:

Կայանի բաց դռներին յերևում են շարքացան մեքենաները, վոր պսպղին են տալիս: Նոր ձևի գուլթաններ կան, յերկաթե փոցխեր և ուրիշ մեքենաներ:

Ազմկում է քամհարը, փոշի չե հանում, մեկը փոշու մեջ թիալին է աննդհատ բարձրացնում, հարգախառն ցորենը լցնում մեքենայի մեջ:

Միքանի որ է, վոր բացվել է կայանը: Բոլոր գործիքները նոր են ստացված. վարձակայանն էլ նոր է շինված: Գյուղի նեղլիկ, ծուռումուռ փողոցները, ցածր դռները վոչ մի հարմարություն չունեն շարքացան կամ մի ուրիշ մեքենա տեղավորելու, փոխադրելու գյուղամեջ: Ստիպված կայանը շինել են գյուղի գլխին, հանդ տանող ճանապարհի բերանին:

Հավաքվում են գյուղացիք, նայում են զարմացած: Վոմանք կուսնում են, տակից նայում, կամ վիզը յերկարացնում վերից նայելու՝ տեսնեն, թե միջին ինչ կա, վոր այդպես լավ մաքրում է:

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչ բան է վարձակայանը:

2. Ձեր գավառակում վարձակայան կա՞. ի՞նչ պայմաններով են բաց թողնում մեքենաներ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Նկարագրիր այստեղի վարձակայանը:

Նախ բանավոր պատասխանիր և ապա հերթով յուրաքանչյուր հարցի պատասխանը գրի առ տեղեկանքից ոգտվելով:

ԱՌԱՋ ՅԵՎ ՀԻՄՆ.

1. Ի՞նչով ելին վարում առաջ և ինչով հիմա.

2. Ի՞նչով ելին ցանում առաջ և ինչով հիմա.

3. Ի՞նչով ելին հնձում առաջ և ինչով հիմա.

4. Ի՞նչով ելին ծեծում առաջ և ինչով հիմա.

5. Ի՞նչով ելին մաքրում առաջ և ինչով հիմա:

ՏԵՂԵԿԱՆՔ.

Կամով, գերանդիով, ծեծող մեքենայով, արորով, ձեռքով, գուլթանով, տրակտորով, մանգաղով, թիով,

ՈՐԻՆԱԿ.

Առաջ հնձում ելին մանգաղով կամ գերանդիով, իսկ հիմա՝ հնձող մեքենայով:

7-ՐԴ ՀԱՐՅ. ԳՆՈՒՂՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈԳՆՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻՆ

Վարկային ընկերությունն աշխատավորին ազատում է վաշխառուների ճանկերից

Պատերազմի և սովի տարիներում սաստիկ քաջացվել է գյուղացիական տնտեսությունը: Շատ փող է պետք, վոր նա, ինչպես հարկն է, կարգի ընկնի: Պետք է փող պարտք վերցնել: Խոմ չի կարելի պարտքի համար վաշխառուին զիմել: Նա իրենից պարտք վերցնողին գատեցնելով և տոկոսներով նրա կաշին կքերթե: Այդպիսի պարտքով վոչինչ կարգի չես կարող բերել: Այդպիսի պարտքը գյուղացու համար խեղդվելու թուկ կդառնա: Վաշխառուն մարդու աջակցի խաթի մեջ կգցի, վոր հոգին դուրս կգա: Ուրեմն գյուղացին իր ցավին ի՞նչ ճար պիտի անի:

Գյուղացու այդ ցավին ճար անելու համար խորհրդային իշխանությունը կազմակերպել է վարկային ընկերություն: Վարկային ընկերության անդամ դարձողը և փաշավճար տվողը, հենց վոր կարիք ունեցավ, կարող է վարկային ընկերությունից ցածր տոկոսներով փոխառություն ստանալ և մաս-մաս իր վերցրած պարտքը վերադարձնել: Նայած թե վարկային ընկերությունը վորքան ազատ միջոցներ ունի, դրա համաձայն էլ նա նշանակում է պարտքը վերադարձնելու ժամանակը: Վարկային ընկերությունները փոխառություն են տալիս յերբեմն յերեք, լինում է նույնիսկ հինգ և ավելի տարիներով:

(Ուսումնական «Ինչի համար է պետք կոոպերացիան» գրքից)

ՀԱՐՅԵՐ.

1. Ինչո՞ւ չի կարելի վաշխառուից պարտք վերցնել:
2. Ձեր գյուղում վարկային ընկերություն կա՞: Ի՞նչ պայմաններով են վարկ թողնում իրենց անդամներին:

ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՏՎԱԾԻՑ ԱՐՏԱԳՐԻՐ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԱՍՈՒՅԹՆԵՐԸ,
ՎՈՐՈՆՔ ԿՊԱՏԱՍԽԱՆԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՅԵՐԻՆ.

1. Ի՞նչ է բաց թողել Խորհրդային կառավարությունը.
2. Ինչի՞ վրա չեն ծախսելու փոխառությունը ստացված գումարները.
3. Ի՞նչ պետք է անեն գյուղավարկային ընկերությունները.

«Գյուղացիական տնտեսությունների ամրացման»
փոխառությունը և գյուղավարկային ընկերությունը

Պետությունը բնակչությանից փող ե պարտք վերցնում պետական փոխառությունների պարտատոմսեր գուրս թողնելու միջոցով: Ներկայումս Խորհրդային կառավարությունը գուրս է թողել 100 միլիոն ռուբլու «Գյուղացիական տնտեսությունների ամրացման» փոխառություն:

Փոխառությամբ ստացված գումարները կառավարությունն ամբողջովին ծախսելու չէ գյուղացիական տնտեսությունների ամրացնելու գործի վրա:

Դա նշանակում է, Վոր փոխառության հիմնական նպատակն է՝ ուժեղացնել գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքներն՝ բնականապես և վարկային կոոպերացիայի աշխատանքները՝ մասնավորապես, վորովհետև վաղը փոխառության միջոցով հավաքված գումարները վերջինի միջոցով մտնելու չեն գյուղացիական տնտեսության մեջ:

Հետևաբար գյուղավարկային ընկերությունները փոխառության իրացման աշխատանքներին պետք է առաջին տեղը տան և ամեն կերպ պիտի նպաստեն նրա տարածման:

(«Խորհրդային Հայաստան»-ից)

Տ.ՐԴ ՀԱՐՅ. ԳՅՈՒՂՍՊԱՌԿՈՈՊԸ ԳՅՈՒՂԱՅՈՒՆ ՏԱԼԻՍ Ե ԵԺԱՆ ՅԵՎ ԼԱՎ ԱՊՐԱՆՔ

26-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կոոպերատիվը բացվեց՝ մանրախանութը փակվեց

ԱՆՈՒՇ

Յերեք ամիս է, ինչ Կալինաշեն գյուղում բացվել էր կոոպերատիվ խանութ:

Ամեն ուր, գյուղացիներն էլ հանգիստ չունեին, հենց վոր մի բանի կարիք էլին զգում, վազ էլին տալիս կոոպերատիվ:

— Ինձ մի կիլո շաքար կշիր...

— Ալեքսան ախպեր՝ մի հատ սպիչկա տուր:

— Աղ...

— Աղը հատել է.

— Յ մետր բլազ...

— Համբերեցեք, մին-մին, հերթով ասացեք, վոր կարողանամ միտքս պահել: Իրար չետեից վրա չեք տալիս, բան չեմ հասկանում:

— Ի՞նչ անեմ, Ալեքսան ախպեր, վրազ եմ.— վարիչը գլուխը կորցրածի պես մեքենայի արագությունը, մի կողմից չեկն է գրում, հետո կշռում— տալիս: Ծանր աշխատանք է... կարմրել, քրտնել էր նա:

Ու ինչպես ամեն ուր...

— Հերթն իմն է, բնկեր Ալեքսան, վոնց ես նրա շաքարը կշռում:

— Ես րոպեիս քեզ համար ել կշռեմ, մի նեղանա, ասում էր Ալեքսանը: Ու եսպես գյուղացիներից մեկը գուրս էր գալիս, մշուսը մտնում:

Կոոպերատիվի առևտուրը քանի զնում ծավալվում էր...

Կոոպերատիվից քիչ ցածր, գտնվում էր Սերգոյի փոքրիկ մանրախանութը: Կոոպերատիվի բացվելու ուրից, նրա առևտուրը զգալի չափով պակասել էր: Որերով նրա խանութը մի գյուղացի չել ներս չեր մտնում: Սերգոն զգում էր, չեթե միբանի ժամանակ էլ եսպես շարունակվի, խանութը փակել պիտի ստիպի: Ամբողջ ուր Սերգոն խանութի դռան առջև նստում էր, և հենց վոր մեկը գնած ապրանքը ձեռքին չեղևում էր, իսկույն տեղից վեր էր ցատկում ու ձեռքի շարժումով կանչում.— Մինո, չեկ եստեղ, տեսնեմ ի՞նչ ես առել:

— Ձե, Սերգո ապեր, վրազ եմ:

Յեվ այսպես բոլորը:

— Ձեւով,— ինքն իրեն գլուխը թափ տալիս ու մրթմոթում էր Սերգոն: Թե ապրանքս եժանացնեմ, են ժամանակ չեա վնաս կանեմ: Լավ է վերջ տամ խանութիս:

Ձարչի, կուլակ՝ մուկ, մորեխ.
խեղճ գլուղացիքն անտրեխ.
Հարչի, կուլակ հուշտ անենք,
գլուղ-գլուղացի կուշտ անենք:

ՀԱՐՑԵՐ

1. Ձեր գլուղում կոոպերատիվ կա՞. ինչպես ե աշխատում:
2. Իսկ ինչպես են Հարչիներն ու մասնավոր առևտրականները:

Այս ցուցակից արտագրիր այն ապրանքների անունները, վոր կան ձեր կոոպերատիվում: Ապա արտագրիր ձեզ անհրաժեշտ ապրանքների անունները, վոր Հկան կոոպերատիվում:

Բաժակ	Մահուղ	Բահ	Մուս
գավաթ	Հիթ	մանգաղ	ծխախոտ
պնակ	բումագեյ	գերանդի	լուցկի
թեյաման	դելրա	յեղան	ածուխ
թաս	պինջակ	փոցխ	նավթ
ջրաման	բաճկոնակ	կացին	աղ
դանակ	շապիկ	մուրճ	շաքար
շիշ	ձեռնոց	սղոց	թեյ
	շալ	ուրազ	ալյուր

27-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գողը ներսից—յեզն յերդիկից

ԽՆԿԱ ԱՊԵՐ

Քանի գլուղում են ել ախտիվ՝ իրավունքդ միշտ ճանաչի,
թալանվում ե կոոպերատիվ. քո գիրքերից մի նահանջի,
գլուղը կհուլ ե, եդ չի տեսնում. մազդ ուտողին դատի կանչի,
և եդ փսամն համն ե հասնում: կոոպը քոնն ե, դու չես տերը,
«Խեղի տոպրակ» գլուղբնակիչ, տո անիծիր գողի հերը:
ուշքի արի՛ դու չել մի քիչ, Սանհեր, բավոր ու խնամի:
դու չես ուզում վախճուլթուն, թեկուզ աչքիդ լույսը լինի՝
տուր գլուղկոոպիդ լավ վարչու- եդ լրբերին մի խնայի,
թյուն, գող մի պահի, գող մի պահի:
հանձնաժողով՝ վերաստուգիչ Գողը ներսից.
դու չել վրան աչք ու հսկիչ. յեզն յերդիկից:
հաշիվ, հաշիվ միշտ պահանջի,

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ բան ե վերստուգիչ հանձնաժողով:
2. Ի՞նչպիսի վարչութուն պիտի ընտրել:

ԱՅՍ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՅ ՀԱՎԱՆԱԾՆԵՐՈՒ ԱՐՏԱԳՐԻՐ.

Կոոպերատիվի անդամին

- 1 Յեղիր քո կոոպերատիվի իսկական անդամը և մտցրու փա- ջավճարդ:
2. Աշխատիր ուժերդ ներածին Հափ մեծացնել կոոպերատիվ- դրամագլուխը:
- 3 Մի գնիր մասնավոր խանութից այն, ինչ վաճառվում ե քո կոոպերատիվում:
4. Մի տա մասնավոր առևտրականին այն, ինչ վոր կարող ես կոոպերատիվին տալ:
5. Մի մտածիր միայն ապրանքների գների եժանացման մա- սին, ալ մշտապես հիշիր, վոր կոոպերատիվի գլխավոր նպատակն ե համապատասխան դնով լավ տեսակի ապրան- քներ աալ քեզ:
6. Աջակցիր քո կոոպերատիվի ուժեղացման. մի ընտրիր վար- չության մեջ առևտրականներին և հարուստներին:
7. Կանոնավոր հաճախիր կոոպերատիվի ընդհանուր ժողովնե- րը, ուր քննվում են կոոպերատիվի լավ ու վատ գործերը:
8. Աշխատիր կոոպերատիվի գործը լայնացնել:

9-ՐԴ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎ- ՄԱՆ ՈՒՂԻՆ ԱՐՏԵԼՆԵՐԸ, ԿՈՒԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐՆ ՈՒ ԿՈՄՈՒՆԱԼՆԵՐՆ ԵՆ.

28-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կովդ ես կթել, տար կաթնաւրտել

ԽՆԿԱ ԱՊԵՐ

Յեղեք անտես և ախտիվ.
ստեղծեք կոոպերատիվ
և նրան կից կաթնարտել,
ձեր կովերի թարմ կաթն ել
ավեք նրանց, վոչ անվարձ:

կաթնարտելի տերն եք դուք,
եղտեղ չկա «իմ ու քու»:
Դուք վաճառող, դուք սպառող
և արդյունքը դուք բաժանող:

Համաձայնական կշանքին վարժվեք,
կաթնարտելին տվեք արժեք,
Բարձրացրեք տնտեսութուն,
գյուղից քշեք քյափբութուն:

ՀԱՐՅԵՐ.

1. Ել ի՞նչ արտելներ գիտեք:
2. Ի՞նչ լավ կողմեր ունեն արտելները:
3. Ձեր գավառակում անախազործական և արհեստագործա-
կան ի՞նչ արտելներ կան: Ի՞նչու չեն արտել կազմում:

ԱՐՏԱԳԻՐ ԽՈՇՈՐ ՏԱՌԵՐՈՎ ԳՐՎԱԾՆԵՐԸ ՏՊԱԳԻՐ, ԻՍԿ ՄՆԱ-
ՅԱԾԸ ԶԵՌԱԳԻՐ ՏԱՌԵՐՈՎ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆԱՅՆԱ-ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ
Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը՝

„ՀԱՅՏՆԱՐԿՈՈՊ“-Ը

Մ Ի Ա Յ Ն Ո Ւ Մ Ե

Հայաստանի 50 տնայնա-արհեստագործական զանազան ճյուղե-
րի պատկանող արտադրական կոոպերատիվները՝ արտելները և դե-
կավարում ե նրանց կազմակերպչական աշխատանքները:

29-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Լուկաշեն կոլեկտիվ տնտեսությունը

Կոլեկտիվը հիմա ունի 58 տուն 120 սենյակով, ունի 7 արակ-
տոր, 3 խոտհար մեքենա, 2 հնձող մեքենա, 1 սերմագտիչ, 1 կալսող
մեծ մեքենա, 5 շարքացան և 3 փոցի:

Կոլեկտիվն ունի 2800 հեկտար հող վորից միայն 240-ը ջը-
րովի: Իսկ 29 թվից ամբողջովին կջրվի: Ջրովի հողերում ցանվում
ե 4 հեկտար ծխախոտ, 20 հեկ. բամբակ, 50 հեկ. խաղողի այգի,
չերկու ու կես հեկ. բանջարանոց, 4 հեկ. բոստան և մեկ ու կես
հեկ. տնկարան:

Մեր կոլեկտիվը պատրաստի գոմ ունի՝ 25 տավարի ու 500
փոխարի համար: Կոլեկտիվի ստացած կերը հնարավորութուն ե
տալիս կանոնավոր անասնապահությամբ պարապել: Մեր նպատակն
ե առաջին հերթին կաթնատու անասուններ պահել, պանիր ու յուղ
ստանալու համար: Իսկ փոխարները մենք միս ու բուրդ ստանա-
նալու համար ենք պահում:

Ձմրան ամիսներին անդամներն անգործ չմնալու համար կոլեկ-
տիվն ունի գուլպայի ու կարուձևի արհեստանոցներ: Պատվերների
մեծ մասը Յերևանից ենք վերցնում: Արհեստանոցները չեկամուտ
են բերում:

Մենք մի դինամո ունենք, վորը մեքենայի միջոցով բանեցնելու
չենք տնտեսության համար ելեքտրական լույս ստանալու:

Հալցուղկոոպից ստացել ենք 10 հազար ռուբլի կարճատև և 18
հազար ռուբլի չերկարատև վարկ: Բացի այդ ել Հալցուղկոոպի հետ
համաձայնության ենք չեկել մեր տնտեսության մեջ գյուղատնտե-
սական մեքենաների վերանորոգման արհեստանոց հիմնելու համար,
վորը պիտի ծառայե ինչպես տնտեսության կարիքներին, այնպես
ել շրջանի գյուղացիներին:

(«Մանկալ»-ից)

ՀԱՐՅԵՐ.

1. Ձեր գավառում կոլեկտիվ տնտեսություններ կան:
2. Ի՞նչպես են աշխատում կոլեկտիվ տնտեսության մեջ:
3. Ի՞նչ ե նշանակում կարճատև վարկ, չերկարատև վարկ:

ԱՐՏԱԳԻՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԲՍՈՐ ՄԻՇՏ ԸՆԿ. ԳՐԵԼՈՎ.

Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիա

Հալցուղկոոպն ընդգրկում ե՝

41 Գյուղվարկային ընկերություն, 3 գյուղատնտեսական խառն
ընկերություն, 83 կաթնատնտեսական արտել, 21 այգեգործական
ընկերություն, 13 մեղվաբուծական ընկերություն, 11 ծխախոտա-

գործական ընկերություն, 8 գյուղատնտեսական կոլլեկտիվ տնտեսություն, 3 շերամահնդահանական ընկերություն, 21 բամբակագործական ընկերություն, 19 մեքենատգտագործական ընկերություն, 3 թռչնապահական ընկերություն և 2 վոչխարաբուծական ընկերություն:

30-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Քեզ կանգնի՝ գերան կկոտրի

Ամբողջ գյուղն իրարանցման մեջ եր. կին ու տղամարդ, աղջիկ ու տղա, մեծ ու փոքր՝ շաապում ելին մոտիկ դաշտը

— Յեկեք, չեկեք նոր բան տեսնելու, — ձայն ելին տալիս վոմանք:

— Յեկեք ու մի տեսեք՝ Ճառվաշենց Մուքելը, Բուդադենց Անտոնը, Մելիքենց Մատոն — վաթսուն-յոթանասուն սարեկան մարդիկ, վոնց են վոգեկորված աշխատում:

— Տո՛ բա են Պառավենց Սահակը. ասում է ձեզ պես հազարին տակս կծալեմ: Կոներն լինչպես է՝ քշտել, ոչին բան է:

Յերեկ-մեկել որը չեկան, ըսկի չոփ ել չունեյին, գաղթականներ ելին. հիմի կառավարությունը նրանց հող է տվել, տուն է տրվել, վաղը-մյուս որը մեզնից կանցան ու կանցան. ինչ նրանք են մեկտեղ աշխատանքի կպել, քա՛ր կճղեն:

— Ախպեր, իսկական կոմունա չե, մարդիկ իրար թե ու թիկունք են. բա մեզ պես իրարու չուզո՞ղ:

Գյուղում մարդ չմնաց. հարսանքավորի պես, արտի բոլորը շարված՝ մոտիկ ելին տալիս, թե վոնց են տասից տասներկինգ ընտանիք ութսունից իննսուն հոգի մի ահագին տարածության վրա աշխատում՝ վոնց վոր մի տուն, մի ընտանիք:

Մեկ կողմն ութ-տաս գութան, ամեն մեկը չերկու գույգ չեղ լծած — լինչ չեզներ՝ ամեն մեկը մի ջանավար, իսկը մալախանի չեզներ, կառավարությունից ստացած, — ենպես ելին գետինը վարում, ենպես ելին ճմբերը շուռ տալիս, կարծես խաղ ու հարսանիք լիներ:

Մի ուրիշ տեղ հնգից տաս հոգի տափնում ելին վարածը, մի ալ տեղ՝ ութ-տաս հոգի փոցխում: Պառավ ու կին, աղջիկ ու տղա «չալի» ելին հավաքում, վարած հողը մաքրում: Զահեհներն իրանց դիլ չերգերով մրցում ելին գութանավորի հոռովելի հետ:

— Ախպեր, եսպես վոր գնա, սաղ գեղով մի տուն կդառնանք.

ել իմ ու քո չի լինի: Կեցցե՛ կառավարությունը, երևում է լավ պլաններ ունի, հա՛: Առաջ ո՞վ եր տեսել եսպես բան:

— Մի որվա մեջ ես ահագին դաշտը կվարեն, կմաքրեն. կրտափեն, մի կողմ կկանգնեն, ենպես են վոգեկորվել:

Բա վոնց ես իմանում, — մեջ ընկավ մի չերիտասարդ կարգացվոր տղա: — Մահն ընկերով՝ հարսանիք է, բա աշխատանքն ընկերով ինչ կլինի: Են ել դո՛ւ տես ու իմացի: Են կողմը նալիք, տես, Խոչեցոնց Մակարը մենակ է վար անում. տես վոնց է ճլորել. պինչը բունես՝ հոգին կտա: Մարդ մարդու թիկունք պիտի լինի: Զե՛ս լսել՝ «քեզ կանգնի՝ գերան կկոտրի»:

— Դրուստ է, ախպեր ջան, դրուստ. ջոկ-ջոկ աշխատելը հալամ է: Մենք ել միանանք:

Արեն արդեն թեքվել եր, բաց գյուղացիք դեռ մոտիկ ելին տալիս աշխատողներին ու հիանում: Ու բոլորի սրտով մեկ ցանկություն եր անցնում՝ իրանք ել միանան, միասին աշխատեն, միասին կռվեն, մեկտեղ հավաքեն, նոր կյանք ստեղծեն:

(«Ա.Ե.ԽԱՏԱՆԻՖ»-ից)

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Համեմատիր հողի մշակության կոլլեկտիվ և անհատական ձեվերը և ասա առաջինի առավել կողմերը:

ԱՐՏԱԳՐԻՐ ՅԵՐԿՐՈՐԿ ՏՈՒՆՐ.

Աշխատանքը Խոտորջուրյան կոմունայում.

ԹՈՐԳՈՄ

Վաղ առավոտ կոմունարներն դուրս են գալիս աշխատանքի, ինչպես հզոր կարմիր բանակն եր դուրս գալիս պատերազմի. աչքերն արև, աչքերը ծով լի հավատքով հաղթանակի, չափում են լուռ՝ տարածությունն հսկայական խոտահարքի:

Դաշտը ծփան ծով է դարձել — վոլջունում է գալը նրանց, մինչև գետին խոնարհվում է ամեն մի խոտ ու հասկ նրանց. ու շարվում են կոմունարներն իբրև կովի շղթա անանց, սկսվում է մի տաք կռիվ աշխատանքի ճակտի վրա:

Անփոփոխ կերպով վերցված է Խոտորջուրյան կոմունայի պատի թերթից:

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԻՆ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂ ՈՒ ՔԱՂԱՔ—ՈՒԺԸ ՀԱՎԱՔ

ՅԻՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ինչ է տալիս գյուղը քաղաքին և քաղաքը
գյուղին.

Գյուղը քաղաքին տալիս է սննդի մթերքներ և արդյունաբե-
րական հում նյութեր, իսկ քաղաքը գյուղին տալիս է իր արդյու-
նաբերության արտադրանքները.

*
* *

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Քաղաքի հետ
կապենք գյուղը.
բանվորին տանք
հացն ու չուղը:

Պտուղները
մեր բաղերեն,
ամեն տեսակ
հում նյութեղեն,

վոր նա մեզ տա
գիրք ու գրիչ,
գութաններին
խոփ ու ձևիչ:

Թե՛լ ու ասեղ,
մկրատ ու ճոթ,
սապոն, շաքար
և թելի խոտ:

Դեղ ու դարման
հիվանդներին:
Յեկեք ոգնենք
բանվորներին:

Նրանց համար
ղրկենք ապրուստ,
տեղն ստանանք
գիրք ու հագուստ:

Գյուղին բերենք նավթ ու աղ,
աման-չաման, տաշտ ու մաղ,
ուրազ, կացին, փայտ ու մեխ
մկրատ, մատնոց, թել, ասեղ:

Մուրճ ու մանգաղ, գերանդի,
բահ ու բրիչ սղոց, թի,
մեկին մեկ ել ավելի,
գյուղը բարով վաչելի:

Հետևյալ ձևով ձեր տան, դպրոցի և մոտ ընկերոջ հասցեները
գրի՛ր, տանը վարժվի՛ր. վոր հաջորդ դասին, առանց նախելու որինա-
կին, քեզանից գրես հասցեներ:

ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ.

Կայարան Բոյագիրան

Վարանցովկայի շրջան

Գյուղ Նորաշեն

Խրճիթվար Խաչարուր Բաղրաշանին

ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ.

Պատվիրած.

Վարպուշնական

Լոռի-Փամբակի գալ.
դպրոցի փող. № 21

Խաչկանուշ Կարապետյանին

Ուղարկողի հասցեն՝ Լենինական, փողոց № 15, Տուն № 62
Դեղամ Յեսայան.

32-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գյուղացու տուն

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Անցավ հինը՝	Դե, համեցեք
փուշ ժամանակ,	«Գյուղացու տուն».
յեկավ նոր ձե,	եւ վոշ պաղվալ,
նոր չեղանակ.	վոշ գինետուն.
ընկեր դարձան	եւ չեք պառկի
կոշտ գեղացին,	խոնավ հողին,
ձեռքը մազոլ	ալ կունենանք
քաղաքացին:	լավ անկողին:
Յերբ գաք քաղաք,	Թեյն ու ճաշը
ցանկալի հյուր.	ժամանակին,
մեր աչքի լույս,	ամեն ինչը
յեղբայր ու քույր,	ձեռքիդ տակին:

ՀԱՐՑԵՐ.

1. Ինչու համար են գյուղացու տները:
2. Ո՞վ է ձեզանից չեղել գյուղացու տանը:
3. Ի՞նչ բաժիններ ունեն գյուղացու տները:

ԱՐՏԱԳՐԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ՎՈՏԱՆԱՎՈՐԸ.

Վողջույն ամենքիդ

Մաճկալ չեղբայրներ,	մեր աշխատանքին:
մեր տանջանքների	Մաճկալ չեղբայրներ,
ու հաղթանակի	մեր աշխատանքի
միակ ընկերներ,	ու հաղթանակի
վողջույն ամենքիդ:	միակ ընկերներ,
Դուք՝ հարած մաճին,	գործարաններից
մենք՝ փարած մուրճին:	ու դարբնոցներից
զանրկ տանք միասին	վողջույն ամենքիդ:

33-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գիշերն անտառում

Զորս սալորդ ելինք, փարձով ապրանք ելինք տարել քաղաք,
ենտեղից վերադառնում ելինք: Հունվար ամիսն եր. Լոբի մեծ ան-
տառում մթնեց, պետք է գիշերելինք: Գրիգոր քեռին, վոր ամե-

նիցս մեծն եր և մեր կարավանի գլխավորը, մի հարմար բացատ
ընտրեց:

Յեզներն արձակեցինք, ծառի ճյուղերից մի մեծ մսուր շինե-
ցինք և յեզներին խոտ ու դարման տվինք: Ապա յերկու մեծ կրակ
փառեցինք՝ մեկը յեզների աչք կողմը, մյուսն աչք կողմը, վոր յեզ-
ները չմրսեն:

Լավ կերանք, մոտիկ աղբյուրից ել կուշտ ջուր խմեցինք (ան-
տառում ձմեռն աղբյուրները չեն սառչում), կրակին փայտ ավելա-
ցրինք և մեր յափնջիներում փաթաթված՝ կրակի առաջ պառկեցինք:

Շատ ժամանակ եր անցել թե քիչ, չգիտեմ — մեկ ել Մեղքոն
ապերը գոռաց.

— Վերկացեք, այ տնաքանդներ, գիլանն եկան, ես ինչ պիտի
անենք:

Վա, ինչ տեսարան եր... հեռվից լսվում եր գալերի առնելի
փոռնոցը. մեկը վոր սկսում եր, մյուսները շարունակում ելին:
Նրանց աչքերը ենպես ելին պսպրին աալիս, վոր կարծես յերկնքի
աստղերն իջել են յերկրի վրա: Յեզները թողել ելին իրենց խոտը
և մեջքներն իրար արած, գլուխները կախած, անհանգիստ աչքերով
դիտում ելին հեռուն և փնջացնում:

Յես շատ վախեցա. իսկույն վեր թռա, գլխարկս գտա, յափն-
ջիս գցեցի ու չգիտելի ինչ անեմ:

— Կրակը, կրակը մեծացրեք, թեժացրեք, — աղաղակեց Գրի-
գոր քեռին արթնանալով. հա վարչեկնապես հասկացավ, թե ինչ է
կատարվում:

Յերկու կրակի վրա յել փայտ լցրինք. կայծերը յերկինք բար-
ձրացան: Գալերը մոտեցել, շրջապատել ելին մեզ. կրակի բոցով
շատ լավ տեսնում ելինք նրանց ահռելի յերախները և փալլուն
աչքերը. միաժամանակ լսում ելինք նրանց ատամների չխշխկոցը.
Ա, եգ ատամների չրխկոցը... մինչև մահս չեմ մոռանալ... մազերս
բիզ-բիզ կանգնեցին:

— Վա, Գրիգոր ջան, կորած ենք, ինչ պիտի անենք, — ասում
եր վախկոտ Մեղքոն ապերը:

— Իսկի մի վախենաք. վոչինչ չի լինիլ. մսի հոտ են առել
անիրաջները... այ մի հրացան լիներ հա... — ասում եր քեռին հան-
գիստ ու անվրդով:

Թե ինչքան ժամանակ տևեց ես սարսափը, չեմ կարող ասել:

Եզպես շարունակել չեր կարելի: Լույսն ել հեռու յեր, իսկ
գալերի ողակը հետզհետե նեղանում եր... Ենքան ել շատ ելին, յես
յերեսուն ասեմ, դու քառասուն իմացիր

Յերբ գալերն ենքան մոտեցել ելին, վոր կարելի չեր փայտը

շարտելով հասցնել նրանց, քեռին հրամայեց, վոր բոլորս միասին մի-մի վառվող ածխակով շարտենք գալերի վրա:

«Դե, շնտ» վոր ասեց, բոլորս ել կաշօերով վառվող փայտերը շարտեցինք գալերի վրա: Նրանց մեջ իսկուհն իրարանցում ընկավ ու յետ-յետ գնացին: Եղ միջոցին քեռին վերցրեց մի ահագին վառ-վող ձող և ուղղակի հարձակվեց ամենամոտ գալի վրա. սա սոսկալի վռնոցով սկսեց փախչել. մյուսները վալրկենապես հետևեցին նրան: Դու մի ասիլ, վոր քեռին շատ լավ գիտի, թե իր մոտիկը վոհմակի առաջնորդն է, ու հենց նրան պետք է փախցնել:

Հինգ ըսպելից հետո գալերի վռնոցը շատ հեռվից եր գալիս:

— Ել չեն գալ, անհանգիստ մի լինեք,— ասաց քեռին,— տեսեք յեղներն ինչպես ուղղվեցին, հանգստացան ու սկսեցին խոտ ուտել... Նրանք շատ լավ են հասկանում՝ յետ կգան, թե չէ:

Իսկապես, սպասեցինք ելի տասը-տասնը հինգ ըսպել, և գալ-լերը չվերադարձան:

(«Աւստրալիա»-ից):

ԱՌԱՋԱՆՈՒԹՅՈՒՆ.

Պատմիր քեզ կամ ծանոթներիդ պատահած նման դեպք:

2 ԲԴ ՀԱՐՑ. ՄԵՏԱՂՆ ՈՒ ՎԱՌԵԼԻՔԸ ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱ-ԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ ԵՆ

34-ԲԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ



Մետաղարդյունաբերությունը—ամբողջ արդյու-նաբերության հիմքն է կազմում

Վնչ թեթև արդյունաբերությունը, վնչ տրանսպորտը, վնչ վա-ռելիքը, վնչ ելեկտրոֆիկացիան, վնչ գյուղատնտեսությունը, չեն

կարող վտաքի կանգնել առանց մետաղարդյունաբերության ուժեղ զարգացման:

Մետաղարդյունաբերության զարգացումն ամբողջ ժողովրդա-կան տնտեսության և ամբողջ արդյունաբերության զարգացման հիմքն է:

(Ըստ Սալիխի):

ՀԱՐՑԵՐ.

1. Վո՞ր արդյունաբերությունն է կոչվում թեթև, իսկ վո՞րն է կոչվում խոշոր:

2. Ի՞նչ բան է տրանսպորտը:

3. Ի՞նչ բան է ելեկտրոֆիկացիան:

4. Ինչո՞ւ մետաղարդյունաբերությունն ամբողջ արդյունաբե-րության հիմքն է կազմում:

ՀԵՏԵՎՅԱԼ ՁԵՎՈՎ ՆԱՄԱԿ ԴՐԻՐ, ՆԿԱՐԱԳՐԻՐ ՁԵՐ ԴՊՐՈՅԸ


Ժանկազին ընկեր,

Ճես այժմ գրագետ եմ: Աս իմ առաջին նամակս ե: Ճես այժմ աշխատում եմ Եսեռ-Վյաննի անվան հանձնում. հանձնադրերը կարգի յեն բերված: Ճես շատ փարձիեղ եմ հանձնադ-րության մեջ: Այժմ յես հաճախում եմ յերե-կոյան դպրոց: Եռը-չուր նամակ գրիր: Գրիր նաև մեր բզիզի և գյուղխորհրդի աշխատանի-սերի մասին:

Կոնյերի պրաքսիներով՝ ին Արսա՛

Մայիսի 9-ին 1928 թ.,

Մարտունական.



Նավթաշխարհում առաջ և հիմա

ԲԱՆՎՈՐ ՂԱՐԻՔ

Նավթահանքում սկսվեց աշխատանքը: Գործարաններում կատարվի արագությամբ շարժվում ելին մեքենաները, կարծես ուր վոր շտապելիս լինելին:

Վիշկաների միջին նստած նավթահան բանվորները՝ աչքները հառած լերկաթի պարանին՝ նավթ ելին քաշում: Յուր քսող բանվորը բուրձի ծալքին նստած՝ մի կողմից չուղում եր անիվը, մյուս կողմից՝ նայում հանքի վրա: Քանի-քանի մարդկանց կյանքն եր կերվել այստեղ:

Վիշկաների միջից այս ու այն կողմից լավում ելին գործակատարների և կառավարիչների հաջույանքները բանվորների հասցեյին:

Նավթահանքում հնչում ելին զիլ ու քաղցր ձայնով գործի կանչող սուլիչները: Գնացքներից իջնող բանվորներն ուրախ-ուրախ ցրվեցին նավթահանքերը: Մի քանի բուրձից հետո նավթահանքը կենդանացավ: Իրար ելին խառնվել նավթահան մեքենաների շրթկոցը, գործարաններում լերկաթագործների մուրճերի ձայնը և քաղցր լերգը չուղող-բանվորի, վորը բարձրացած վիշկայի գլխին՝ հպարտ նայում եր չորս կողմ տարածվող վիշկաների վրա: Նա չերգում եր բոլորի սրտից:—

— Դու խորթ ելիր մեզ, այ նավթաշխարհ: Այժմ հարազատ ես: Չկան նրանք, վորոնք միայն ստացվող արդյունքն ելին սիրում: Հիմա քեզ շրջապատել ենք մենք — մազութավորներս, վորոնց ձեռքով դու կառուցված ես...

Վիշկա — նավթահորի վրա կառուցած շենք:

ՀԱՐՑԵՐ.

1. Վերադառնալիս և գտնվում նավթաշխարհը.
2. Ո՞վ ե ձեզնից լեղել Բագվում. նկարագրեցե՞ք:
3. Ի՞նչ փոփոխություն ե լեղել Բագվի բանվորների կյանքում:

ԱՄԲՈՂԶ ՎՈՏԱՆԱՎՈՐԸ ՎԱՐԺ ԿԱՐԴԱԼ ՍՈՎՈՐԵԼՈՒՅ ՀԵՏՈ ԱՐՏԱԳՐԵԼ ԶԵՌԱԳԻՐԸ.

Բալախանի

Ս. ԶՈՒՂԱՄՅԱՆ

Կասպից ծովան ծովի ափին
մեծ անտառ կա սև ու մթին:

Եղ անտառում

չեն հոտ բուրում

վառ ծաղիկներ

հաղարագուն —

վոչ ել փոված գալարուն սեղ

քո փոքրի տակ դու կտեսնես:

Ու ծառերն ել են անտառի

տերևներով չեն զարդարվի:

Եղ անտառում նավթահանքի

հոտն ե բուրում կապույտ նավթի,

և գալարուն կանաչի տեղ

մազութն ե սև փովել այստեղ:

Իսկ ծառերը՝ սև, փրփալի
փշկաներն ել եղ անտառի:

36-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի՞նչ եք արել և ի՞նչ պիտի անեք

ՔՈՒՅԵՆ

Ընկեր Լենինն ասում է, վոր մենք մեր անելիքների կեսը կա-
տարել ենք, բայց դեռ կեսը մնում է:

Առաջին կեսը, են վոր կատարել ենք, դա հեղափոխու-
թյունն էր, չեք բանվորն ու գյուղացին ձեռք-ձեռքի տված՝ վոտքի
յեւան, զենք առան ձեռները ու խփեցին իրանց թշնամուն, բուր-
ժույին, գործարանատերին, կալվածատերին—իշխանութիւնը նրանց
ձեռքից, այսինքն գուբերնատորների, պրեստիսների, քոլովանների
ձեռքից խլեցին:

Իշխանութիւնը խլեցին ու սեփական բանվորա-գյուղացիական
իշխանութիւն ստեղծեցին, խորհրդային իշխանութիւն, քյասիբի
հարադատ իշխանութիւն:

Հիշում ես չե՞, ընկեր Լենինը կոչ արավ, թե հիմի կռիվը վեր-
ջացավ, ռազմական ճակատ չկա, բայց կա մի ուրիշ ճակատ, դա
տնտեսական ճակատն է, վորտեղ նոր կռիվ պետք է սկսենք: Կռիվ
ազգատութեան, ավերածութեան, սովի և խամարի դեմ:

Ու չեղիք բանվորն ու գյուղացին ուժերն ու յեռանդը կրկնա-
պատկեցին ու դիմեցին խաղաղ շինարարական աշխատանքի:

Քո գութանի ու բանվորի դազգյահի, քո և նրա աշխատանքի
շնորհիվ է, վոր չեղիք սովից ու մերկութիւնից, լաց ու կոծից
փրկվեց:

Ահա, սա չե՞ մեր անելիքների են կեսը, վոր ընկեր Լենինն աս-
ում է, մենք պատվով կատարել ենք:

Բայց չմոռանա, միայն կեսն է, դեռ մեծ կեսը մնում է:

Եղ ի՞նչն է, վոր չենք արել և պետք է անենք:

Ընկեր Լենինն եղ հարցին պատասխան է տվել, ու մեզ ուղիղ
ճանապարհ ցույց տվել:

Մեզ մնում է արդյունաբերութիւնը, այսինքն զավուդներն ու
Փաբրիկաները կարգի դրել, բարձրացնել նրանց աշխատանքը, նո-
րերը սարքել, շատացնել նրանց թիվը, ու ենպես անել, վոր նրանց
տված ապրանքը լավ լինի և եժան նստի:

ՀԵՏԵՎՅԱԼ ԶԵՎՈՎ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻԳ ԿԱՄ ԺԱՆՈՐՆԵՐԻԳ
ՀԵՌԱԳԻՐ ԿՈՒՂԱՐԿԵՄ.

Ուր (հասցեագր. վայրի անունը) ----- Շերևան

Մանրամասն հասցեն, (փողոց, տան №-ը,
բնակար. և այլն) ----- Շահուշյան 6

Ում (ազգը, անունը, պաշտան. հասցեն) ----- Շեսայանիս

----- Կգա՞՞ խանիս -----

----- Ղեղա՞՞ -----

Ուղարկողի հասցեն—Սուրենական, Շրջգործկոմ, ցրիչ Գեղամ Արամյան:

Հեռագիրը գրում են կարճ, կետեր չեն դնում. չեն դնում ամ-
սաթիվը, տեղը (ինչո՞ւ): Հասցեն գրում են կրճատ: Յեթե հեռա-
գիրը շատ չերկար է և կետեր չդնելը շփոթութիւն առաջ կբերի,
ապա կետերը գրում են տառերով («վերջակետ», «ստորակետ»):

Հեռագրի ամեն մի բառին վերցնում են 7 կոպեկ և յուրա-
քանչյուր հեռագրին 15 կոպեկ հավելյալ վճար:

Հայաստանի սահմաններից դուրս հեռագիրը պիտի ուղևորեն
գրել:

37-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՏԵՐԱՍԻԼ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

ՔՈՒՅԵՆ

Իմ նոր գործարան, գալիս եմ քեզ մոտ
սիրում եմ չես քո վեհ տեսքը խրոխտ,
քո հզոր ժխորն ինձ քաղցր է հնչում,
քո յեռուն կյանքը ինձ ուժ ներշնչում:

Հիշում եմ հինը, դու իմ նոր ընկեր,
հիշում ես դու չե՞լ որերը մեր սե,
ի՞նչ եր մեր կյանքը, յեթե վոչ որեր,
լի կարիքներով, կապանքներով սե:

Եհ, ել մի հիշի՛ր անցյալը դու մեր,
փշրել ենք արդեն ժանգոտ կապանքներ,
այժմ հաղթական գալիս եմ քեզ մոտ,
իմ նոր գործարան, հզոր ազմկուս...

Հրազիւր կամ ռազիւր դուրս գրելու համար կարող ես փող փոխադրել և բաժանորդագրվել:

Փողի Փոխադրութեան Թերութիւնի Վրժ Գրիւր

Տերևան

Արքայաւ փողոց N^o 3

«Աւակալ»-ի հրապարակչութեան.

Փոխադրութեան Թերութիւնի Մօտ Զերեմիւն Գրիւր

«Աւակալ»-ի հրապարակչութեան

Խնդրում եմ փէց ամսով յետք որքանակ
«Աւակալ» ուղարկեմ այս հասցեցով

Փոստային բաժանմունք իջևան

Պիլիգանի գաւառ

Կարմիր գյուղ

Արմենի Աւելոնյանին

Արա եւս ուղարկում եմ 6 ամսով բաժնեգրին
յետք ուղարկ:

Ա. Աւելոնյան.

Փետրվարի 3-ին 1928 թ.,

Կարմիր գյուղ.

4-րդ ՀԱՐՅ. ԵԼԵԲՏՐՈՆԿԱՅԱՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԱՐ-
ԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՅՑ-ԴԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

Զորագետ

Գլուխգործ. ՍԱՐԳԻՍ ԱՂԵԿՅԱՆ

Վաճառ չգտնեմ,

վաճառ չսիրեմ,

իմ աչքի լուս,

գլուղացու հուս,

Զորագետ ջան:

Խաւար մտքիս,

ցավոտ ստիս,

բոլոր կարիքիս

գեղ ու դարման,

Զորագետ ջան:

Առաջներում

գլուղի տերեր

տղիտուլթուն,

տղետ տերեր,

դու հո գիտեմ,

նոր լուս սփռող

Զորագետ ջան:

Գրախնդ թափեմ

քարոտ ճամբիդ,

ճամբա բանամ,

ուժիդ, թափիդ

լես դու մեկտեղ

գլուղ տանենք լուս,

գլուղացու հուս,

Զորագետ ջան:

ՀԱՐՅԵՐ

1. Վաճառեղ և գտնվում Զորագետը.
2. Յեղը և հիմնվել Զորագետը և չեղը և պատրաստ լինելու:
3. Ի՞նչ մեծ և երբորոկացաններ կան Հայաստանում:
4. Ի՞նչ ոգուտ են տալիս ելեկտրոկացանները:


ԱՐՏԱԳՐԻՐ ՅԵՎ ԱՊԱ ԸՆԴԳԺԻՐ ԱՅՆ ԲԱՌԵՐԸ, ՎՈՐՈՆԻՐ ՎԵՐՋԱ-
ԿԵՏԻՑ ՀԵՏՈ ՁԵՆ, ԲԱՅՑ ԳՐՎԱԾ ԵՆ ՄԵԾԱՏԱՌՈՎ.

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՁՈՂԵՐԸ

1920 թվի մայիսին Լենինականի, Ղարսի, Ղազա-
խի, Նոր-Բայազետի բանվորներն ու գլուղացիներն
ապստամբեցին դաշնականների դեմ:

Դաշնակներն ապստամբությունը ճնշեցին:
 Ընկան աշխատավորության անձնվեր զավակ-
 ները՝ Ալլահվերդյան, Մուսայելյան, Ղուկասյան,
 Ղարիբջանյան, Սարուխանյան, Սևոյան և մուսները:

39-ԴՂ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ



Մեքենայով.

Ս. ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆ

Մի խումբ ընկերներով եքսկուրսիա չենք գնում Մոսկվայի մոտ գտնվող Խորհրդային անտեսությունը, ուր ցորենը մի կողմից մեքենայով հնձում, են մյուս կողմից թակում:

Հանել եմ ժամացույցս և կանգնել մեքենայի մոտ: Չորս տղա-
 մարդ խուրձ են ածում մեքենայի մեջ և նա վիշապի պես բերանն
 ընկածն իսկույն կուլ է աալիս, իսկ ներքևում ցողունն է հափա-
 քում: Մի մարդ էլ հագլիվ կարողանում է փոխել հատիկով լի պար-
 կերը: Ուղիղ մի ժամ կանգնեցի, չերեսուն պարկ ցորեն դուրս չե-
 կավ:

— Վհրքան է նստում մի փութը, — հարցրի չես:

Մեզ ուղեցկող ընկերն ելեքարո — ինժիներ է. հաշիվ անելով
 ուժի բանեցրած քանակությունը, կիլովատը և հանած ցորենի քա-
 նակությունը՝ դուրս բերեց, վոր փութն արժե 2 կուպեկ միայն:

Այսինքն՝ չեթե մեր գյուղացին ունենար հազար փութ ցորեն,
 քսան ուրբի կվճարեր և մի քանի ժամվա ընթացքում վերջացնե-
 լով գործը՝ ապահովապես ցորենը շտեմարան կածեր և ինքն ազատ՝
 ուրիշ գործերով կպարապեր:

Հիշեցի մեր լեռամնաց գյուղը, հիշեցի սրտի անսահման կըս-
 կծանքով:

ԱՐՏԱԳՐԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ԱՍՈՒՅԹՆԵՐԸ, ՄԻԱՏԵՍԱԿ ԲԱՌԵՐՆ ԸՆԴ-
 ԳԺԻՐ ՅԵՎ ԲԱՅԱՏՐԻՐ՝ ԻՆՉՈՒ ՄԻ ՔԱՆԻՍԸ ՓՈՔՐԱՏԱՌՈՎ ԵՆ
 ԳՐՎՈՒՄ, ՄՅՈՒՄՆԵՐԸ՝ ՄԵԾԱՏԱՌՈՎ:

Աշակերտունի Աղամբին աղամբի չե պահում: Լուսաբացին Ար-
 շալույսը գնաց արշալույսը դիտելու: Եքսկուրսիայի ժամանակ վար-
 դը, Շուշանը և Հասմիկը քաղեցին վարդ, շուշան և հասմիկ:

5-ԲԴ ՀԱՐՅ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻՉՄԻ
 ԴՊՐՈՅՆ Ե.

40-ԴՂ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Բանվորի աշխատանքն արտադրության մեջ
 ծանր է

ԲԱՆՎՈՐ ԱՐՏԱՇ

Տեսել եմ չես ձեզ, նավթահանքերում,
 սև վիշկաների շարքերում ցրված,
 մեծ աշխատանքի վոգևոր գրկում,
 կանառ ու թոկեր ձեռներում բռնած:

Տեսել եմ չես ձեզ, վիշկաների մոտ,
 սև ճահիճների նավթոտ, անցամաք,
 ցեխի մեջ խրված, շորերը՝ կեղտոտ,
 նավթը վորսալիս, զբերում անհագ:

Տեսել եմ չես ձեզ, վիշկաների մեջ,
 ճախարակների չեռնում կանգնած:

Նավթամանների դարդկեղն անվերջ,
հորի բերանին աչքերը հառած:

Տեսել եմ չես ձեզ, վիշկաներում նոր —
ձողեր ու կանառ իրար խառնելիս:
Չերմ աշխատավոր խմբով հանքափոր
ավազոտ գետնի սիրտը խոթելիս:

Տեսել եմ, սիրելի, աշխատանքը—ձեզ,
բանում եմ հանքում ձեզ հետ միասին:
Դառել եմ հանքի զավակ հողեպես,
սև արյան լուղորդ, սև նավթի հողին:

Կանառ—լերկաթե պարան.

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ՆԿԱՐԱԳՐԻՐ ԲԱՆՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆԱՎԹԱՅԱՆՔԵՐԻ
ԲՈՒՐԳԵՐՈՒՄ

Հետևյալ ձևով գրիր ձեր խմբի ընտրությունների մասին.

Մեր որագրից

Հունվարի 27-ին.

Այսօր մեր դասարանական ժողովում դասկոմի նախագահ ըն-
տրեցինք Լուսինե Հակոբյանին, իսկ անդամ՝ Արմենակ Գևորգյանին
և Սարիբեգ Առաքելյանին:

41-ՐԴ ՊԱՐԱՊԱՏՈՒՆՔ

Արհմիությունները կոմունիզմի դպրոց են

Արհեստակցական միությունները կազմակերպում են բոլոր բան-
վորներին: Արհեստակցական միություններում բանվորները ձեռք
են բերում հասարակական աշխատանքի առաջին փորձը: Արհես-
տակցական միությունները սովորեցնում են բանվորներին իրենց
անձնական շահերն ամուր կապել հեղափոխության ընդհանուր խըն-
դիրների հետ: Արհեստակցական միություններում բանվորները սո-
վորում են արդյունաբերության կառավարման: Արհեստակցական

միությունները պատրաստում են մեր տնտեսության, սոցիալիստա-
կան հասարակարգի նոր կառուցողներ: Ահա թե ինչու արհմիու-
թյունները մենք անվանում ենք կոմունիզմի դպրոց:

Արհմիությունների աչք խոշոր դերի՝ կոմունիզմի դպրոց լինե-
լու մասին Վ. Ի. Լենինը գրել է

«Արհեստակցական միությունները, վորպես կոմունիզմի դպրոց,
պետք է սպասարկեն աշխատավոր մասսաների առույտ կյանքի բո-
լոր կարիքներին՝ հետզհետե պետական շինարարության գործի մեջ
գրավելով աշխատավորության ամենալայն շերտերը, միշտ լուսաբա-
նելով նրանց ճանապարհը մեր ծրագրի գաղափարներով, տանելով
նրանց մասնավորից դեպի ընդհանուրը, հետզհետե բարձրացնելով
նրանց անկուսակցականությանից դեպի կոմունիզմը»:

(«Արհեստակցական միությունները» գրից)

ՀԱՐՑԵՐ.

1. Վճր արհմիության անդամ ես. ի՞նչ արհմիություններ կան:
2. Ի՞նչու համար են արհմիությունները:
3. Ի՞նչու չենք արհմիությունները կոմունիզմի դպրոց անվա-
նում:

ԳԻՄՈՒՄ ԳՐԵՑԵՔ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՐԲԵՐՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Ուշադրություն դարձրու, թե ի՞նչ է գրվում ձախ կողմը, ի՞նչ
է գրվում զրանից հետո աջ կողմը. ի՞նչպես է գրվում զիմումը, վճր-
տեղ է գրվում ստորագրությունը, ամսաթիվը և տեղը:

խորատառի միություն
Մարտունակների քեդկոմի
համբարշտի Գալստյանից
Պրմուս

Արան կից ներկայացնելով լրացրած ցու-

չակագրութեան փայտը, խնդրում եմ ընդունել
ինչ խորանձառի միութեան շարքերը:

Միութեան կանոնադրութեանն ինչ հայտ-
նիք չե:

Խաճարչում Գալստյան

29 Մայիսի 1928 թ.

Մարտունական

42-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

Յերկուշաբթի որը Բագվում ցարի ժամանակ

Մ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Յերկուշաբթի չե, ծանր որ. այսօր շատերն են խմում, շափերը
գործի չեն գնացել, հինգ որ անընդհատ աշխատել են, կիրակի
խմել, իսկ այսօր թարմանում են:

Ողետունը շարունակ լիքը: Դուրս են գալիս, մտնում: Յուզոտ
սեղանների առաջ նստած են նրանք: Սեղանների վրա դրված է
ողի, մի կտոր սև հաց, մի ափսեյի մեջ թթու դրած վարունգ կամ
աղի ձուկ: Բոլոր սեղանները բռնված են. բոլորի առաջ նստոտած
են մարդիկ՝ կաշվի նման սև, փայլուն շորերով, դեմքերը, մազերը,
ձեռները կեղտոտ, մրոտ:

Սեղաններից մեկի մոտ, ձեռները կրծքի վրա ծալած կանգնած
էր նիհար, հիվանդ դեմքով, մոտ 27 տարեկան մի կին: Նա ան-
թարթ, լուռ նայում էր նստածներից մեկի վրա, վոր առանց ուշք
դարձնելու՝ մեկը մյուսի լեռնից դատարկում էր ողու բաժակը ու
խուլոտ ձախով մի ինչ-վոր լկտի չերգ չերգում:

— Դեմք... վախվախելով ասաց կինը՝ դառնալով նրան:

— Բավական է, դեմք, աղաչելով կրկնեց նա, քաշելով նրա
թևից:

— Կորիք գլխիցս, — առանց նայելու նրա վրա, գոռաց նա՝ ողու
բաժակն ամուր խփելով սեղանին: — Փողերը իմս են, չես եմ աշխա-
տել, ինչ կուզեմ, կանեմ... Արի դու չե՛լ խմիր... խմիր:

Նա լցրեց բաժակը և կանգնելով, մոտեցավ կնոջը:

— Ա՛ռ, խմիր:

— Յես չեմ ուզում, կորցրո՛ւ:

— Յես հրամայում եմ. չես քո մարդն եմ, դու իմ կի՛նն ես,
թե չե. ամուսինդ հրամայում է, պետք է խմես...

— Խմիր... խմիր... ձախակցեցին սեղանակիցները հռհռալով:

— Անիծվե՛ք դուք... անիծվե՛ք... արցունքները սեղմելով մղ-
կաց նա՝ հրելով իրենից բաժակը:

— Չե՛ս ուզում... չես ինքս կխմեմ... իսկ դու ո՞ւր... թե չե
կշարդեմ, — բռնեցը սեղանին խփելով վորոտաց նա, նստելով տեղը:

— Հո... հո... հո... — գոռաց հարևան սեղանի մոտից մեկը կանգ-
նելով:

— Կորիք այստեղից, թե չե կշարդեմ...

— Ամաչի՛ր, մարդ ես, չերեխալք ունես, տանդ հաց չկա...

— Զհանդամը ձեր գլուխը... ուրդ, շան աղջիկ, թե չե ասում-
ներդ փորդ կթափեմ:

Կինը վախեցած մի քաջ լեռ դնաց, նայեց նրան, շրթունքնե-
րը դողացին, դեմքը ծամածռվեց, արցունքներն սկսեցին հոսել նրա
գունատ այտերի վրայով:

— Դու... դու... կմկմաց նա և ել չկարողացավ շարունակել:
Արցունքները խեղդեցին նրա ձախը, և նա արագ դուրս գնաց:

— Ե՛յ... կես շիշ ողի...

ՀԱՐՅԵՐ.

Իսկ ինչո՞ւ այժմ բանվորներն առաջվա նման դիստանսներում չեն
փչացնում իրենց կյանքը:

ԴԻՄՈՒՄԻ ՀԵՏ ԳՐԵԼ ՆԱՅԵՎ ԱՆԿԵՏԱՆ

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈԽՈԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ.

ԲԱՆՎՈՐ ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՑ

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հայտնելով իմ մասին հետևյալ տեղեկութունները, — խնդրում
եմ ընդունել ինձ դրամարկղի անդամների շարքերը

1. Ազգանունը Վարդանյան
2. Անունը Բարզեն
3. Հայրանունը Հարությունի
4. Ծննդյան թիվը 1895
5. Մենակ թե ընտանիքավոր ընտանիքավոր
6. Ընտանիքի անդամների թիվը 5
7. Նրանցից գտնվում են իմ պահպանության տակ 3

Բարզեն Վարդանյան

« 1 » հունիսի 1928 թ.

Ստեփանավան

43-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Արհմիությունները խոշոր կուլտուրական աշխատանք են կատարում և նպաստում են աշխատանքի արտադրողականության բարձրացման

Խորհրդային իշխանության տված ոգուանների մասին խոսելիս, չես ամենից առաջ պիտի ասեմ, վոր իմ ամենամեծ ոգուտը չեղել է այն, վոր 1922 թվից հետո չես զրազիտություն եմ սովորել: Առաջ ել շատ ելի ուզում զրել-կարգալ սովորել, բայց ով հնարավորություն ուներ: Որական 12 ժամ աշխատում ելի և ապրում այնպիսի վատ պայմաններում, վոր զրազիտության մասին մտածել ել չեր կարելի: Իսկ հիմա պատկերը բոլորովին փոխվել է: Հիմա մեր գործարկումը խոշոր կուլտուրական աշխատանք է տանում մեր մեջ, իսկ աշխատանքի պայմաններն այնքան լավացել են, վոր մարդ ուզի-չուզի, պիտի մտածի և իր կուլտուրական ու մտավոր մակարդակի բարձրացման մասին:

Այս լոթ տարվա ընթացքում մենք շատ խոշոր հաջողություններ ենք ունեցել: Յես ինքս արտադրական հանձնաժողովի անդամ եմ և տեսնում եմ, թե ինչպես տարեցտարի բարձրանում է մեր աշխատանքի արտադրողականությունը: Հիմա մենք բանվորներս ըզգում ենք, վոր չեղի կառավարությունը մեր ձեռքին է: Մեր բոլոր որենքները բանվորների և գյուղացիների շահերն են պաշտպանում:

«Ա.Երասմով» հանդեսից

ՀԱՐՅԵՐ.

1. Ինչո՞ւ ալժամ բանվորները զրազետ են դառնում:
2. Ի՞նչ բան է արտադրական հանձնաժողով:
3. Արհմիությունն ի՞նչ ոգնություն է ցույց տալիս գործազուրկներին:
4. Ի՞նչ ոգնություն է ցույց տալիս սոցիալական ապահովագրությունը հիվանդներին, հաշմանդամներին և աշխատանքի մեջ մահացած բանվորների ընտանիքներին:

ԴԻՄՈՒՄ ԲԱՐՁՐ ՏԻՊԻ ԴՊՐՈՅԻ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լեւոնասկանի Գալարիքչուրոյի
կրաագրագետների դպրոցի
վարիչին

Կառույցողների միության անդամ
Փեղամ Պալքյանից

Պիւնուճ

Կանկանայով գրագետ դառնալ՝ խնդրում եմ ընդունել ինչ Զեր կրաագրագետների դպրոցը: Լիկկայանք վերգայրել եմ անցյալ քարի:

Փեղամ Պալքյան

հոկտեմբերի 1-ին 1927 թ.

Լեւոնասկան.

ՅԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԱՄՐԱՅՆԵՆՔ ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1-ԻՆ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԲԱՐԵԼԱՎՈՒԾ ԵՆ
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ



44-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գյուղխորհրդի նորընտիր նախագահը

ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Ժողով ե ահումբում գյուղի,
Ժողով բազմամարդ, ժխոր,
տղամարդ, կնամարդ, ալքի,
յեկել են, ներկա յեն ախոր:

Ահումբի ցածրանիստ բեմից,
խորհրդի նախագահ Վերդին
զեկուցում՝ հաշիվ ե տալիս
մի տարվա գործերի մասին:

Խոսում ե քողարկված, մթին,
լ՛նչ ե ասում, ո՞վ գիտի, վոչ վոք.
անկապ են խոսքերը Վերդու,
դահլիճում լսվում ե բողոք:

Յեղութներ: Ձեկուցման առթիվ
գեղըցիք խոսում են, վիճում .
բացերը բազմազան, անթիվ,
գեթ մի խոսք լավը չի լսվում:

Ու մեկ ել չենում ե մի կին,
կին-բաժնի բալլեիկ Վարդին.
դա դիփից կտրուկ ե խոսում.
են կողմում հուզվել ե Վերդին:

— Հանցանքը մերն ե, ընկերներ,
ասում ե իր խոսքում Վարդին.—
մեր գյուղը հազար հոգսի տեր,
բալց ուն ենք ընտրել, վոր գործի:
Դե, Վերդին հին մարդ ե, գիտեք,
կաշառքի ու գինու սովոր.
Նմանը չի կարող չերբեք,
աշխատել նոր հոգով, սրտով:

Թող Վերդին մեզ խրատ դառնա,
և գյուղը թող աչքը բանա,
վոր մեր նոր խորհրդի կազմում
հին ցեցեր, գալլեր չերևան:

Ընդմիջում: Մի քանի խմբեր
աղմուկով կազմում են ցուցակ.
հեյ գիդի, խորհրդում տեսնես,
ովքե՞ր են անցնելու հիմա:

Լուսթյուն: Ու մեկ ել մի ձայն.
զանգակը զնգում ե անհանգիստ,
Ժողովի նախագահն լելավ,
կարդում ե ցուցակները դիփ:

Ի՛նչ զարմանք, կին բաժնի Վարդին
ամեն մի ցուցակի մեջ կա.
կանչում են տեղերից՝ շատեր,
նախազան թող լինի հենց նա:

Նորընտիր խորհրդի նիստին,
նախազան ընտրում են Վարդուն:
Վողջո՛ւն քեզ, վողջո՛ւն քեզ, նոր գյուղ,
վողջո՛ւն քեզ ղեկավար, նոր կին:

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ աշխատանքներ ե կատարում գյուղխորհուրդը:
2. Ի՞նչպես ե աշխատում ձեր գյուղխորհուրդը:
3. Ի՞նչ ե արել ձեր գյուղխորհուրդը գյուղացիների տնտեսության բարելավման համար:
4. Ոգնում ե դպրոցին, կոոպերատիվին:
5. Ի՞նչ խմբակներ կան ձեր գյուղխորհրդում:

ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՐԵՑԵՔ ԶԵՐ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱ-
ԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԳԱՄՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Մեր գյուղխորհրդի նախագահությունը

1.
2.
3.

ՏԵՂԵԿԱՆՔ. Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ.
Հ. Ղ. Ճ. Մ. Յ. Ն. Շ. Ո. Զ. Պ. Զ. Ռ. Ս. Վ. Տ. Բ. Յ. Փ. Բ.
Ֆ. ՈՒ.

45-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Դասարանը բաժանել յերկու խմբակի և յուրաքանչյուր խմբակին լուռ կարդալ տալ: Յերկու անգամ կարդալ տալուց հետո՝ յուրաքանչյուր խմբից 2 հոգու պատմել հարցներ:

Կինը հիմա ազատ քաղաքացի յե

ԱՐԱՔՍ

Շուշան ջան, մի ուրախ բան ասեմ, վաղը կանանց ժողով ե, միասին կզնանք, դու յե կզովես, միշտ կզնաս ժողովներին: Ել յերբեք չես տխրի, նոր-նոր շատ բան կսովորես: Մեր թաղից միքանի հարմներ ել եմ տանելու: Հերիք ե վտաններդ կապ՝ տանը նստեք, որորոցն ու իլիկը շարժեք:

Գիտեմ, վոր նոր կարգերն ազատություն բերին կնոջը. ել լա-
չակը բերաններիդ՝ չխոսկան չպիտի նստեք. պիտի գնաք ժողով,
ձայն տաք խորհուրդներին:

Շուշանը սիրառատ նայում եր Մարույի շուրթերին և վոզկոր-
վում:

Առաջին անգամ չեր Մարոն այդպես խոսում, նա Շուշանին
շատ բան եր սովորեցրել:

Մի տարի յեր՝ Մարոն կոմսոմոլում եր. աչքի յեր ընկնում իր
ընդունակություններով: Գիր եր սովորել. ել ով կմրցեր նրա հետ:
Սիրում եր ընկերների հետ վիճել, ժողովներին անհանգիստ եր ու
խոսուն:

Վոզջ գյուղը ճանաչում եր Մարույին: Մոտիկ գյուղերն եր գը-
նում, խոսում, միտինգներ անում, աղջիկներին կոմսոմոլի մեջ քա-
շում:

Շուշանն ու Մարոն դեռ խոսում ելին, յերբ ներս մտավ Մա-
րույի մայրը. նա շալն առավ գլխից ու անհամբեր դարձավ Մա-
րույին:

— Ես ի՞նչ եր ես պատմում. ամբողջ գյուղը բամբասում ե քեզ:
Ասում են՝ աշխարհում ել բան չի մնացել գլխիդ ես հավաքած: Ին-
չից ես խոսում: Եդ քոնցոմոլ ա, ի՞նչ զանրումար ա, քեզ փչացրեց:
Վույ աստոժ, յերեսս վոտիդ տակ, ես տարիքի կնիկ եմ, ես բանը
տեսած չեյի: Կապդ կտրել ես, դուրս ընկել, հիմի յել հարսիդ ես
գլխահան անում:

Մարոն հեզնանքով նայում եր մորը:

— Ագի, հերիք ե, իզուր մի մաշի պառավ կոկորդդ, յես իմ
ճամպեն ունեմ. նոր աշխարհի հետ եմ գնում, հազար խոսի, ոգուտն
ի՞նչ, թող պառավները բամբասեն:

Մայրը կատաղությունից պոկում եր մազերը:

ՀԱՐՑԵՐ.

1. Ո՞վ եր Մարոն:
2. Ինչպե՞ս ե նա գրավում գեղջկուհիներին դեպի պատգամա-
վորական ժողովները:
3. Մայրը կարողանո՞ւմ եր նրան յետ պահել իր ճանապարհից:

ԱՅՍ ԶԵՎՈՎ ԳՐԻՐ

Մեր գյուղի

Գյուղխորհրդի նախագահը _____

Փոկի նախագահը _____

Կոռպորատիվի Վարչության նախագահը
 Գլուղվարկային ընկերության նախագահը
 Դպրոցի վարիչը
 Խրճիթվարը
 Կոմբլիշի քարտուղարը
 Կոմբերիտբլիշի քարտուղարը

46-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ԽՈՒՍԱՓԵՆՔ զՐԲԱԳՆԵՐԻՅ և հեքիմներից

Հենց հաջորդ որը լուսաբացին Ռեհան բաշին վերցրեց չերկուսե հավ, մի գլուխ կարագ, պանիր, թագա հաց ու ծոմ-ծոմ ճանապարհ ընկավ:

Գրբացը քաղցած գելի պես ատամները կրճատացրեց կապոցը բաց անելիս:

Նա անմիջապես մի հավը մորթել տվեց, արյունը լցրեց մի ամանի մեջ, վառված մոմը բռնեց ձեռքին ու սկսեց գուշակել:

Ռեհան բաշին շունչը բռնած կուշ եր չեկել նրա մոտ ու անհամբեր, աչքերն անվերջ գցելով դիմացինի դեմքին՝ ուղղում եր ընդհանր հարսի վիճակն իմանալ:

— Հարսդ առաջի գիշերը չի՞ վախեցել, չի՞ մրսել, — սկսեց գրբացը բամբ ձախով, արյան մեջ նայելով:

— Մրսել ե, մրսել ե, — պատասխանեց Ռեհան բաշին, չերկուորվա հարս եր, ամաչում եր ինձանից, մենակ մտավ սառը հացատուն, լողացավ, մրսեց, մեջքը բռնվեց:

— Ա՛, հենց եդ ե, — ընդհատեց գուշակողը, բա ըսկի կթողան հարսին առաջի հետ մենակ լողանա, բա պառավել ես, ետենց բաներ չես հասկանում, հենց եդ մենակ ժամանակ սատանեքը մտել են նրա փորն ու դրանից ել գավակատունը բռնվել ե:

— Ծի՛շա, — բացականչեց Ռեհան բաշին սարսափած, — բա դրա ճանրը:

— Ծանր ես ե, վոր ասածս անես. հենց քո բաղդիցն ել մի շաբաթից Տընդեզն ե, են որը հարսիդ առավոտից կնստացնես սառ թոնրին, վոչինչ չես թողնի վոր ուտի, բերանը թաշկինակով կկապես, ձեռն ու վոտքն ել, չունքի սատանեքը ջիգրու կարող են նրան շարժարել ու նա լել կսկսի ձվձվալ, փախչել: Մե եծի մազից գործած թոկ կախ կտաս չերթիկիցը, մեջքը կկապես, դու լել դուռը պինդ կփակես ու տանից կհեռանաս, իրիկվանը Տընդեզը կտրին կփռես, հարսիդ վեր կբաշես, կրակի վրեցը թող մի տաս հետ անց

Վենա ու աղոթք ասի, սատանեքն ամբողջ որը քաղցից թուլացած հենց կնկնեն կրակի մեջ ու կվառվեն:

Ռեհան բաշին դեղնել եր վախից:

— Իսկ հետո մի չաղ վոչխար մատաղ կանես Աստվածածնին, վոչխարի դմակն ու փափուկ տեղերը կբերես, վոր կրակին գցեմ, ծուխ տամ սենյակիս, թե չե են սատանեքի բարեկամները կարող են ջիգրու գալ, տունս բնակվիլ:

— Հավ, կանեմ, կանեմ, արևիդ մատաղ, իսկ դրանից հետո հարսս յերեխա կունենամ:

— Են ել վո՛նց, իրար չետևից:

— Վո՛ւշ, վոսկի բուսնի բերանումդ, — ուրախությունից ել չեր իմանում ի՞նչ ասի Ռեհան բաշին:

Նա վողկորված ծոցից հանեց մի կեղտոտ թաշկինակ, հանգուցները բաց արեց ու դողդողալով գրբացին տվեց միքանի արծաթ:

— Առ, ես ել առ, հալալ լինի քո աշխատանքը, սուրբ կնիկ:

— Համա հարսիդ չես ասի, վոր սատանա կա փորումը, — պատվիրեց գուշակողը, — թե չե կվախենա:

Ռեհան բաշին գլխով արեց ու դուրս յեկավ:

(«Հայաստանի աշխատավորուհուց»)

ՀԱՐՑՆԵՐ.

1. Ձեր գլուղում գրբացներ և հեքիմներ կան. ովքե՞ր են նրանց պոհերը:

2. Ձեր գլուղխորհուրդն ի՞նչպես ե կովում դալլաքների դեմ:

Ձեր գլուղի խրճիթ-ընթերցարանում առողջապահության անվտանգ կազմակերպեցե՞ք. նրա համար դասարանում կոլլեկտիվ ուժեղով առողջապահական կանոններ մշակեցե՞ք և պլակատներ գրեցե՞ք:

Առողջապահության անկյուն

Ի՞նչ գուշ չի՞ խեղ:

*Ի՞նչ գրից առաջանում են՝
 քի՞թ, խոչերա, փորիարիմք և
 փորի փորդ:*

Ուրեշիք պաշարա-
նեցե՛ք Լաւճերից:

Լաւճերը փարակ են քարա-
ծու՛մ:

Ուրեշուց առագ շեռ-
ներդ լիւայե՛ք:

Կեդրոս շեռերը քոր և քոս
հիւսնորոշյուն են սրանուն:

Պարնին ըն՝ թփե՛ք:

Խորիւր թոփախոր փարակ է
քարածուն:

Ա՛խ ծիւե՛ք.

Ա՛խ հարբե՛ք.

47-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Տերտերն ու Պետապը

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Մեր հարեան մեծ շենում վար ու ցանքս կար.
մի ըռպելում լեղավ նա կարկտահար:
Հաժաքվեցին ջրհորի մոտ նրանք ժողով.
կարկուտի դեմ մեծ կռիվ—վճռեցին դեղով:
Խորհուրդ տվեց տերտերը—կարկախ դեմ
լերեսներդ խաչ հանեք՝ լեռ աղովեմ:
Դուրս հանեք խաչ ու խաչվառ, հագնեմ շուրջառ.
անենք թափոր, անդաստան, գդեմ բուրվառ.
որհնեմ չորս կողմն աշխարհի, բերեմ ոգուտ.
փող տվեք ինձ աջահամբույր, կտրեմ կարկուտ:
Փող ժողովեցին իրար մեջ. են տերտերը
թափորն առավ ու գնաց ցան արտերը:
Բալց մաղթանքը չոգնեց, վոր կարկուտ չգար.
ցանքսերն լեղան եղ ամուսն կարկտահար:
Ասում ելին գլուղացիք.—Ափսոս, վաչ, վաչ,
փողերն արինք զուր տեղը տերտերի փաչ:
Լավ չեր փողը տանելինք Պետապ, Պետապ.
նրա հետ հաստատելինք ամուր կապ, կապ:
Ապահովագրվելինք մենք Պետապում.
տերտերների նման՝ մարդ չի խաբում:
Հիմա կստանալինք հո կլոր գումար,
մեր կարկտահար արտերի, ցանքսերի համար:
Տերտերները մեզ պետք չեն—աղովք կարդան.
լեղբայրներ, գնանք Պետապ, գրվենք անդամ:

ՀԱՐՑԵՐ.

1. Մաղթանքները կոգնեն գլուղացուն. կարելի՞ չէ հավատալ տերտերին:
2. Ի՞նչ ոգուտ է տալիս Պետական ապահովագրութունը:

ՀԵՏԵՎՅԱԼ ՉԵՎՈՎ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ ԳՐԻՐ ՅԵՎ ՏՈՒՐ ԳՅՈՒՂՍՈՐ-
ՀՐԴԻՆ, ՎՈՐ ՔՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱՅՆԻ

Լրացորագիր.

Լրացորում եմ խաղափայլ Կարապետ Գրի-
գորի Մեփրնյանին սրանապու Պետրապի Լեն-
գավառի լրացորից իմ սարկած կոսի համար
ինչ հասանելի գումարը՝ խառատուն (40) ռուբ.:

Չապարապար գյուղացի՝ Մինաս Մեփրյան.

Մարտի 20-ին 1928 թ.

Չապարապար.

48-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ապահովագրու թյուն պարտադիր — բիշ և, բիշ.
ապահովագրվիր կամավոր — լրացուցիչ

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Վառվեց տունը
խեղճ Բաբելի,
սահմանն անցավ
և Աբելի:

Ենտեղից ել
սաստիկ թափով
բռնեց գլուղը
խոշոր չափով:

— Անդիտակից,
համառ Աբել,
ո՞վ եր խեղճով,
բեզի խաբել,

վոր կանելի
տունդ ստրախ,
ու ընկնելի
հիմա ախ, վախ...

Հլա սրա
բիթ ու մռթին,
դեհ կծկվի
ձմռան ցրախ:

Բաց Աբելը,
մարդ գիտակից,
ապահովեց
հուր-կրակից:

Լրացուցիչ
բիշ վճարով,
և ստացած
նոր գումարով

Իրեն համար
նոր տուն շինեց,
մտավ մեջը,
տաք-տաք քնեց:

ԾԱՆՈԹ.

Ապահովագրվելու համար ամեն մի ապրանքի գումարը պետու-
թյան կողմից ջուկ-ջուկ վերոշում են, իսկ Պետապը պարտավոր և
վճարել, չեթե ապրանքին փորձանք պատահի:

Սա կոչվում է ապահովագրի:

Ապրանքները կարող են զանազան չափի ապահովագրի ունե-
նալ: Պարտադիր ապահովագրության ժամանակ, ապահովագրի վո-
րոշում և պետութունը: Իսկ կամավոր ապահովագրության ժամա-
նակ՝ ապրանքի տերը: Ապահովագրի վերոշելուց հետո արդեն, կա-
րելի չե իմանալ, թե ինչքան պիտի վճարել Պետապին:

Հենց այս գումարը կոչվում է ապահովավճար:

ՀԱՐՅԵՐ.

1. Ո՞վ և ձեզանից ապահովագրել ցանքսը, տունը, տավարը:
2. Ել ի՞նչ կարելի չե ապահովագրել:
3. Վճրքան ապահովավճար եք տալիս:
4. Ի՞նչպես պետք է ապահովագրվել. ո՞ւմ պետք է դիմել ա-
պահովագրելու համար:

ՀԵՏԵՎՅԱԼ ՉԵՎՈՎ ՍՏՅԱԿԱՆ ԳՐԻՐ.

Արապական

Արապա Պետրապի Լենգավառի լրացոր
Մաճար հյուսիսայնից Չապարապարի գյուղացի

Մագգեն հարուստության ստեղծ կոսի հա-
մար նրան հասանելի գումարը՝ (40) ռուբլի:

Կարապետ Միսիրյան

Մարտի 22-ին 1928 թ.

Լենինական.

49-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Շրջիկ կինոն յենթաշեփ գյուղում

ՄԱՐՏԻ 2 ԱՐՄԵՆ

Սալակը կանգ առավ գյուղիսորհրդի դռան:
— Զահեյներ, ո՞վ կա, գործիքներն առեք վար:
— Կոմյերի՞տ ես:
— Այո:
— Ապա՛ դե շուտ, վազի,
Իմաց տո՛ւր՝ թող բոլորը խրճիթ գան:
Լցվել են խրճիթը, խրճիթը դժժում է,
խրճիթը դժժում է փեթակի պես:
— Ես ի՞նչ լույս եր, ընկավ սավանի վրա,
նորից մոռե՞ ելավ. աբա մի տես...
Սկսվեց. ֆուռում է մեքենան անկյունում,
ժապավենը պար է գալիս ու պտտում.
Զարմացքի սղաղակ ծալր առավ խրճիթում.
— Վահ, ես ի՞նչ տներ են, փողոցները լեն,
ու ենքան, ենքան մարդ գնում է ու գալիս,
կարծես եղ չերկրում կրակ է ընկել:
Բանիմաց տղա չե կոմյերիտ Լենոն,
բանակում է չեղել ու աշխարհ տեսած խոսում է. —
— Գյուղացիք, տեսնո՞ւմ եք ես բանը, —
մեր ազիզ Մոսկովի պատկերն է սա:
— Եստեղից Լենինը հող տվեց գյուղացուն
դուրս քչեց արնախում կուլակին, աղին:

ՀԱՐՑԵՐ.

1. Ձեր գյուղը շրջիկ կինո բերե՞լ են:
2. Ձեր գյուղը քաղաքում շեփ ունե՞ի:
3. Ձեր գյուղի կոմյերիտներն ի՞նչ կուլտուրական աշխա-
տանք են տանում:
4. Ի՞նչ ոգուտ է տալիս գյուղացիներին ձեր խրճիթ-ընթեր-
ցարանը

ՀԵՏԵՎՅԱԼ ՁԵՎՈՎ ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱԶՄԻՐ ՁԵՐ
ԽՄԲԻ ՀԵՐԹԱՊԱՀՆԵՐԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՅՈՒՑԱԿԸ.

Մեր խմբի հերթապահների ցուցակը

Նոյեմբերի 11-ից մինչև 16-ը

ԱՄՍԱԹԻՎ	ՈՐԵՐ.	ԱԶԳԱՆՈՒՆ ՅԵՎ ԱՆՈՒՆ.
11.	Յերկուշաբթի	Ավագյան Սմբատ
12.	Յերեքշաբթի	Բաղալյան Արտաշես
13.	Չորեքշաբթի	Գրիգորյան Դանիել
14.	Հինգշաբթի	Զուրաբյան Սաբո
15.	Ուրբաթ	Թապալսյան Յեվգինե
16.	Շաբաթ	Իսկանդարյան Արփենիկ

50-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Առաջ և հիմա

Միլիոններ Արգունանը գյուղի հարուստներից եր: Նրանց հարու-
ստությունը վորդեցվորդի չեք գալիս: Միքանի տարի առաջ Արգու-
նանը հինգ աչգի ուներ, տաս դեսյատին հող, վեց գույգ լժկան,
տասնհինգ կթան կով, միքանի հարյուր գլուխ վոչխար: Եղ ժամա-
նակները նրա քեֆին քեֆ չեր համար: Ինչ խոսք, վոր նա չեր գյու-
ղի տանուտերը:

— Միլիոններ Արգունանը չեմ չես. ինձ Արգունան Միլիոնիչ
ասեք.

Բայց ահա մի որ աչգ բոլորը ջրի նման գոլորշիացավ, ծխի
նման ցնդվեց: Արգունանին մնաց մի տուն՝ իր ընտանիքով ապրե-
լու և մի կտոր հող՝ վարելու ու ցանելու համար: Ավելորդ սենյակ-
ներում տեղավորվեցին գյուղի հիմնարկները, հողերն ել բաժանվե-
ցին հողագուրկ գյուղացիներին:

Բայց ելի Միրզենց Արզումանը չեր կոտորվում ու թագունւ
րնկած տեղն ասում եր. «Ուղտն ինչքան սատկի, կաշին մի իշա-
բեռ կլինի. չես Արզուման Միրզոյիչ ծնվել եմ, Միրզոյիչ ել պի-
տի մեռնեմ»:

Հնձի յեռուն ժամանակն եր: Արզումանն ուզում եր իր արար
ժամանակին քաղի՝ մեկ նրա համար, վոր ցորենը չփչանա, մեկ ել՝
վոր Միրզոյիչի անունը չկոտորի: Բայց արի ու տես, վոր բանը
թաքսվել եր: Գյուղի բատրակները, վոր առաջ Հնչին վարձով ծա-
ռայում եյին Միրզոյենց Արզումանին, հիմա կազմակերպվել են, ել
նրա առաջարկած կես մանեթ որավարձով աշխատել չեն ուզում:

— Տո Մխո, չերեկ-մեկելորը չերկու շահիով որենը ցելս ելի
կրում ինձ համար, հիմա մանեթ ես ուզում:

— Են գնաց, — պատասխանում եր Մխոն, — հիմա աշխարքն ել
ե փոխվել մարդիկ ել: Հիմա ամեն մարդ իր աշխատանքի տերն ե:

Վհնց անի Արզումանը. հաշվում ե, վոր իրան քսան հնձվոր
ե հարկավոր ամբողջ արար հնձելու համար, քսան հնձվոր — քսան
մանեթ. բա կալը կրելը, ծեծելն ու մաքրելը, ջրաղաց տանելը, եղ
հւր կհասնի: Չե, բանը ծովել ե: Եսպես գնալով՝ աղա Միրզոյիչը
վերջը որհացի կարոտ կմնա:

Ամբողջ գիշերն Արզումանը չքնեց, շուռումուռ եր գալիս ան-
կողնում:

Մյուս որը կլնը տեսավ, թե ինչպես Արզումանը սուսուփում
միքանի լավաշ կապեց շալակը, մանգաղը վերցրեց ու գնաց... իր
արար հնձելու:

— Եղ հւր, Արզուման Միրզոյիչ, ծաղրաբար հարցնում եյին
գյուղացիք:

Արզումանը չեր պատասխանում. գլուխը կախ, մտքերի մեջ
ընկած՝ շտապում եր դեպի արար:

ՀԱՐՑԵՐ.

1. Ո՞վ եր Միրզենց Արզումանը և ինչ ունեք նա առաջ:
2. Ի՞նչ չեղավ նրա վիճակը խորհրդայնացումից հետո:
3. Առաջվա նման նա կարո՞ղ եր շահագործել բատրակներին:

ԱՐՏԱԳՐԻՐ ՏՈՂ-ՏՈՂ, Ա. Ո. ՈՒ, Ի. Ե, Ը ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐՆ
ԸՆԴԳԺԻՐ.

Որը-որին — հետևիր նորին

Բատրակ, չերկիրը	պաշտպանիր շահը
դու կառավարիր	գյուղացիքս դասի,
ու նոր կենցաղին	վորտեղ կարիք կա՝
չեղիր հիմնադիր.	ոգնու թխան հասի:

Մտիր գյուղխորհուրդ՝	Մտիր կոոպերատիվ
նրան գործակից,	գործերդ վարի,
անցուր կուլակին	բարձրացուր գյուղը
ասեղի ծակից.	հա տարեցտարի:

51-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Խորհրդային դատարանը պաշտպանում ե կնոջ իրավունքները

Դարալագյազի կենտրոն Քեշիշքենդում գլխավոր դատարանի
նստաշրջանն ե: Դատավորի աջ ու ձախ կողքերին նստած են 2
պատգամավորուհի ատենակալներ:

Ներկա չե նաև փոքրիկ, գունատ ու տանջված դեմքով 8-ամյա
Թավազն իր մոր հետ. նա չի հասկանում՝ ուր և ինչի համար են
իրեն բերել այստեղ ու ապշած չորս կողմն ե նայում:

Դատարանի նախագահը կարդում ե. քննվում ե գործն ըստ
մեղադրանքի Չարքյազ Հուսեյին ողլու անչափահաս Թավազի հետ
բռնի ամուսնանալու համար:

Պատգամավորուհի Փաթման ներկայանում ե դատարանին, վոր-
պես վկա:

Ընկեր դատավորներ, — սկսում ե նա կրակոտ աչքերով ու
վստահ, վորովհետև համոզված ե, վոր հաղթանակն իրենն ե, — չես
այս գործը դատարան եմ տվել նրա համար, վոր սա որինակ դառ-
նա մեր գյուղացիների համար՝ բաց անելու իրենց աչքերն ու խու-
սափելու այսպիսի մի մեծ հանցագործություն կատարելուց: Խոր-
հրդային իշխանություն որենք խախտվել ե: Մենք գիտենք, վոր ան-
չափահաս ամուսնությունը նախ ամբողջովին փաստում ե մարդու
առողջությանը և մյուս կողմից կտրում ե կնոջը հասարակական
կյանքից ու աշխատանքից:

Չարքյազը՝ խորհրդային իշխանության աչք տղրուկը՝ մանուկ աղջկան դժբախտացրել ու ամբողջովին անընդունակ է դարձրել վորեն գործի համար, քաջայել է նրա առողջութունը. հոկտեմբերիկ Թավադը չի հասկանում նույնիսկ իր դերն ու դրությունը: Յես համոզված եմ, վոր խորհրդային դատարանը չի դժվարանա Չարքյազին դատել աջնպես, վոր նա յերբեք չմտածի նման գործ բռնել, դատի աջնպես, վոր դատարանակվեն Չարքյազն ու մեր բոլոր գյուղացիներն ու լսողները: Մենք նոր կենցաղ ենք հիմնում, իսկ Չարքյազները հինն են ուզում վերականգնել:

Դատարանի դահլիճում նստած գյուղացիները վոգևորվում են: Բացականչում — «սաղոյ» սաղոյ: Ընդմիջումից հետո հայտարարվում է դատավճիռը:

Չարքյազը յենթարկվում է 5 տարվա ազատազրկման (կալանքի):

Ամբողջ դահլիճը դղրդում է ծափերից, ամենքն ուրախ ու գոհ են, վոր վոճրագործն ստացավ արժանի պատիժը: Իսկ պատգամավորուհի Ֆաթման հոգով հանգիստ է ուրախ է, վոր ճշմարտությունը հաղթող հանդիսացավ:

(«Հայաստանի աշխատավորուհուց»)

ՀԱՐՑԵՐ.

1. Ո՞ւմ շահերի պաշապանության համար է Խորհրդային Դատարանը:

2. Ո՞վ է ընտրվում դատավոր: Իսկ ո՞վ կարող եր լինել դատավոր ցարի ժամանակ:

3. Ինչո՞ւ կնոջ մասնակցությունը կարևոր է ժողդատարանում:

ԳՐԻՐ ԱՍՈՒՅԹՆԵՐ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՌԵՐՈՎ.

գյուղխորհուրդ, ֆաղխորհուրդ, բանկոտայ, գավգործկո՛ւ, շրգգործկո՛ւ, գավկո՛ւ, բանակո՛ւր, բանֆակ, կոնյերիքական, յուսքա՛հն, ֆաղյուսփար, յուսիքահանգիջ, քեղկո՛ւ:

2-ՐԴ ՀԱՐՑ. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԼԱՅՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՄԱՍ-ՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՅԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

52-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ո՞վ է զրկված ընտրական իրավունքից

ա) Այն մարդիկ, ովքեր դիմում են վարձու աշխատանքի ոգ-նությանը՝ շահ ստանալու նպատակով.

բ) Նրանք, ովքեր ապրում են վոչ աշխատանքային յեկամուտով, ալիքն դրամազուլսների տոկոսիբով, ձեռնարկությունների յեկամուտով, կալքից ստացվող մուտքերից և այլն.

գ) Մասնավոր առևտրականները և առևտրական միջնորդները.

դ) Տերտերները, վարդապետներն ու հոգևորական սպասավորները.

յե) Նախկին վոստիկանության, ժանդարմների հատուկ կորպուսի ու պահնորդական բաժանմունքների ծառայողներն ու գործակալները.

զ) Նրանք, ովքեր սահմանված կարգով ճանաչված են հոգեկան հիվանդներ և տկարամիտներ: Նմանապես և այն անձինք, ովքեր զրկված են խնամակալության տակ.

ե) Նրանք, ովքեր շահասիրական և վարկաբեկիչ հանցագործությունների համար դատապարտված են որենքով կամ դատական վճռով վորոշ ժամանակով:

Ո՞վ իրավունք ունի ընտրելու և ընտրվելու

Խորհուրդների անդամ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն Խորհրդային հանրապետությունների յերկու սեռի պատկանող հետևյալ քաղաքացիները, անկախ նրանց կրոնական դավանանքից, ազգությունից, բնակավայրից և այլն, վորոնց հասակը ընտրության որը տասնութից պակաս չէ.

ա) Այն անձինք, ովքեր իրենց կյանքի ապրուստը հալթալթում են արտադրական ու հասարակական ոգտակար աշխատանքով, բանվորներն ու ծառայողները և այլն գյուղացիները, վորոնք չեն ոգ-տվում վարձու աշխատանքից շահ ստանալու նպատակով.

բ) Խորհրդային բանակի ու նավատորմի զինվորները:

ՀԱՐՑԵՐ.

1. Ո՞վ իրավունք ունի ընտրելու և ընտրվելու:
2. Ո՞վ է զրկված ընտրելու իրավունքից:
3. Վերջին անգամ ձեր գյուղխորհրդի վերընտրություններն ի՞նչպես կատարվեցին:
4. Ովքեր զրկվեցին ընտրական իրավունքից ձեր գյուղում:

ԱՐՏԱԳՐԻՐ ԼՐԻՎ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Մեր խորհրդային չեղրում՝ իշխանութունը գյուղում — գյուղխորհուրդն է, քաղաքում՝ քաղխորհուրդը, շրջանում՝ շրջգործկոմը, գավառում՝ գավգործկոմը, Հայաստանում՝ Հայկենտգործկոմը, Անդրկովկասում՝ Անդրկենտգործկոմը և խորհրդային Միության մեջ՝ Համամիութենական Կենտգործկոմը: Դրանք իրենց գործունեության համար հաշվետու չեն համապատասխան խորհուրդների համագումարների առաջ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կրճատ անուններ

Գյուղխորհուրդ
Քաղխորհուրդ
Շրջգործկոմ

Հայկենտգործկոմ

Անդրկենտգործկոմ

Կենտգործկոմ

Լրիվ անուններ

Գյուղական խորհուրդ
Քաղաքային խորհուրդ
Շրջանային գործադիր կոմիտե

Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտե

Անդրկովկասի կենտրոնական գործադիր կոմիտե

Կենտրոնական գործադիր կոմիտե



Նոյեմբերի 29-ը

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Մեր չեղիրն առաջ սոված եր և մերկ:

Սերը՝ սուր դառած, սաք արյունը՝ ջուր, չեղիրն եր հյուծվում՝ սովին անձնատուր:

Կարգ կանոն, որենք չկար խեղճ չեղրում, մաուզերիստներ լավում թալանում:

Ազատ չեղ կինը՝ հլու հպատակ. իրավագուրկ եր ու միշտ վոտի տակ:

Կանչված է կինը գործերի վարիչ. նա պիտի փոխի հին կյանքը ճահիճ:

Նոր է կենցաղը խորհրդային գյուղի. տրակտորն ընկավ կուրծքը մալը հողի:

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչպես եր Հայաստանի վիճակը նոյեմբերից առաջ:
2. Ի՞նչ բերեց նոյեմբերը:
3. Նկարագրիր ձեր գյուղի դրութունը նոյեմբերից առաջ և հիմա:

Նոյեմբերն չեկավ ու բերեց որենք, Սեր, հաշուութուն կա ամենուրեք:

Արյուն ու արցունք, սրի հեռ և սով վերացան խալառ նոյեմբեր ամսով:

Տնտեսությանը սովինք բարձրացում. գնում ենք դեպի ճիշտ կոոպերացում:

Ջրրանցքներ, արխեր իրենց ճյուղերով անցնելով անցան հին չոր տեղերով:

Բերքի տոն ունենք, և ցուցահանդես. — ալ թե ուր տարավ նոյեմբերը մեզ:

Հոկտեմբերը — գեղջուկին

Յես ձեզ կասեմ, թե ինչ տվեց
Հոկտեմբերը գեղջուկին,
Են որերը թե ինչ տվին
տանջված, թշվառ խեղճուկին:

Մինչ եդ որը վիզը ծռած
գեղջուկը՝ խեղճ, կիսամեռ —
աշխատում եր, գերի դառած՝
գարուն, ամառ թե ձմեռ:

Նա չուներ հող, նա չուներ արտ,
վոչ ել հանգիստ ու դադար,
տանջանք ուներ և միայն դարդ
ու չարչարանք անդադար:

Բայց ահա մեծ Հոկտեմբերը
նրանց կապերն արձակեց,
նրանց համար ազատության
վառ արշալույս ստեղծեց:

54-ԴԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ԳԱՍԱՐԱՆԸ ԲԱԺԱՆԵԼ ՅԵՐԿՈՒ ԽՄԲԱԿԻ ՅԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՄԲԱԿԻՆ ԼՈՒՌ ԿԱՐԳԱԼ ՏԱԼ. 2 ԱՆԳԱՄ ԿԱՐԳԱԼՈՒՅ ՀԵՏՈ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՄԲԻՅ 2 ՀՈԳՈՒ ՊԱՏՄԵԼ ՀԱՐՅՆԵԼ

Ընկեր Սարգիս Կասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ

Ընկ. Ս. Կասյանը ծնվել է Շուշում, 1876 թվին: Դեռ աշակերտ չեղած ժամանակ նա աշակերտական գաղտնի խմբեր եր կազմակերպում և նրանց մեջ հեղափոխական աշխատանք կատարում: Հենց դրա համար ել նա շարունակ պատիժներ է կրել և վերջը նրան հեռացրել են դպրոցից:

Մեկ տարի գլուղում ուսուցչություն անելուց հետո ընկ. Կասյանն անցնում է Գերմանիա և մտնում աշխտեղի համալսարանները:

1902 թվից նա միանում է սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևին, հողվածներ է գրում հեղափոխական թերթերում և կատարի պաշար է սկսում դաշնակցության դեմ:

1905 թվին ընկ. Կասյանը Բագվում հիմնում է առաջին բալչ-շևիկական գաղտնի թերթը — «Բանվորի ձայնը», վորն իսկույն փակվում է կառավարության կողմից:

Նրանից հետո նա անցնում է Թիֆլիս և ընկ. Շահումյանի հետ մեկտեղ մասնակցում է «Կայծ» և «Նոր խոսք» թերթերի խմբագրության:

1914 թվին նրան ձերբակալում են և իբրև հեղափոխականի դատում ու աքսորում են Վոլոգդա:

1917 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո նա նորից գալիս է Թիֆլիս, վորտեղ ընտրվում է Յերկրային Կոմիտեի անդամ:

1919 թվին Վրաստանի մենշևիկական կառավարությունն ընկ. Կասյանին ձերբակալում է, բայց նրան հաջողվում է փախչել Հայաստան: Այստեղ նա հավաքում է բալչշևիկների ցրված ուժերը և ըստեղծում է Ռուսական Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության Հայաստանի Կոմիտեն:

1920 թվին դաշնակցական կառավարությունը նրան բռնում և աքսորում է Հայաստանից դուրս: Ընկ. Կասյանը գնում է Բագու, հետո վերադառնում է Իջևան (Իլիշ. գավ.) և անցնելով ապստամբ ժողովրդի գլուխը, Հայաստանը հայտարարում է խորհրդային և ինքն ել ընտրվում է առաջին Հեղկոմի նախագահ:

1921 թվին նա գնում է Մոսկվա, մասնակցում է Կոմիտեների համագումարին, վորտեղ նրան ընդունում են մեծ պատվով: Հետո գալիս է Թիֆլիս և դառնում է «Կարմիր Աստղ» թերթի և ապա «Նոր Աշխարհ» ամսագրի խմբագիրը: Դրանից հետո ընկ. Կասյանը նշանակվում է կոմունիստական համալսարանի վերատեսուչ: Թիֆլիսում անցյալ տարի նա ընտրվեց Անդրկովկասյան Կենտգործկոմի նախագահ, իսկ այժմ ել միաժամանակ Հայաստանի Կենտգործկոմի նախագահ:

ՀՍԽՀ ԺՈԿՈՄԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀ

Ընկ. Սահակ Տեր-Փաբրիկյանը

Ընկ. Սահակ Տեր-Փաբրիկյանը ծնվել է 1886 թվին Շուշի քաղաքում, մի դերձակի ընտանիքում: Սովորել է Շուշու ուսուցչական

դպրոցում՝ մինչև յերրորդ դասարանը: 1900 թվին հոր մահից հետո ստիպված գնում է Բագու, վոր մի գործ գտնի և իր ընտանիքը պահի: Բալխանիում նա հարում է բալչեիկներին և մասնակցում է մի շարք գործադուլների, գաղտնի աշխատանք է կատարում բանվորութան մեջ: 1907 թվին ձերբակալվում է վորպես Բագվի կուս. կոմիտեի անդամ, բայց ազատվելուց հետո շարունակում է ավելի յեռանդուն աշխատել:

Փետրվարյան հեղափոխութունից հետո ընկ. Տ.-Գաբրիելյանն ընտրվում է Բագվի բան. պատգ. խորհրդի գործադիր կոմիտեի անդամ, ապա ուղարկվում Պետրոգրադ, վորպես պատգամավոր:

1918 թվին ընկ. Տ.-Գաբրիելյանը Բագվի խորհրդային հեղաշրջումը կազմակերպողներից մեկն է լինում: 1918-20 թվերին նա աշխատում է Ռուսաստանում, իսկ 1920 թվի վերջում ընտրվում է Հայաստանի առաջին Հեղկոմի անդամ:

Անուհետև ընկ. Տ.-Գաբրիելյանն ուղարկվում է Մոսկվա, ըսկզբում վորպես Հայաստանի, ապա և Անդրկովկասի ներկայացուցիչ և վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ:

Այժմ ընկ. Ս. Տեր-Գաբրիելյանն ընտրվել է Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ:

ԱՐՏԱԳՐԻՐ ԼՐԻՎ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Յերեքշաբթի, նոյեմբերի 29-ին, յերեկոյան ժամը 6-ին **ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԴԱՀԼԻՋՈՒՄ** ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ

7-րդ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ հրավիրվում է

ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԸ

մասնակցութամբ ԿԳԿ, ԺԿԽ, ԿԿԿԿ, Յերկուսկոմի, ԳԳԿ, ՀԱՄԽ-ի, ԼԿՅԵՄ նախագահութունների, զինվորական ներկայացուցիչների և պատգամավորուհիների:

ՈՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Խորհրդայնացման 7-րդ տարեդարձը:

Ջեկ ընկ. Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ.

Տառալին անուններ.	Կրճատ անուններ.	Լրիվ անուններ.
ԿԳԿ	Կենտգործկոմ	Կենտրոնական Գործադիր Կոմիտե.
ԺԿԽ	Ժողկոմխորհ	Ժողովրդական Կոմիտեներ
ԿԿԿԿ	Կոմկուսի Կենտկոմ	Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտե.
ԳԳԿ	Գավգործկոմ	Գավառային Գործադիր Կոմիտե.
ՀԱՄԽ		Հայաստանի արհեստակցական Միությունների Խորհուրդ

ՀԻՇԵՑՆՔ.

1. Պետութունների և հիմնարկների տառալին անունների բոլոր տառերը գրվում են մեծատառերով:
2. Պետական կարևորագույն հիմնարկների ինչպես լրիվ, այնպես և կրճատ անունները գրվում են մեծատառերով:
3. Մնացած կրճատ բառերը գրվում են փոքրատառով:

Յ-ՐԴ ՀԱՐՑ. ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

55-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Բագու

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ու այստեղ են ապրել Շահումյան,
Ալյոշան, Ազիզբեկ, Սպանդար,
Այստեղ են պաշարել ու մեռել -
Քսանվեց աննման կոմունար:

Մինչև վոր արշունովը նրանց թարմ
Նոր Բագվի հիմքերն ամրացել.
հեյ, լսեք, հայրենիքն իմ փարթամ
հավիտյան Սովետյան է դարձել:

ՀԱՐՑԵՐ.

1. Ովքեր են Ստեփան Շահումյանը, Ալյոշա Ջափարիձեն, Մաշազի Ազիզբեկովը և Սուրեն Սպանդարյանը:
2. Ի՞նչ գիտեք 26 կոմունարների մասին:

Արյունոտ գիշերը

26 Կոմունարներին

Ս.Լ.Ս.ՋԱՆԵ

Գողի նման—կասկածամիտ ու կծկված ու չորեքթաթ —
գաղտագողի լուռ սողում ե ավազի մեջ մի սև գնացք.
դուրս են նայում ինչ վոր դեմքեր գարհուրելի և մտավախ.
շուրջը՝ ավազ, շուրջը՝ խավար, շուրջը՝ գիշեր մի սևակնած:
Նա կանգ առավ ավազի մեջ վորպես մթին մի թշնամի,
գետին իջան փափսալով, մուկ ստվերներ խորհրդավոր:
Նորից լեյան, նորից իջան, փափսացին կասկածամիտ.
շուրջը՝ ավազ, շուրջը՝ խավար, շուրջը՝ գիշեր մի դարավոր...

Ու շարժվեցին մուկ ստվերներ... վորոտացին համադարկեր...
մարդիկ ընկան արնաշաղախ, իրար կողքի, իրար գրկած:
Մահամուլ անապատի ու արյունի ավազի մեջ—
լավում ելին նվաղ ձայներ «Մենք մեռնում ենք, բայց դեռ
կգանք»...

ԱՐՏԱԳՐԻՐ ՅԵՎ ԸՆԴԳԺԻՐ Ա, Ո, ՈՒ, Ը, Ի, Ե ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեյջանի բան-
վորներն ու գյուղացիներն ապստամբեցին քե-
կերի ու խաների ռուսափաթական կառավարու-
թյան դեմ, քաղաքացիներն այն և կարմիր բանակի
ոգնությունը խորհրդային իշխանությունն հաս-
տատվեցին:

56-ԴԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Վրաց աշխատավոր գյուղացու վիճակն առաջ

Դ. ձՈՆՎԱՋԵ

Արագվի ափին կա մի գյուղ, վորտեղ ապրում եր հայրս, զբո-
բախտաբար թավազի ճորար:

Մի անգամ հայրս գնաց սալով խոտ բերելու. խոտով բեռնված

սալը վալեջքով պիտի անցներ. հայրս գնում եր սալի առջևից,
վոր սալն առաջ չսահեր. սակայն սալն արագընթաց առաջ սահեց
և հորս տակովն արավ:

Հորս մեռնելուց հետո մեր ընտանիքի բախտը շուռ լեկավ: Թա-
վաղն ամենից առաջ այգին խլեց, պատճառաբանելով, վոր մենք
այգին մշակել չենք կարող. հետո՝ լեզն ու գոմեշները, վերջը մորս
հրամայեց իր տանը ծառայելու:

Խեղճ մայրիկ, պիտի տնանելիք, թե ի՞նչ լաց ու կոծով եր բա-
ժանվում, իր տան ոջախից: Խեղճ, ինչպես եր աղերսում թավա-
զին, վոր չմարեր իր ոջախը, իսկ թավազը կարծես չեր լսում:

— Լաց կլինի, լաց կլինի ու վերջը կռի.—

Այսպես եր կարծիքը թավազների:

Նրանք կարծում ելին, վոր մենք մարդ չենք, մենք չենք կարող
սիրել ու առել, վոր մենք սիրտ չունենք, զգացմունքից զուրկ ենք:
Յերկրորդ ուրը մեզ լցրին սալի մեջ ու տարան թավազի մոտ: Յերբ
թավազին ներկայացրին, նա մեզ զննեց ու հրամայեց, վոր լես ու
քուլրս նրա անմիջական սպասավոր լինենք, իսկ մայրս հացթուխ:

ԹԱՐԳՄ. Ա. ԱՌԵՏՏՐԵՍԱՆ

ԱՅՍ ԶԵՎՈՎ ԿԱԶՄԻՐ ԶԵՐ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐԶԱՆԱ-
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արձանագրություն №3

Մարտունակների № 1 կիսագրագետների խմբի 1928 թվի փե-
տրվարի 9-ի դասարանական ժողովի

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵՑԻՆ՝

ԻՆՉ ՎՈՐՈՇԵՅԻՆ.

1. Քաղաքացիներից նվեր ստացած
10 համար «Մաճկալ»-ի մասին:

1. «Մաճկալ»-ի համարները
հերթով տալ սովորողներին՝
տանը կարդալու համար:

2. Տնային աշխատանքների
մասին:

2. Ամեն որ կես լեռնա գրա-
վոր աշխատանք տալ՝ տանը
կատարելու:

3. Դասամիջոցներին դասա-
րանում չմնալու մասին:

3. Դասամիջոցներին, բացի
հերթապահից, վոչ վոքի չը-
թողնել դասարանում:

ՆԱԽԱԳԱՀ՝ ԶՐԱԶՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԳԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍՈՓԵԱ ԹԱՅԻՐՅԱՆ

ԳՐԻՐ ԱՍՈՒՅԹՆԵՐ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՌԵՐՈՎ

Սև ծով, Կասպից ծով, Կովկաս, Անդրկովկաս, Հյուսիսային Կովկաս, Բազու, Բաթում, Թիֆլիս, Սուխում, Ստեփանակերտ, Յիֆնալի, Նախիջևան, Կովկասյան լեռնաշղթա, Սևանա լիճ:

4-ՐԴ ՀԱՐՑ. ՄԵՐ ՖԵԴԱՐԱՑԻԱՆ

57-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

Ա. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունը

Անդրկովկասի Սոցիալիստական ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը կազմված է յերեք հանրապետություններից—Հայաստան, Ադրբեջան և Վրաստան:

1922 թ. սեպտեմբերի 30-ին այդ 3 հանրապետությունները միանում և կազմում են Ա. Ս. Ֆ. Խ. Հ.: Այս միացումը շաղկապում է իրար հետ թուրք, հայ, վրացի և մյուս ազգությունների աշխատավորներին:

Մինչև Անդրկովկասի խորհրդայնացումն այդ ազգությունները՝ երուսական կապիտալիստների զրդմամբ իրար արյուն ելին թափում:

Այսոր նրանք ձեռք-ձեռքի տված՝ աշխատում են բարձրացնել իրենց յերկրի տնտեսությունը, կուլտուրան և բարեկամել իրենց կյանքը:

Անդրկովկասի հանրապետությունների մեջ ապրող փոքր ազգություններն ունեն իրենց ինքնուրույն հանրապետությունները: Աբխազիայի Խ. Ս. Հանրապետությունը, Աջարխտանի Խ. Ս. Հանրապետությունը և Հարավային Ոսեթիայի ինքնավար (ավտոնոմ) շրջանը—այս յերեքն ել մտնում են Վրաստանի ԽՍՀ մեջ: Ադրբեջանի մեջ մտնում են՝ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի ինքնավար շրջանները:

Այսպիսով՝ Անդրկովկասի բոլոր ազգությունները միանալով մի ֆեդերացիայում՝ միևնույն ժամանակ չեն կորցնում իրենց ինքնուրույնությունը:

ԱՍՖԽՀ գերագույն իշխանությունը պատկանում է Անդրկովկասյան Խորհուրդների Համագումարին:

Անդրկովկասի Կենտգործկոմի նախագահներն են՝ ընկ. ընկ. Միխայիլ Յիսակյան, Կասյան և Ադամայի-ողլի: Ժողկոմխորհի նախագահն է ընկ. Շ. Ելիավան: Նրա տեղակալներն են՝ ընկ. ընկ. Համբարձումյան և Հյուսեյնով:

ԱՍՖԽՀ մայրաքաղաքն է Թիֆլիսը: Թիֆլիսն ունի 283,000 բնակիչ:

(«Կարմիր մարտիկի այբբենարան—ընթերց.»)


ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչպես կազմվեց Անդրկովկասի ՍՖԽՀ-ը
2. Վճր հանրապետություններն ու ինքնավար շրջաններն են մտնում Անդրկովկասի մեջ:
3. Ովքեր են Անդրկովկասի Կենտգործկոմի նախագահները և Ժողկոմխորհի նախագահն ու տեղակալները:

ԳՐԻՐ ՀԵՏԵՎՅԱԼ ՍԽԵՄԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱՆԿՑՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԻՎ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԳՐԻՐ. (ԲԱՌԵՐԸ ՏԵՍ ՆԱԽՈՐԳԻ ՀՈԳՎԱԾՈՒՄ)

Ս Խ Ե Մ Ա

Անդրկովկասի Սոց. ֆեդ. Խորհրդային Հանրապետության



5-ՐԴ ՀԱՐՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ԵՆ ՎԵՅ ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

58-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԲ

Խ. Ս. Հ. Մ. աշխատավորության տնտեսական, քաղաքական և ռազմական միությունն է

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) կազմի մեջ մտնում է վեց հանրապետություն.—

1. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը (ՌՍՖՍՀ):

2. Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՈւՍՖՍՀ):

3. Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը (ԱՍՖՍՀ):

4. Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ԲՍՖՍՀ):

5. Թյուրքմենստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ԹՍՖՍՀ):

6) Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՈւզՍՖՍՀ):

ԽՍՀՄ կազմված է կամավոր կերպով և հավասար իրավունքներով: Հանրապետություններից յերկուսը կոչվում են ֆեդերատիվ, վորովհետև նրանք իրենց մեջ համախմբում են դարձյալ մի շարք առանձին ազգությունների հանրապետություններ:

Այս հանրապետությունները, մտնելով Խորհրդային Միության մեջ՝ մնացել են միանգամայն անկախ և ինքնուրույն: Նրանցից ամբողջապես Միություն են անցել պետության կառավարչության հետևյալ 5 ճյուղերը՝ արտաքին և ռազմական գործերը, արտաքին առևտուրը, ճանապարհների հաղորդակցությունը և փոստ-հեռագրական գործը:

Յուրաքանչյուր դաշնակից հանրապետություն ունի իր ինքնուրույն պետական իշխանությունը՝ իր խորհուրդների համագումարները, կենսագործկոմները և նրանց նախագահությունները, ժողովուրդները և ժողովուրդները:

ՀԱՐՑՆԵՐ.

1. Վճիռ դաշնակից հանրապետություններն են մտնում Խորհրդային Միության մեջ:

2. Ի՞նչ բան է ժողովուրդ և ժողովուրդ:

ԿԱՐԴԱ ՏԱՌԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԼՐԻՎ ԱՐՏԱՍԱՆԵԼՈՎ ՅԵՎ ԱՊԱ ԱՐՏԱԳՐԻՐ ԼՐԻՎ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ ՄԻԱՅՆ ՏԱՌԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային Միության Կենտրոնական Նախագահ Ունի

ՌՍՖՍՀ	Կենտրոնական	Նախագահ	Ընկեր	Կալինին
ՌՍՖՍՀ	Կենտրոնական	Նախագահ	Ընկեր	Պետրովսկի
ԲՍՖՍՀ	Կենտրոնական	Նախագահ	Ընկեր	Չերվյակով

ԱՍՖՍՀ Ժողովուրդների Նախագահ Ընկեր Մուսաբեկով
(ԱՍՖՍՀ Կենտրոնական լոգոյից).
ՈւՂՍՖՍՀ Կենտրոնական Նախագահ Ընկեր Ֆելդուլա Խոջա
ԹՍՖՍՀ Կենտրոնական Նախագահ Ընկեր Այտակով

59-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆԵ

ԽՍՀՄ ազգությունների յեղբայրական Միություն է

Մեր յերկրում 100-ից ավելի ազգություններ կան:

Ցարական կառավարությունը նրանց ճնշում և լարում էր մեկը մյուսի դեմ: Նրանք զրկված էին իրենց ինքնուրույնությունից, և յերկրները հանդիսանում էին իբրև ցարական կառավարության գաղութներ:

Նրանք շահագործվում էին այնպես, ինչպես ներկայումս շահագործվում են հնդկացիք, չինացիք, սիրիացիք, յեզիսացիք՝ ևրդական գիշատիչ կապիտալիստների կողմից:

Ցարական կառավարությունը Անդրկովկասի ազգություններին իրար դեմ էր հանում. ով չի հիշում 1905 թվի հայ-թրքական ընդհարումները: Անընդհատ կռիվները թուլացնում էին մանր ազգություններին:

Բալչեկիկյան կուսակցությունը մեծ պայքար է մղել ազգերի ինքնորոշման գործում: Այդ նպատակին իրագործվեց Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ: 1918 թ. Համառուսական Խորհուրդների համագումարին՝ բոլոր ազգությունների աշխատավորներն իրավունք ստացան ինքնորոշման: Նրանք կազմեցին իրենց ինքնուրույն հանրապետություններ:

Յեվ այժմ Անդրկովկասի ազգությունները հնարավորություն ունեն խաղաղ կառուցել իրենց տնտեսությունը և բարձրացնել իրենց կուլտուրան:

Այսպիսով Խորհրդային Միությունն աշխարհում միակ պետությունն է, վորն ապահովում է բոլոր ազգությունների յեղբայրական դաշինքը և նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման լիակատար հնարավորությունները:

Իսկ ի՞նչպես է ազգային փոքրամասնությունների վիճակը կապիտալիստական յերկրներում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ապրում են մոտ 14 միլիոն նեգրեր: Այստեղ նեգրերին մարդ չեն հաշվում: Որինակ՝ Նյու-Յորքում նեգրերը չեն կարող մտնել թատրոն, ճաշարան, վորոնք սպիտակների համար են:

Ավելի ծանր և նեղերի զբաղվումը հարավում: Անտեղ չեր-
կաթգծերի վրա նեղերի համար գոյություն ունեն առանձին վա-
զոններ, կաշարաններում առանձին սենյակներ: Նեղը չի կարող
ամուսնանալ սպիտակ աղջկա հետ: Մինչև անգամ չեկեղեցիներն
սպիտակների և նեղերի (սեամորթների) համար առանձին-առան-
ձին են:

(Ըստ «Կարմիր մարտիկի» այբ.—ընթ.—ի)

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

ՆԿԱՐԱԳՐԻՐ ԱԶԳԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
ՅԵՎ ԱՅԺՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱ-
ԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ.

ԼՐԻՎ ՏԱՌԵՐՈՎ ԱՐՏԱԳՐԻՐ.

ԽՍՀՄ Կենտրոնականի նախագահն է ընկ. Կալինինը, իսկ Ժող-
կոմխորհի նախագահը՝ Ռիկովը: ՀՍԽՀ Կենտրոնականի նախագահն է
ընկ. Ս. Կասյանը, իսկ Ժողկոմխորհի նախագահը՝ ընկ. Ս. Տեր-
Գաբրիելյանը: Համկոմկոսի Կենտկոմի գլխավոր քարտուղարն է
ընկ. Ստալինը, իսկ ՀԿԿԿ գլխավոր քարտուղարը՝ Հ. Կոստանյանը:
Յերիտասարդության լավագույն մասը մտնում է ՀամԼԿՅԵՄ մեջ:
Լուսժողկոմատի գլուխն է կանգնած ընկ. Ասք. Մուսվաթյանը: Ռու-
սաստանի Քաղրուսգլխավորի նախագահն է ընկ. Ն. Կրուպսկայան:

ՏԵՂԵԿԱՆՔ.

Համամիութենական Կոմունիստական Լուսակցության Կեն-
տրոնական Կոմիտե, Խորհրդային Սոցիալիստական հանրապետու-
թյունների Միություն, Համամիութենական Լենինյան Կոմունիս-
տական Յերիտասարդական Միություն, Քաղաքական Լուսավորու-
թյան Գլխավոր Վարչություն, Հայաստանի Կոմունիստական Կու-
սակցության Կենտրոնական Կոմիտե, Լուսավորության Ժողովրդա-
կան Կոմիտե:

60-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՈՎ Ե ԿԱԼԻՆԻՆՆԸ

Կալինինը շատ հին կոմունիստ—բալլետիկ է. ինքը յերիտասարդ
ժամանակ հողագործ է լինել, իսկ հետո քաղաքում՝ բանվոր: Ծնող-
ները հիմա չե՛լ գլուղումն են: Կալինինը շատ լավ իմանում է գյու-
ղացու սպրուստը:

Կալինինը 8 տարի չե, Ռուսաստանի Խորհուրդների Կենտրոնա-
կան Գործադիր Կոմիտեի, այսինքն Կենտրոնականի նախագահն է.
Դրա համար ե՛լ Կալինինին սիրելով, Ռուսաստանի տանուտեր են
ասում:

Բացի եղ պաշտոնից հիմա Կալինինն ուրիշ մեծ պաշտոն ե՛լ
ունի, նա Խորհրդային Միության Կենտրոնական Գործադիր Կոմի-
տեի նախագահն է և ՀամԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ:

ՀԵՏԵՎՅԱԼ ՎՈՏԱՆԱՎՈՐՆ ԱՐՏԱԳՐԻՐ ՅԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ
ԱՐՁԱԿԻ ՎԵՐԱԾԻՐ.

Պատգամավորը

ՍԱՆԳՐՈ ՇՈՒԼԻ

Խնձ ալցելեց հայրս չերեկ—
վաթսունամյա մի ծերունի,
վոր տքնել է գիշեր ցերեկ,
խմել կյանքի դառն թուփից:

Նա հյուր չեկավ անակնկալ
և գրկաբաց ընդունեցի.
Ասի.—Տո՛ւնդ ե կրակ ընկած,
թե՛ բռնվել ես ծանր վեճի:—

Գրկեց, ասաց նա ժպտալով.
— Յես հպարտ եմ պոչեա վորդով.
բալց փոխանակ տալու չերգեր,
լավ է դաշտում հողը հերկել:—

Յե՛վ նա հանեց իր գրպանից
մի ճերմակ թուղթ, չորս ծալավոր.
— Սա մանդատ է գյուղից, վորդիս,
ինձ ընտրել են պատգամավոր:

Կարծում է՛լ իր հյո՛ւր եմ չեկել,
կամ բերել եմ լո՛ւր աղետի:
Վո՛չ, ինձ իմ գյուղն է ուղարկել,
վոր իմ ձայնը տամ սավետին:

Յեա գրկեցի հորս ծերուկ,
պինդ սեղմեցի ձեռքերը կոշտ.
ու հա պատմեց, թե գլուղերում
ինչն է պակաս, ինչից են գոհ:

Այսոր կերթա համագումար
և վողջուշի խոսքեր կասի
մեր նորաստեղծ կյանքի համար,
հանուն կարմիր մեր դրոշի:

Թարգմ. վրացերենից՝ Ս. ԱՌԻՇՏԻՅԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՊԱՇՏՊԱՆԵՅՔԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

1-ԻՆ ՀԱՐՑ. ՄԵՆՔ ԳՏՆՎՈՒՄ ԵՆՔ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

61-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ամերիկյան ամենահարուստ յերկիրն է

Խորհրդային Միությունը բռնում է աշխարհի մեկ վեցերորդա-
կան մասը: Աշխարհի մեկ վեցերորդական մասում իշխանությունը
պատկանում է գլուղացիներին ու բանվորներին: Բայց Խորհրդային
Միության սահմաններից դուրս իշխում են կապիտալիստները: Մեզ
բոլոր կողմերից շրջապատում են կապիտալիստական յերկրները,
վորոնց մեջ ամենահարուստը Ամերիկան է՝ Հյուսիսային Ամերիկայի
Միացյալ Նահանգները:

Համաշխարհային պատերազմի ժամանակ Միացյալ Նահանգները
պատերազմող յերկրներին մատակարարում էին մեծ քանակությամբ
ռազմանյութ և ռազմամթերք: Նրանք ապրանք ելին հալթալթում
այն գաղութներին, վորտեղ առաջ առևտուր էին անում Յեվրոպա-
կան պետությունները: Պատերազմի ժամանակ Միացյալ Նահանգների
կապիտալիստները սաստիկ հարստացան:

Ահա թե ինչ է գրում Լենինը Ամերիկայի մասին.

«Ամերիկյան միլիարդներն ամենից շատ ոգտվեցին: Նրանք
իրենց հարկատու դարձրին նույնիսկ ամենահարուստ յերկրները:
Նրանք կողոպտեցին հարյուր միլիարդներ: Յուրաքանչյուր դոլա-
րում յերևում են կեղտի հետքեր: Յուրաքանչյուր դոլարում յերե-
վում են այն արյան ծովի կաթիլների հետքերը, վոր թափեցին պա-
տերազմում 10 միլիոն սպանվածները և 20 միլիոն հաշմանդամ-
ները»:

Այժմ Միացյալ Նահանգներում գտնվում է ամբողջ աշխարհում չեղած վոսկու կեսից ավելին: Յեվրոպական յերկրները պարտք են Միացյալ Նահանգներին 20 միլիարդ վոսկի ուղբի:

Միացյալ Նահանգների արդյունաբերությունը հասել է հսկայական չափերի: Քարածուխի, նավթի և պողպատի արտադրությամբ Ամերիկան բռնում է աշխարհում առաջին տեղը. ամբողջ աշխարհում այդ արտադրանքների կեսից ավելին Ամերիկան է մշակում: Վոչ մի տեղ ելեկտրոֆիկացիան այնպես զարգացած չէ, ինչպես Միացյալ Նահանգներում:

Միացյալ Նահանգների գյուղական տնտեսության մեջ շատ լայն ոգտագործում են տրակտորներ և ուրիշ բարդ մեքենաներ: Հողի մշակումը, ցանքսը, բերքի հավաքումը — բոլորը կատարվում են մեքենաներով: Միացյալ Նահանգներն առաջին տեղն են բռնում աշխարհում ցորենի, վարսակի, գարու և այլ հացահատիկների արդյունաբերությամբ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Պատմիր Ամերիկայի մասին, ինչ կարդացել ես թերթերում և լսել զեկուցումների ժամանակ:

ԿԱԶՄԻՐ ԱՍՈՒՅԹՆԵՐ ՀԵՏԵՎՅԱԼ ԲԱՌԵՐՈՎ

Խորհրդային Միություն, յերկիր, իշխանություն, գյուղացի, Միացյալ Նահանգներ, ռազմանյութ, պետություն, հարյուր, համարյա:

Ընդգծիր քո գրած ասությունների մեջ յա, յու, յե յերկձայնները:

62-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Անգլիան շահագործում է տասնյակ յերկրների և ազգությունների միլիոնավոր աշխատավորներին:

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Իրլանդիա,	Աֆրիկա՝
Յեգիպոս,	Նեգր սեամորթ,
Իրաք,	Հնդկաստան՝
Պաղեստին,	հնդիկ զեղնամորթ,
Տրանսվալ,	թույլ մասերը

աշխարհի	լորդեր են,
հոտ ես շինել	փափուկ, տաքուկ
վոչխարի:	գորտեր են,
Բուրդը խուզում	թույլ ազգերը
միսն ուտում,	ճորտեր են,
հարստություն	դատեն, բանեն
քեզ զիզում:	ու տան ձեզ,
Փոքրիկ կղզի	լափեք, թափեք
	գելի պես:

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչու Անգլիան խզեց իր հարաբերությունները ԽՍՀՄ հետ:
2. Ի՞նչպես է շահագործում Անգլիան իր գաղութների ժողովուրդներին:

Արտագրիր այս վոտանավորը միանգամից տող-տող գրելով: Ա, ո, ու, ի, ե, ը ձայնավորները և ա, ու, ու, յա, յու, յե յերկձայններն ընդգծիր:

Փրանսիան իր շահագործումով յետ չի մնում Անգլիայից

Փրանսիան, ինչպես և Անգլիան, կապիտալիստական արդյունաբերական յերկիր է: Ունի մեծ գաղութներ: Նրա մեծ գաղութներն են՝ Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն, Հնդկաստանը:

Փրանսիան իր շահագործումով և դաժանությամբ յետ չի մնում Անգլիայից:

Փրանսիական բուրժուազիան կործանեց Սիրիայի Դամասկոս քաղաքը, անխնա կոտորեց ռիֆֆերին (ռիֆֆերն Աֆրիկայի ժողովուրդներից են), վորոնք կամենում էին դեն շարտել իրենց վզից ֆրանսիական լուծը: Նա անխնա ճնշում է բանվոր դասակարգի ամեն մի յելույթ իր յերկրի ներսում՝ ուղղված բուրժուազիայի դեմ: Ներկայումս շատ կոմունիստներ տառապում են ֆրանսիական բանտերում:

ՀԱՐՅԵՐ.

1. Ի՞նչ վերաբերմունք ունի Փրանսիան ԽՍՀՄ հանդեպ:
2. Վո՞ր պետություններին է զինում Փրանսիան ԽՍՀՄ դեմ:

63-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գերմանիայում կապիտալիզմն ու ժեղանում է

Գերմանիան խիստ զարգացած արդյունաբերական լեռնային եւ Գյուղատնտեսութիւնը նուէնպէս շատ լավ ե զբլած Գերմանիայում:

Լաշն չափով ոգտագործվում են մեքենաներ ե արհեստական պարարտացում:

Մինչև Համաշխարհային պատերազմը Գերմանիան Անգլիայի մրցակիցն եր արդյունաբերութիւն ե առևտրի մեջ:

Համաշխարհային պատերազմից Գերմանիան պարտված գուրա լեկավ:

Հաղթող պետութիւններին նա մեծ գումարներ ե վճարում: Վճարումների ամբողջ ծանրութիւնն ընկնում ե գյուղացիների ե բանվորների վրա: Այժմ Գերմանիայում կապիտալիզմը նորից սկսում ե իր համար ուղի հարթել: Գերմանիան սկսում ե ավելի ամուր տեղ զբլել կապիտալիստական տնտեսութիւն մեջ: Բալց Գերմանիան սպառման համար գաղութների կարիք ե զգում: Համաշխարհային պատերազմից հետո նրանից խեցին բոլոր գաղութները: Այսպիսով կապիտալիզմի զարգացումը Գերմանիայում կուժեղացնի կապիտալիստների պալքարը գաղութների համար:

ՀԱՐՅԵՐ.

1. Ինչպէս եր Գերմանիան պատերազմից առաջ ե ինչպէս ե այժմ:
2. Ո՞վ ե նպաստում Գերմանիայի ուժեղացման:

Հունվարից սկսած՝ կարգով զբլր ամիսների անունները վանկերի բաժանած ե ապա յուրաքանչյուր վանկում ընդգծիր ա, ո,

ու, ի, ե, ը ձայնավորները կամ յա, յո, յու, յե, ալ, ոլ, ուլ լեռկ-ձայնները:

ՏԵՂԵԿԱՆՔ.

Հուլիս, փե-տըր-վար, հոկ-տեմբ-բեր, ապ-րիլ, մա-լիս, դեկ-տեմ-բեր, հու-նիս, սեպ-տեմ-բեր, հուն-վար, ո-գոս-տոս, նո-յեմ-բեր, մարտ:

Նուէն ձևով լեռկուշաբթի որվանից սկսած՝ կարգով զբլր որբլի անունները:

Ուր-բաթ, հինգ-շաբ-թի, շա-բաթ, չո-րեք-շաբ-թի, լեռ-կուշաբ-թի, լե-րեք-շաբ-թի, կի-րա-կի:

ՀԱՐՅԵՐ.

1. Այս բառերից յուրաքանչյուրը քանի մասի լե բաժանված:
2. Բառի յուրաքանչյուր մասին (վանկին) քանի ձայնավոր կամ լեռկձայն ե ընկնում:
3. Իսկ քանի բաղաձայն ե գալիս յուրաքանչյուր վանկին:

ՀԻՇԵՅՏԻ ՏՈՂԱԴԱՐՁԻ ԿԱՆՈՆԸ.

Յերբ տողի վերջում բառն ամբողջապէս չի տեղավորվում, բառի մի մասը տակի տողն ենք տանում՝ տողադարձ ենք անում:

1. Տողադարձ անելիս բառը նախ պետք ե բաժանել վանկերի ե միայն ամբողջ վանկեր տանել մյուս տողը:
2. Տողադարձի ժամանակ տողի վերջում զբլում ե լենթամաս (-):
3. Միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել:
4. Տողադարձի ժամանակ ը ձայնավորը միշտ գբլում ե, լերբ տողի վերջում կամ տակի տողում մի վանկ ե կազմում:

64-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ինչպէս են ապրում բանվորներն ու գյուղացիները կապիտալիստական յնրկրներում

Պրոլետարիատի պետութիւնն նպատակն ե բանվորութիւնն ու գյուղացիութիւնն կյանքը բարելավել:

Հակառակ բոլոր կապիտալիստական յերկրներին,
 ուր բանվորներն ու գյուղացիները շահագործվող,
 հալածվող ու իրավունքներից զուրկ դասակարգ են,
 հակառակ կապիտալիզմին, վորը զրկում է բանվոր-
 ներին իրենց կռվի ամենակարևոր նվաճումներից,
 յերկաթի տակ տրորում է արհմիությունների իրա-
 վունքները, ցաքույրիվ է անում բանվորական
 կազմակերպությունները, կտրում է աշխատավարձը,
 յերկարացնում է բանվորական ուրը, գյուղացուն
 վաշխառուների և սպեկուլյանտների փայ-բաժին
 դարձնում ու միլիոնավոր աշխատավորների աղքա-
 տության մատնում,— Խորհրդային Սոցիալիստական
 Հանրապետությունների Միությունն իր նպատակն
 է համարում անշեղ կերպով բարձրացնել քաղաքի և
 գյուղի աշխատավորների բարեկեցությունը:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՄԱՆԻՖԵՍՏԻՑ

ՀԱՐՑԵՐ.

1. Յճրը հրապարակվեց Համամիութենական Կենտրոնական Մանիֆեստը:
2. Պրոլետարիատի պետության նպատակն ի՞նչ է:
3. Իսկ ի՞նչ է կապիտալիստական պետությունների նպատակը:

Բանվորուհու ուրորը

Ս.Լ. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Մի լա, վորդիս, վոր չես լսում
 ել մայրական քաղցր ուրոր.
 չես մեծ կռվի չերգ եմ հյուսում
 որոցքիդ մոտ ամեն ուր:

Դու լսում ես այնտեղ, դրսում
 շաչ ու շառաչ, լաց ու կոծ, —
 մեր արյունն է այնտեղ հոսում,
 ներկած և՛ տուն, և՛ փողոց...

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ
 բանվոր գնդեր ահարկու,
 քաջ մղում են մի մեծ կռիվ —
 աշխատանքի և վոսկու...

Այնտեղ վոսկին տեր-տիրական,
 վորպես դահիճ դժնադեմ,
 սուր է պարզում մեր ուրական
 թուխով շաղախ հացի դեմ...

Այնտեղ է մեր աչքի լույսը,
 մեր ոջախի վառ ճրագ՝
 հարյուր կռվում, սիրտն ալեհույզ,
 սրտում և՛ թուխ, և՛ կրակ:

Մի լա, վորդիս, վոր չես լսում
 ել մայրական քաղցր ուրոր.
 չես մեծ կռվի չերգ եմ հյուսում
 որորոցքիդ մոտ ամեն ուր:

ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչ կռվի մասին է խոսում բանաստեղծը:
 2. Այժմ վճր յերկրներումն է վոսկին տեր-տիրական:
 3. Վճր յերկրումն է աշխատանքը հաղթանակել:
- ԱՅՍ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ԳՐԱՎՈՐ ՄԻՄԻ ԱՍՈՒՅԹՈՎ:

65-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի՞նչ է Մոպր-ը և ո՞ւմ է ոգնում նա

Կարո՞ղ է արդյոք մեր յերկրի գյուղացին հանգիստ ու անտա-
 բեր դիտել, թե ինչպե՞ս են տանջում իր յեղբայր գյուղացիներին,
 վորոնք կռվում են կապիտալիզմի դեմ:— Իհարկե վոչ:
 Ամեն գյուղացի հասկանում է, վոր հեղափոխությունն ինչքան

շուտ հաղթի մյուս չերկրներում, ինչքան շուտ բանվորա-գյուղա-ցիական իշխանութիւն հաստատվի աշխտեղ, աշխտան ալելի շուտ մեր կյանքը կբարելավվի, մեր անտեսութիւնը կամրապնդվի: Արեւմտյան չերկրները մեզնից և ալելի հարուստ են և ալելի կուլտուրական. և չեթե աշխտեղ աշխատանքի իշխանութիւն լիներ, մեզ մեծ ոգնութիւն ցուց կտային: Պատերազմ ել չեր լինի.— գյուղացիք ինչ բան ունեն իրար դեմ կովելու: Մեր հարստութիւններն փոխարեն մեքենաներ ու ապրանք կբերելինք աշխտեղից: Դրա համար ել մի-աշխ կարեկցութիւնը չե, ալ մեր շահն ե մղում մեզ ոգնելու ու-րիշ չերկրների մեր չեղբայր գյուղացիներին, փորոնք տանջվել են պալքարում: Այդ հարցութեամբ չե կստանանք: Ահա ալ մասին ե հոգում Հեղափոխութեան Մարտիկներին Ոգնող Միջազգային կազմակերպութիւնը, փորի կրճատ անունն ե ՄՈՊՐ:

ՄՈՊՐ-ը ոգնում ե կալվածատիրոջ և կապիտալիստի լծի դեմ պալքարողներին: Աշխատավորներն ազատագրութեան համար կուվող-ներին կալվածատերերն ու կապիտալիստները բանտ են նստացնում, տանջում են ու գնդակահարում: Վորեք աղետից կամ փորձանքից տուժող գյուղացին փոխոգնութեան կոմիտեի ոգնութեանն ե դի-մում, իսկ կապիտալիստական չերկրների բանտն ընկած բանվորը կամ գյուղացին, ինչպես և աշխատավորների ազատագրութեան հա-մար գնդակահարված, նահատակված և բանտարկված մարտիկներն ընտանիքները դիմում են ՄՈՊՐ-ի ոգնութեան, հեղափոխական փո-խադարձ ոգնութեան ալ միջազգային կոմիտեին:



ՈԳՆԵՑԵՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԵՂԱՓՈ-
ԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՌԱՊՈՂ

ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

ՀԱՐՑԵՐ.

1. Ձեր գյուղում ՄՈՊՐ-ի բջիջ կա:
2. Ո՞վ ե ձեզանից ՄՈՊՐ-ի անդամ:

ԱՅՍ ՁԵՎՈՎ ԳՐԱՎՈՐ ՓՈՓՈԽԻՐ.

Դու պալքարում ես — չես պալ-	Նա պատվիրում ե — դու
քարում եմ.	պատվիրում ես.
Դու կուվում ես —	Նա ուղարկում ե —
Դու ոգնում ես —	Նա վճարում ե —
Դու տալիս ես —	Նա ստանում ե —
Դու բարելավում ես —	Նա բերում ե —

ԿԱՐԴԱ, ԹԵ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՅԵՎ ԻՆՉ ՁԵՎՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ
ԲԵՐԵԼ ՏԱԼ «ԳՅՈՒՂԱՅՈՒ ԳՐԱԳԱՐԱՆ»-Ի ԳՐԲԵՐԸ

1. Գրքեր պատվիրելիս պետք ե պարզ գրել հեղինակի և գրքի անունը:
2. Մինչև 3 ռուբլին կարելի չե ուղարկել մարկաներով:
3. Գրքերի արժեքը կանխիկ ուղարկողները ճանապարհածախս չեն վճարում:
4. Գրքերն ուղարկվում են և վերադիր վճարով, արժեքի մի քառորդն ստանալուց հետո:
5. Գյուղական դպրոցներին, խրճիթ-ընթերցարաններին, ար-տեղներին, գյուղատնտեսական կոլեկտիվներին և գյուղացիներին գրքերն ուղարկվում են 25% զեղչով:
6. Գավառներում Հողօրդկոմատի հրատարակած գրքերը ձեռք բերելու համար կարելի չե դիմել հողաբաժիններին կամ գյուղատն-տեսներին:
7. Փողն ու գրքերի պատվերը պիտի ուղարկել հետևյալ հաս-ցելով՝

ՅԵՐԵՎԱՆ, ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.

3-ՐԴ ՀԱՐՑ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԽԻՍՏ ՇԱՀԱ-
ԳՈՐԾՈՒՄ ՅԵՎ ՃՆՇՈՒՄ ԵՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ
ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

66-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ձինացի գյուղացին ստրուկ ե

Ասում են՝ Ձին-Մաչինում
չբավոր կուլինք կան շատ,
թե՛ աշխտեղ հաց չի լինում,
բրինձ են ուտում խաշած:

Հացի տեղ բրինձ են ուտում
 ու շինում ամաններ չինի.
 շինում ուղարկում են դուրս—
 Յեվրոպա—Չին-Մաչինից:



Իսկ աչնաեղ՝ սպիտակ ու հարուստ՝
 մինչև լույս սեղան նստած՝
 այդ չինի չքնաղ թասերում
 ուտում են ու խմում շամպայն:



Ասում են Չին-Մաչինում
 չքավոր ուղեւորներ կան շատ:
 Չին ուղեւորն քշում են դամիշով,
 ձիու տեղ կառքին լծած:



Լծում են ձիու պես կառքին,
 քշում են փողոցից-փողոց.
 Իսկ իրենք կառքի մեջ հանգիստ
 նստում են խոսում, ծիծաղում:

Եղպես եր Չին-Մաչինը,—գաղութ,
 բանում եր գիշեր ու ցերեկ:
 Իր բրինձն ուտում եր կավում,
 իսկ չինին տալիս տերերին:

ՌիկՇի Չինաստանում այն բանվորներն են կոչվում, վոր ձիու
 տեղ կառք են քաշում:
 ԿՈՒԼԻ—Չինական սովորական բանվոր:

ՀԱՐՑՆԵՐ.

1. Ինչո՞ւ կապիտալիստների համար հարկավոր են գաղութներ:
2. Ինչպիսի՞ պայմաններում են գտնվում գաղութների աշխա-
տավորները:
3. Ի՞նչպես են իրենց պահում ևրոպացիները գաղութներում:

ԱՅՍ ՁԵՎՈՎ ԳՐԱՎՈՐ ՓՈՓՈԽԵՐ.

Կարգում եմ,	կարգում ես,	կարգում ե.
Գրում եմ,	»	»
Ուտում եմ,	»	»
Ասում եմ,	»	»
Շինում եմ,	»	»
Նստում եմ,	»	»
Քալում եմ,	»	»
Ուղարկում եմ,	»	»
Հաշվում եմ,	»	»
Կրկնում եմ,	»	»
Խմում եմ,	»	»

Չ Մ Ո Ռ Ա Ն Ա Ս

եմ, ես, ե—ոժանդակ մասնիկներն առանձին գրել:

Անգլիացիները ջինաստանում ճնշում են ապստամբությունը

Ա.Ջ.Ս.Տ ՎՇՏՈՒՆԻ

Շանհայի փողոցում:

Ամառ:

Կեսոր:

Գործադուլ:

Ցույց ե:

Ցնցում:

— Ում կյանքը տանջանքով լի է,

ով վոր բանվոր կուլի է,

մեքենավար,

գարբին, նավաստի,

հնձող,

առաջ, առաջ, առաջ:

Բանկերը Լոնդոնի, Տոկիոյի —

եսոր գնդակով են խոսում:

Շանհայի փողոցումն էսոր

չինների արյունն է հոսում...

Կանգնած հնդիկ զինվորներ

դեմ առ դեմ շարքերի անանց,

գնդակի լեն բռնում անխնա

ծերերին,

փոքրերին,

կանանց:

Մի ջահել սպա սպիտակ՝

լեկած Լոնդոնից հեռավոր,

տալիս է հրաման կտրուկ.

— կրակ, անդադար կրակ:

Գեղջուկները ստրուկ հինդի

կարոտ որերին ապատ,

չինների գլխին են թափում

գնդակներ հազար-հազար...

1. Վոթեղ ե գտնվում Շանհայը: Ցույց տուր քարտեզի վրա:

2. Վոթեղ են գտնվում Լոնդոնը, Տոկիոն, Հինդը (Հնդկաստանը): Ցույց տուր քարտեզի վրա:

Յես	.	.	.	.	Մենք	.	.	.	.
Դու	.	.	.	.	Դուք	.	.	.	.
Նա	.	.	.	.	Նրանք	.	.	.	.

Ներքևի տողի բառերը գրիր համապատասխան տեղերում, վոր իրար հետ հարմար լինեն:

Լսում են, նստում ե, քնում ես, պառկած եմ, խոսում ելինք, զնում ելիք:

68-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ձ ա հ ը

(Առակ ըստ Դեմ. Բեյկու)

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Մերկ ու մթին ժայռերի մեջ,

անապատում,

մի ճամբորդ մարդ

լեք եր փնտրում՝

մի ճանապարհ դեպ ոտգիս.

ու լսում ե,

վոր մի ալրից ձայն ե գալիս

լացի, կոծի,

լախտածեծի:

Իր աչքն առած անն ու մահը՝

նա վառում ե ձեռքի ջահը

ու մտնում ե են մութ ալրը՝

լացի-կոծի հոտած վայրը:

Ինչ ե տեսնում

ճամբորդն աչնտեղ.

մի ավազակ, գազան անեղ,

վոր չի ջոկում, կին, լերեխա —

մեծ ու պատիկ: Հա անխնա

ձեռքի լախտով նրանց լախտում,
հա լախտում ե, հա պտտում:
Ահա այսպես մի հրեշ մարդ.
ահա այսպես խիստ ծեծ ու ջարդ:
Հենց մութ այրին
լուսն եր պակաս,
վոր դահիճը՝ մեծ պատուհաս՝
աչքից անտես՝
մի գար հանդես.
մորի ախտով,
կրակ լախտով:
Հենց վոր տեսան այրի միջին
իրենց լախտող,
ծեծող, ջարդող
են մեն-մենակ անխիղճ դահճին,
հավաքվեցին, ուժ կազմեցին,
գազան մարդուն բզկատեցին:

Հոտած այրը ով տարավ ջահ.
Մեծ Լենինը, մեծ գործն անմահ:
Մենք Լենինի վառած ջահով
կապիտալի այրի առաջ
պինդ կանգնած ենք
սեղմ շարքերով,
վոր վերջացնենք լաց ու հառաջ:

Անապատում ջրով և ծառով տեղը կոչվում ե—ոաղիս:

ՀԱՐՑԵՐ.

1. Ո՞վ ե քարանձավի ահեղ գազանը:
2. Ի՞նչ մտքով ե գործածված «Ջահ»-ը:

Ջահեր
Ժայռեր

Ճամբորդներ
Անապատներ

Գազաններ
Վառարաններ

ՀԱՐՑԵՐ.

1. Հոգնակի (մեկից ավելին ցույց տվող) կազմելու համար ի՞նչ մասնիկ ենք ավելացնում:
2. Յե՞րբ ենք եր մասնիկը ավելացնում, իսկ յերբ ենք ավելացնում ներ:

3. Յե՞րբ են հոգնակի կազմելու ժամանակ «ն» գրում:
Անցած դասերից հոգնակի բառեր գրի՛ր, գրատախտակի վրա,
ընդգծիր մասնիկները և կազմիր հոգնակի բառերով ասույթներ:

4-ՐԴ ՀԱՐՑ. ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՏԱՃԿԱՍՏԱՆ ՅԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

69-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Արևելյան ժողովուրդները մեր բարեկամներն են

Անգլիան շատ աշխատեց մեր արևմտյան հարևաններին միացնել և ուղղել մեր դեմ, բայց չկարողացավ:

Այժմ ել նա շատ ե աշխատում մեր արևելյան հարևաններին թշնամացնել մեզ հետ, բայց ելի չի կարողանում: Տաճկաստանն այլևս չի հավատում Անգլիայի քաղցր խոսքերին: Հակառակ Անգլիայի ցանկությանը՝ Տաճկաստանը բարեկամական վերաբերմունքե ցույց տալիս դեպի մեզ: Ամրանում են ԽՍՀՄ և Տաճկաստանի տընտեսական կապերը: Տաճկաստանը դուրս ե քշում իր յերկրից ռուս հակահեղափոխականներին, վորոնք աշխատում են վատացնել մեր և Տաճկաստանի բարեկամական հարաբերությունները:

Նույնը և Պարսկաստանը: Մեր առևտուրը Պարսկաստանի հետ քանի գնում, աճում ե: Պարսկաստանը մեծ քանակով ապրանքներ ե բերում մեր տոնավաճառները և մեր ապրանքներից տանում Պարսկաստան:

Արևելյան ժողովուրդները բարեկամաբար են վերաբերվում դեպի մեզ նրա համար, վոր մենք հրաժարվել ենք աճ քաղաքականությունից, վորը տանում եր ցարական կառավարությունը:

Յարական կառավարությունն աշխատում եր ճնշել արևելյան ժողովուրդներին, գրավել նրանց հողերը, իսկ Խորհրդային իշխանությունն ողնում ե նրանց իրենց ազատագրման գործում:

(«Կարմիր մարտիկի ընթերցարան»-ից)

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Գտե՛ք քարտեզի վրա Տաճկաստանը և Պարսկաստանը:

ՀԱՐՑ.

Ի՞նչո՞ւ արևելյան ճնշված ժողովուրդները ԽՍՀՄ համարում են իրենց բարեկամը:

Կազմիր ասուլիսներ հետևյալ բառերով, զբիւր զբառախտակի վրա և ապա արտագրիր տետրում:

Մեռագին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ,
հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ, ութերորդ,
յններորդ, փասերորդ:

Հարկավոր ե կարգալ ծրագրված կերպով

Ինչպես գիրք կարգալ, վորպեսզի նրանից ավելի շատ ոգուտ ստացվի:

Առաջին՝ պետք ե ծրագրով, ընտրությամբ կարգալ:

Ընթերցանության ծրագիր կարելի չե ստանալ գրադարանապետից կամ ուսուցչից:

Հետո՝ հարկավոր ե վորոշել, թե որական քանի ժամ կարող ես կարգալ, վորպեսզի մոտավորապես ծրագրես, թե տվյալ ամսում ինչքան և ինչպիսի գրքեր ես կարգալու: Ընթերցանության համար աջակիսի գրքեր ընտրիր, վոր համապատասխանի քո մտավոր զարգացմանը:

Մի կարգա քեզ համար դեռ անհասկանալի գրքեր:

Բայց աշխատի կամաց-կամաց բարդ գրքերի ընթերցման անցնել:

Սովորիր ինքդ, վորոշել, թե ինչպիսի գրքեր ես կարգալու:


Բաց ես անում գիրքը, կարդում ես միքանի տող և չեթե տեսնում ես՝ չկան բարդ խոսքեր, լեզուն քեզ հասկանալի չե, վերցրու և կարգա:

Այսպիսով կսովորես ինքդ քո ընթերցանության գրքերն ընտրել:

Հետո, միշտ նայիր գրքի ցանկին: Յանկը բնորոշում ե գրքի բովանդակութունը: Յեթե ուշադրությամբ կարդաս ցանկը—կիմանաս, թե ինչի մասին ե: Չպետք ե կարգալ, լոկ կարդացած լինելու համար, այլ հարկավոր ե ուսումնասիրել գիրքը, լավ ըմբռնել, թե ինչ խնդիրների մասին ե խոսվում նրա մեջ: Դրա համար հարկավոր ե զանգաղ կարդալ, մտածել կարդացած ամեն մի ասուլիսի վրա, վորոշ գեպքերում նորից կարդալ, կարդացածդ լավ չուրացնելու համար:

5-ՐԴ ՀՈՐՑ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԹՇՆԱՄԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎԱՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

70-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆ Ք



Ազգերի լիգա – գալլերի լիգա

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՅԱՆ

Գալլերի խաղաղութուն, գալլերի համերաշխութուն, գալլերի լիգա:

Հեռվից մտիկ տվողը կասի, թե՛ ես ինչի՞ չեն սրանք եսպես հանգիստ, անշարժ կանգնել՝ իրար մտիկ տալիս: Տեսնես ինչի՞ վրա չեն միտք անում, ինչ են խոսում գելավարի:

Ուրիշ պատճառ չկա: Ամեն մի՛նն աշխատում ե, վոր իր քամակը լավ պահի, վորովհետեւ քամակը վոր լավ չպահեց՝ մին ել տեսար կշտի հարեանը քամակը հափռեց:

Բայց տեսարանն ինչպես ե, կարծես քաղցր գրից են անում, աշխատանքի, խաղաղության վրա չեն խոսում ու իրար հետ սեր են անում:

Վսնց չե:

Մանհեր Անգլիան մտիկ ե տալիս քափոր Փրանսիային, քեռի Ամերիկան ես չերկուսին, խնամի Ճափոնիան աչքն Ամերիկայից չի հեռացնում, ախպեր տղա Իտալիան նայում ե աղիգ բարեկամ Անգլիային, իսկ մանր գալլեր Լեհաստանը, Ռումինիան, Հարավ-Սլավոնիան, Չեխո-Սլովակիան ժպտում են մեծ գելերին: Լավ, անուշ ընկեր-բարեկամ:

— Քաժոր Ֆրանսիա, լավ վորս եմ ճարել—Խորհրդային Միութ-
յանը: Ի՞նչ կասես, չգնանք:

— Վհրտեղ ե, սանհեր Անգլիա. առաջ ընկի, գնանք:
Բայց յերկուսն ել վախենում են դունչերը մեզ անեն ու քա-
մակներն իրար:

Քեռի Ամերիկա, գնացեք, ճաշ անուշ արեք. շատ համով
Միություն ե:

— Շնորհակալ եմ, խնամի Անգլիա ջան, կուշտ եմ: Հլա դու
անուշ արա:

— Այլի, գնա մի պատառ վերցրու: Ավել պատառը փոր չի
ծակի:

— Իտալիա ջան, համեցեք գնա՝ մի թիքա կեր:

— Ատամս ցավում ե, Անգլիա ջան:

— Այ տղա, Լեհաստան, ջահել տղա չես, գնա մի պատառ
վերցրու, քաղցրն ե, ե:

— Գիտեմ, վոր քաղցրն ե պատառը, քեռի Անգլիա ջան, ամա
շատ մեծ ե, կարում չեմ, թե կտրեմ: Միքիչ կտրի տուր:

Անգլիայի մերը չմեռնի: Իհարկե պատառը քաղցրն ե, բայց
վոնց ե կտրում: Չաղ, համեղ պատառներ շատ կան, բայց հաշիվ-
ներ ել շատ կան: Քամակի հարց կա: Քամակն ել քաղցր բան ե:
Մին ել տեսար քաժոր Ֆրանսիան ըռխեց: Սա չըռխի, քեռի Ամե-
րիկան կըռխի:

Բայց մարդիկ քաղցր զրից են անում: Ու գելերի նման չորս
բոլոր արած՝ խաղաղ, հաշտ առում, խոսում, ծիծաղում են:

— Ֆրանսիա ջան, վոնց ես: Չե, լավ ես, լավ:

— Իտալիա ջան, չես ըստի չեմ: Դոշաղ կաց:

Թող ես գալերի լիգան եսպես քաղցր զրից անի: Մենք մի բան
չենք մոռանա:

Գելի քամակը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Պատմիր, ինչ վոր գիտես Ազգերի լիգայի մասին:

ՀԱՐՑԵՐ.

1. Ինչո՞ւ Խորհրդային Միությունը չի մտնում Ազգերի Լիգա-
յի մեջ:

2. Ազգերի Լիգայի զինաթափման կոնֆերանսին Խորհրդային
Միությունը մասնակցում եր:

ՅԵՐԿՁԱՅՆԵՐԸ

այ, ոյ, ույ, յա, յո, յու, յե

Արտադրիր այս հոդվածից զրատախտակի վրա յերկձայնով բա-
սեր, զրանցից ասուլթներ կազմիր և գրիր տետրում:

71-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Անգլիայի դժգոհությունը ԽՍՀՄ-ից

ԽՆԿՈ Ս.ՊԵՐ

Բանվորներին հետ մեր կղզում
հերիք չի մեր բուրդն են գզում.
ել չես թողել վոչ մի գաղութ,
վոր չթափես մեր գլխին սուտ:

Հիմա չել դու հասել ես Ձին,
թե չես թողել կծկես միջին.
քար ես դրել առաջն ափիս,
ձկան փուշ ես դարձել բլիս:

Հերիք անես մեր իշուն չու.
Ձինաստանն ախր ինչո՞ւ
մի մարդու պես հանես մեր դեմ.
քո ի՞նչ գործն ե՞ ում կկթեմ:

ՀԱՐՑԵՐ.

1. Ո՞վ ե հիշում Կերզոնի ուլտիմատումը (վերջնագիրը):
2. Ինչո՞վ պատասխանեցին Կերզոնի ուլտիմատումին ԽՍՀՄ-յան
աշխատավորները:
3. Ո՞վ ե Չեմբերլինը:
4. Մասնակցե՞լ ես «Պատասխան Չեմբերլինին» ողանավի կա-
ռույցման հանգանակությանը:

Համամիութենական խորհուրդների 4-րդ համագումարում ընկ.
Կալինինի արտասանած ճառից.

«Մենք խաղաղություն ենք ուզում, բայց չեթե մեզ վրա հար-
ձակվեն, չեթե բանվորներն ու գյուղացիները զգան, վոր իրենց
ձեռք բերած հաջողություններին վտանգ ե սպառնում, մեր թշնա-
մին կտեսնի և իր սեփական կաշվի վրա կփորձի Խորհրդային Միու-

թյան հեղափոխական մասսաների ուժը, նրանց պաշտպանվելու և թշնամուն հարվածելու ընդունակությունը:

Մենք ամբողջ ուժով կկռվենք խաղաղության համար, բայց չեթե անկարելի լինի վտանգի առաջն առնել, մենք անկախ ու համարձակ կերպով կգլխավորենք և ղեկավարենք վտանգը մեր Միությունից»:

ՀԱՐՅԵՐ.

1. Խորհրդային Միության աշխատավորները պատերազմ ուղևորվում են:

2. Ինչ կանենք մենք, չեթե հակառակ մեր կամքին հարձակվեն մեզ վրա:

Այբուբենից (տես 44-րդ պարագմունքի տեղեկանքը) արտագրիր նախ կիսաձայնը (յ), ապա ձայնավորները (ա, ո, ու, ը, ի, ե) և հետո բաղաձայնները (մնացածները):

Քանի բաղաձայն կա:

6-ՐԴ ՀԱՐՅ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՆ Ե

72-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

«Մենք ստեղծեցինք մի բանակ, վոր առաջին անգամը պատմության մեջ գիտե, թե ինչի համար ե կռվում»
ԼԵՆԻՆ

Կադրային և յերկրային զորամասեր

Ապագա պատերազմներում կմասնակցեն բազմաթիվ բանակներ: Վերջին իմպերիալիստական պատերազմին մասնակցող պետությունները դուրս բերին 63 միլիոն զինված մարդ:

Ուստի մեր յերկրի պաշտպանության համար անհրաժեշտ ե, վոր ամբողջ հասակավոր աշխատավոր բնակչությունը գիտենա ռազմական գործը: Մեր կադրային (մշտական) բանակը հաշվում ե ընդամենը 562.000 մարդ: Մեր պետության մեծության հետ համեմատած՝ Կարմիր բանակն ամենափոքրն ե ամբողջ աշխարհում:

Կադրային բանակի միջոցով, վորտեղ կարմիր բանակայինը յերկու տարի անընդհատ ծառայում ե, մենք չենք կարող մեր յերկրի

ամբողջ հասակավոր աշխատավոր բնակչությանը ռազմական գործը սովորեցնել:

Վորպեսզի զինակոչային տարիքի բանվորներին և գյուղացիներին ռազմական գործը սովորեցնենք, կարմիր բանակում, բացի կադրային մասերից, կան նաև յերկրային զորամասեր:

Յերկրային զորամասերը տարբերվում են բանակի կադրային զորամասերից նրանով, վոր յերկրային զորամասերը կանչված բանակայիններն անցնում են ծառայության կարճ հավաքության միջոցով (տարեկան մեկ ամսից մինչև յերեք ամիս) 5 տարվա ընթացքում: Մնացած ժամանակ նրանք համարվում են արձակուրդում՝ տանը: Յերկրային զորամասերի առավելությունն այն ե, վոր հնարավորություն ե տալիս անցկացնել բնակչության ռազմական գործը, առանց յերկար ժամանակով նրանց տնտեսությունից կտրելու: Դրա համար ել նա մեծ նշանակություն ունի բանակը բնակչության մոտեցնելու գործում:

Վերջին տարիների ընթացքում մենք յեռանդուն կերպով զարգացնում ենք նաև նախազինակոչիկների պատրաստման գործը, վորը բանակին տալիս ե արդեն վորոշ ռազմական պատրաստություն ու նեցող բանվորա-գյուղացիական յերիտասարդներ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Նկարագրիր ձեր գավառում կատարվող յերկրային զորամասերի և նախազինակոչիկների աշխատանքը:

Արտագրիր և ապա բառերի վրա գրիր վանկերի թիվը. ընդգծիր այն բառերը, վոր տողադարձ անել չի կարելի, այսինքն վորոնք կազմված են մի վանկից:

Բացի մշտական բանակից՝ մենք ունենք յերկրային զորամասեր: Դրանով Խորհրդային Իշխանությունը նպատակ ունի՝

1 Սովորեցնել ռազմական գործը բոլոր աշխատավորներին:

2. Բանվորներին և գյուղացիներին չկտրել իրենց աշխատանքից:

3. Թեթևացնել պետության ռազմական ծախսերը:

Հանդիսավոր խոստում Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակը մտնելիս

1. Յես, աշխատավոր ժողովրդի զավակս, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիս, ընդունում եմ բանվորական և գյուղացիական բանակի զինվորի կոչումը:
2. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ յես պարտավորվում եմ պատվով կրել կարմիր զինվորի կոչումը, ուսումնասիրել ռազմական գործը և աչքիս լուսի պես պահպանել ժողովրդական և ռազմական գույքը փչացնելուց և հափշտակումից:
3. Յես պարտավորվում եմ խստիվ և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը և առանց առարկություն կատարել բանվորական և գյուղացիական իշխանությունը նշանակված հրամանատարների բոլոր հրամանները:
4. Յես պարտավորվում եմ հեռու մնալ և հեռու պահել ընկերներիս այն բոլոր արարքներից, վորոնք վարկաբեկում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացու արժանապատվությունը, և իմ բոլոր գործողություններն ու մտքերն ուղղել բոլոր աշխատավորների ազատագրման մեծ նպատակին:
5. Յես պարտավորվում եմ բանվորական և գյուղացիական կառավարության առաջին իսկ կոչին դուրս գալ պաշտպանելու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն ամեն տեսակ վտանգներից և նրա բոլոր թշնամիների վտանգություններից, ինչպես և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների չեղբայրության և սոցիալիզմի գործի համար մղած պայքարում չխնայել իմ ուժերը և նույնիսկ կյանքս:
6. Յեվ չեթե յես չար մտադրությամբ հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսավոր խոստումից, թող ինձ վիճակվի ընդհանուր արհամարհանքը, և թող պատժե ինձ հեղափոխական օրենքի անողորձեռքը:

Ձեր խմբի զորացրված կարմիր բանակայինները թող նկարագրեն, թե ինչպես ե կատարվում կարմիր յերգումը:

Արտագրիր այս վոտանավորը՝ վանկերի բաժանած: Ընդգծիր մեկ ձայնավորից կազմված վանկերը՝ մեկ գծով: Մեկ ձայնավորից և մեկ բաղաձայնից կազմված վանկերը՝ յերկու գծով, իսկ մեկ ձայնավորից և միքանի բաղաձայնից կազմված վանկերը՝ ալիքանման գծով:

Կարմիր զինվորի յերգը

Յես զինվոր եմ կարմիր յերկրի,
ճակատս բաց ու հպարտ,
սուրս կարմիր, կտրուկ ու հաղթ
ու սվինս միշտ անպարտ:

Ճակտիս աստղը՝ հավերժ փայլուն,
ճամպես լուս ե և ուրախ
ու յետևս՝ շարքեր կանգուն.
— Դեպի առաջ, դեպի կյանք:

Դրոշը իմ ծածանվում ե
կապուտներում լաջարձակ.
— Առաջ, առաջ... Գնում ենք մենք
դեպի կարմիր հաղթանակ:

Բարով գնաս — յետ չմնաս

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Գյուղ ես գնում,
կարմիր զինվոր,
քեզ բարի յերթ,
քեզ բարի յերթ,
բարով գնաս.
գնա, ընկեր,
կուռ բանակի
ժիր աշակերտ:

Դու թույլ յեկար,
զորեղ կերթաս.
են ել, են ել
գյուղի համար:
Ախ, քո գյուղը,
խավար գյուղը,
բացեր ունի
շատ... անհամար:

Կուռ բանակից
քո տարածը
գործադրի
խավար գլուղում,
բահ ու փեղատ
ձեռքդ առած՝
քանդի հինը...
մտքի պեղում:

Դու վեր քաշի
գլուղը ճահճից
դեպի վերև,
դեպի արև,
աշխատանքի
կանչի նրան,
յեղիր նրան
թիկունք ու թև:

Գլուղ ու քաղաք
կապեք իրար,
կյանքը դառնա
մեղրի փեթակ,
վոր բանակի
տված դասը
չանցնի իզուր,
աննպատակ:

Գլուղ ես գնում,
կարմիր զինվոր,
քեզ բարի յերթ,
քեզ բարի յերթ,
բարով գնաս.
գնա, ընկեր,
աշխատանքի,
պարիսպ ու բերդ:

ՀԱՐՑԵՐ.

1. Կարմիր բանակը դպրոց է, իսկ ցարական բանակը:
2. Ո՞վ է ձեզնից յեղել կարմիր բանակում:
3. Զորացրված կարմիր բանակայինն ի՞նչ հասարակական աշխատանքներ է կատարում գլուղում:

ԸՆԴԳԺԱԾ ԲԱՌԵՐՆ ԱՅՆՊԵՍ ՓՈՓՈԽԻՐ, ՎՈՐ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ
ԱՌԱՐԿԱ ՅՈՒՅՅ ՏԱՆՆ, ԱՊԱ ԱՐՏԱԳՐԻՐ ՓՈՓՈԽՎԱԾ ԶԵՎՈՎ.

Որինակ՝ նրանք նույն բանվորներն ու գլուղացիներն են, մի-
այն զինված:

Կարմիր մարտիկն իրավունք ունի ընտրելու և ընտրվելու: Նա
նույն բանվորն ու գլուղացին է, միայն զինված:

Այսօր նա զենք է կրում. նա պաշտպանում է բանվորի և գլու-
ղացու աշխատանքը:

Վաղը նա մեքենա և գութան կունենա՝ մեր անտեսութունը
բարձրացնելու համար:

Տպավորություններ կոմիերիտական զորաշարժից

Գ. ԴԱՎԹՅԱՆ

— Քաջով մարշ—հրահանգեց մեր զորաստանի ընդհանուր հրա-
մանատարը: — «Քաջով մարշ» — հրամանը տեղափոխվեց վաշտից-
վաշտ, դասակից-դասակ: Շարժվեցինք. առաջից նվագում էր փո-
ղալին նվագախումբը: Յես «Կապույտ բանակի» գնդացիներին դա-
սակումն էմ. բարձել ենք ջորու մեջքին ծանր գնդացիներ, իսկ Ար-
շավիրը սանձից բռնած քաշում է ջորին: Մյուսներս՝ հրացաններն
ուսերիս, շարվել ենք գնդացիների աջ և ձախ կողմերում: Մեզանից
առաջ և յետ մյուս վաշտերն են, իսկ ավանավերջից շարժվում են
«աբողը» և սանիտարական սայլակները: Նվագախումբը թողնում
ենք դեպի Քանաքեռ շարժվող գնդի հետ, իսկ մենք ուղղվում դեպի
Եջմիածին:

Անցանք Փարաքարը, հեռվում, մթության մեջ յերևում են Եջ-
միածնի լույսերը.

— Այ, տղերք, են ե ան, եսա մի յերկու ժամից այնտեղ կլի-
նենք—խոսում են «կանտրաբանդ» կերպով շարքերում:

Խավար է:

Միքիչ հանգստանալուց հետո մտնում ենք քաղաք: Հեծ. գնդի
նվագախումբը դիմավորում է մեզ նվագով:

Անցնում ենք առաջ: Գավկոմի պատշգամբից մեզ վողջունում
և լողունգներ են նվիրում: Անցնում ենք քաղաքի միջով և կանգ
առնում զորանոցի առաջ: Մինչև տեղավորվելը նվագախումբը նվա-
գում է «Զաբան բալաթի»:

Տեղավորվում ենք զորանոցում և հարևան շենքում: Թեյ խմե-
լուց հետո բերում, մեզ բաժանում են Հոկտեմբերի տասնամյակի
առթիվ նոր լույս տեսած «Ավանգարդ»-ի և «Կարմիր Զինվոր»-ի
համարները:

Պառկում ենք դետնին փռած, փափուկ ծղոտի վրա, միքիչ խո-
սում, հանաքներ անում, բայց միքանի բոպե անց բոլորս քնում ենք:

«Վեր կանց» — լսվեց դասակապետի կտրուկ և բարձր ձայ-
նը. մեկ ակնթարթում վեր ենք թռչում, իսկույն վերցնում հրա-
ցանները:

Դուրսը խավար է:

Գիշեր է, բայց մեզ տանում են ճաշի, վորովհետև գիշերային
մարտի պետք է գնանք: Հերթը հասնում է մեր դասակին, այլու-

մինե մեծ թասերի մեջ մեզ տալիս են «բորչ»։ Բորչն ուտում ենք, հետն ել համով սև հացը։

Դուրս ենք գալիս. շարվում։ Գիշերվա ժամը՝ 4-ն անց քառորդ ե։ Մեր գումարտակի հրամանատարը բացատրում է մեզ գիշերային մարտի խնդիրները և հայտնում նոր տեղեկություններ «թշնամու» դրուժյան մասին — անհրաժեշտ է գրավել «Ուշթափա» բլուրները — դա վճռական նշանակություն ունի, բայց «թշնամին» ավելի չե մոտ աչգ բլուրներից, հարկավոր է շտապել։

Հայտարարվում է գիշերային դիպրիպլինա՝ վոչ մի խոսք, ծխախոտի վոչ մի կաջծ։ Գնդացիային դասակներն անցնում են վաշտերի առաջ։

Լուռ, լուռ և շատ արագ շարժվում ենք դեպի Յերևանի մոտակա չերեք բլուրները։ Առաջից ուղարկել ենք պաշտպանողական դասակ և հեծյալ հետախույզներ։

Ահա հասնում ենք Փարաքարին, կարծես ճեղքելով թանձր խավարը։

Լուսանում է. . .

Շարժվում ենք առաջ, բարձրանում ենք ճանապարհից ձախ բլուրը. ստորոտում պատահում են ջրանցքներ — թրջվելով անցնում ենք։ Ահա և Լենինի ջրանցքը. մի մասը շորերով ընկնում են ջուրը, մյուսներն անցնում են հեռու գտնվող կամուրջով։ Բարձրանում ենք, գրավում բլուրը, գնդացիների համար դիրք դրավում, իսկ մերոնք շարժվում են առաջ։

— «Տրաք, տրաք, տրաք»... լսվում է հեռվում — հանդիպել են և մարտի բռնվել թշնամու հետ։ Քանաքեռից չեկած մեր թշնամին նահանջում է և հաստատվում Յերևանում։ Մենք առաջ ենք շարժվում։ Մեծ կռիվ է տեղի ունենում Ջանգուլի կամուրջի մոտ։ Գնդացիները բարձրացրել ենք մի տանիքի գլուխ և աշնտեղից գնդակոծում ենք թշնամուն։

— Տուռախտախ տախ-տախ... «Ժարիտ» է անում գնդացիները։ Հարձակվում ենք քաղաքի վրա, լցնում ենք հրացանները և գնդակոծում թշնամուն... գնդակները թռչում են ամեն կողմի վրա...

Չորաշարժը վերջանում է։

Ձինված քալում ենք Աբովյան փողոցով նվազախմբի նվազի տակ դեպի Կենտկոմի շենքը, վորտեղից բոլորը ցրվում են։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Ով վոր ձեզնից մասնակցել է Հոկտեմբերյան հեղափոխության կամ Կարմիր բանակի տասնամյակի առթիվ կազմակերպված կոմյե-րիտական զորաշարժին, թող պատմի իր տպավորությունները։

ԻՆՁ ՎՈՐ ԱՅՍՏԵՂ ՅԵՐԿՈՒ ԱՍՈՒՅԹՈՎ Ե ԱՍՎԱԾ, ՄԻԱՅՐՈՒ ՅԵՎ-Ի ՄԻՋՈՅՈՎ ՅԵՎ ԱՊԱ ԳՐԻՐ։

Որինակ՝ Կարոն գրեց և կարդաց։ Կարոն գրեց, Կարոն կարդաց։ Չգուշացիր կեղտից։ Չգուշացիր փոշուց։ Մասնակցենք հրաձգային խմբակների աշխատանքներին։ Մասնակցենք սանիտարական խմբակների աշխատանքներին։ ՊԱՋ-ը-Ավիաբիմը Խորհրդային Միության խաղաղ աշխատանքի հենարանն է։ ՊԱՋ-ը-Ավիաբիմը Խորհրդային Միության պաշտպանության հենարանն է։

76-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Պաջը-Ավիաբիմը ԽՍՀՄ-ի խաղաղ աշխատանքի և պաշտպանության հենարանն է

Ավիաբիմը կատարում է հետևյալ աշխատանքները.

1 Առաջինը՝ ագիտացիա չե մղում — գեկուցումներ, դասախոսություններ է կազմակերպում, պարզաբանում է աշխատավորությանը մեր և բուրժուազիայի փոխհարաբերությունները, պատերազմի վտանգը և նրա բնույթը, ինչպես է հարկավոր պատրաստվել պաշտպանելու մեր չերկիրը և այլն։

2. Մեր բանվորներին և գյուղացիներին սովորեցնում է ռազմական գործը — հրաձգային և ռազմագիտական խմբակների, հրաձգային մրցումների և այլ միջոցներով։ Այս խմբակներում սովորում են հրացանի մասերը, ինչպես վարվել նրա հետ և կրակել և ընդհանրապես ռազմական գործը։

3 Քիմիական ռազմական խեղդող և այլ գազերից պաշտպանվելու համար ՊԱՋ-Ավիաբիմը կազմակերպում է քիմիական խմբակներ և ջոկատներ, վորտեղ սովորեցնում են, թե պատերազմի դեպքում ինչպես պետք է պաշտպանվել քիմիական գազերից և պաշտպանել գործարանը, գյուղը, հիմնարկությունը, դպրոցը այլ և կոլեկտիվի բոլոր մյուս անդամներին։

4. Պատերազմի ժամանակ վիրավորներին և քիմիական զազե-
րից վնասվողներին շուտափույտ ոգնութուն հասցնելու համար,
ՊԱՋԸ-Ավիաքիմը կազմակերպում է հատուկ կանացի սանիտարա-
կան խմբակներ: Քիմիական և կանացի սանիտարական ջոկատներն
իրենց աշխատանքները տանում են թիկունքում՝ աչք վալրերում,
վորտեղ իրենք ապրում և աշխատում են:

5. Ողալին նավատորմի համար ապագա մասնագետներ պատ-
րաստելու համար, ՊԱՋԸ-Ավիաքիմը կազմակերպում է մոդելալին
և սավառակալին խմբակներ: Այստեղ չերիտասարդութունն այրո-
պլանների փոքր մոդելների վրա սովորելով, հետագայում անցնում
է ողալին նավատորմի մասնագիտական դպրոցներ:

(«Հայաստանի աշխատավորուհուց»)

ԱՐՏԱԳՐԻՐ ԸՆԴԳԺԱԾՆԵՐԸ. ԱՐՏԱԳՐԵԼՈՒՅ ԱՌԱՋ՝ ՏԵՏՐԱԿԻ
ՅԵՐԵՄՆ ԱՅՍ ՁԵՎՈՎ ՉՈՐՍ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԻՐ, ՎՈՐՊԵՍՋԻ ՏՈՂԱ-
ԳԱՐՁ ԱՆԵԼՆ ԱՎԵԼԻ ՇՈՒՏ-ՇՈՒՏ ՊԱՏԱՀԻ.

ՈՐԻՆԱԿ՝

ՊԱՋԸ-Ավիա-
քիմը տանում է հե-
տևյալ աշխա-
տանքները.

Մեր բանվորնե-
րին ու գյուղացիներ-
ին սովորեցնում է ռազ-
մական գործը—հրա-
ձգալին և ռազմա-
գիտական...

Ի՞նչ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Ե ԿԱՏԱՐՈՒՄ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ.

7-ՐԴ ՀԱՐՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋ
ԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Ե

77-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ՅՈՒՖ ՎԻՍԱՐԻՈՆՈՎԻՀ ՍՏԱԼԻՆ

Համ. Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմի-
տեի գլխավոր քարտուղարը Յոսիֆ Վիսարիոնովիչ ՍՏԱԼԻՆՆ Ե:
Ընկ. Ստալինը ծնվել է 1879 թ.: Նրա հայրը Թիֆլիսի նա-
հանգի գյուղացի չեր: 17 տարեկան հասակից ընկ. Ստալինը մտնում է

սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ և հեղափոխական մեծ
աշխատանք կատարում Թիֆլիսի, Բագվի և Բաթումի բանվորների
մեջ: Յարական ժանդարմներն աշխատում են ան-
վտանգ դարձնել այս աննկուն հեղափոխականին և
նրան բանտերում և աքսորավայրերում են պահում:
1904 թ. ընկ. Ստալինը փախչում է Սիբիրից, ուր
նրան աքսորել էլին բանտ նստեցնելուց հետո:



ԸՆԿ. ՍՏԱԼԻՆ

1908—1913 թվականներին ցարական կառավա-
րութունը հինգ անգամ ձերբակալում և հեռավոր
նահանգներ աքսոր է ուղարկում ընկ. ՍՏԱԼԻՆՆ,
բայց նրան հաջողվում է չորս անգամ փախչել աքսորից և շարունա-
կել իր հեղափոխական գործունեությունը:

Փետրվարյան հեղափոխությունից հետո ընկ. ՍՏԱԼԻՆԸ դառ-
նում է «Պրավդա»-ի և ուրիշ բալլեիկական լրագրերի խմբագիր:
1919 թ. նա Բանվորա-գյուղացիական Տեսչության ժողովրդական
կոմիսսարն էր: Քաղաքացիական կռիվների ժամանակ ընկ. ՍՏԱԼԻՆԸ
զանազան ֆրոնտների և հանրապետության ռազմա-հեղափոխական
Սորհուրդների անդամ է չեղել: Ռազմական ապարիզում մատու-
ցած ծառայության համար նա պարգևատրված է Կարմիր Դրոշի
շքանշանով: Ներկայումս ընկ. ՍՏԱԼԻՆԸ Համկկկ-ի գլխավոր քար-
տուղարն է:

ԱՐՏԱԳՐԻՐ ԱՅՍ ՎՈՏԱՆԱՎՈՐԸ ՎԱՆԿԵՐԻ ԲԱԺԱՆԱԺ. ՅՈՒՐԱՔԱՆ-
ՉՅՈՒՐ ՎԱՆԿՈՒՄ ԸՆԴԳԺԻՐ ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՅԵՐԿԱՅՆՆԵՐԸ.

Կամուրջ գցենք

ԽՆԿՈ ԱՊԵՐ

Ղարդաշ Հասան,
ընկեր Թևան,
չե՛լ տավարիչ
Դարչո, Իվան,
մերն է բահը,
մանգաղ ու մուրճ,
յեկեք գցենք
ամուր կամուրջ
ծովերից ծով,
ծովից ովկյան
ընկերները
զնան ու գան:

Մեր կամուրջն է
մեր ապագան.—
բահ, մուրճ, մանգաղ
վորտեղ զնգան,
վորտեղ ծաղկեն
վար, ցան ու քաղ,
ենտեղ անենք
կյանքը զրախտ,
ենտեղ մենք ենք
հոգով անհաղթ:
Ձին ու յապոն,
հնդիկ, հաբաշ

ընկերներ ենք—
սիրով դարդաշ:
Հոգով մեկ ենք,
շահով մեկ ենք,
թշնամու դեմ

մահով մեկ ենք:
Ես աշխարհը
քրտնքի դաշտ,
ձեռք ձեռքի տանք
ու ապրենք հաշտ:

ՀԱՐՑ.

Ի՞նչպես են վերաբերում մեզ կապիտալիստական չեղերները
բանվորներն ու գյուղացիները:

78-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ինտերնացիոնալ

Յեղի՛ր, ում կյանքը անիծել է,
ով ճորտ է, մերկ է և ստրուկ:
Արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կռվի չենք մենք ձգտում:
Այս հին աշխարհը կփորենք մենք
մինչև հիմքերը և հետո
մեր նոր աշխարհը կշինենք մենք,
ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա չե վերջին կռիվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք է մեր ազատությունը
կռենք ձեռքով մեր սեփական:
Վորպեսզի շուտ փշրենք մեր լուծը
և չեա խլենք վողջ հողը մեր—
խփենք մուրձերը, տանք մեր ուժը,
բանի չեղկաթը տաք է դեռ:

Սա չե վերջին կռիվը
և պայքարը մեծ:
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկե:

Հեղափոխական որեր

Հունվարի 18—1919 թվին. այդ որը Բերլինի բանվորներն
ապստամբեցին խորհուրդների իշխանության համար, բայց ջարդվե-
ցին գեներալների կողմից, վորոնց առաջնորդում էր գերմանական
մենշևիկ Նոսկեն:

Կոիֆերում ընկան հազարավոր բանվորներ և գերմանական
հեղափոխական բանվորների առաջնորդներ Կարլ Լիբկնեխտը և Ռո-
զա Լյուքսեմբուրգը:

ՀՈՒՆՎԱՐԻ 22. Այդ որը ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի աշխատա-
վորները հարգում են պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիու-
թյան մեծագույն առաջնորդ՝ ընկ. Վլադիմիր Իլյիչ Լենինի հիշատա-
կը (մեռավ 1924 թվի հունվարի 21-ին):

1905 թվի հունվարի 22-ին (հին տոմարով հունվարի 9-ին).
Պետրոգրադի (այժմ Լենինգրադի) բանվորները մեծ խմբով գնացին
Նիկոլայ Յերկորդ թագավորին խնդրելու՝ իրենց դրությունը թե-
թեկացնի: Թագավորը հրամայեց զնդակահարել խաղաղ բանվորներին:
Տեղնուտեղը մնացին բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ:

Հունվարի 22-ը համարվում է 1905 թվի ռուսական առաջին
հեղափոխության սկիզբը:

Փետրվարի 23-ը 1918 թվին. այդ որը Խորհրդային իշխա-
նությունը դեկրետ արձակեց բանվորա-գյուղացիական Կարմիր բա-
նակ ստեղծելու մասին:

Փետրվարի 23-ի որը տոնվում է վորպես Կարմիր բանակի
հիմնադրության որ:

Մարտի 5-ը 1919 թվին. այդ որը Մոսկվայում հիմնվեց Կո-
մունիստական Ինտերնացիոնալը—բանվորների միջազգային ընկե-
րությունը:

Մարտի 12-ը 1917 թվին. այդ որը Լենինգրադի բանվորներն
ու զինվորներն ապստամբեցին և տապալեցին ցարի իշխանությունը
(փետրվարյան հեղափոխություն):

Մարտի 18-ին 1871 թվին Ֆրանսիայի մայրաքաղաք Պարիզի
բանվորներն ապստամբեցին բուրժուազիայի դեմ և հիմնեցին առա-
ջին Կոմունան:

Պարիզի Կոմունան ճնշվեց գեներալ Գալիֆեյի ձեռքով: Տաս-
նյակ հազարավոր բանվորներ զնդակահարվեցին և մեռան աքսո-
րում:

Ապրիլի 17-ը 1912 թվին. այդ որը (հին տոմարով ապրիլի
4-ին) բանվորները Լենայի վոսկու հանքերում (Սիբիրում), չեղե-

հավաքվել էին խաղաղ ժողովի, ընդհանուր գործադուլի ժամանակ
գնդակահարվեցին ցարական զորքերի կողմից:

ԱՐՏԱԳՐԻՐ ՎԵՐՋԱԿԵՏԵՐՈՎ ՅԵՎ ՎԵՐՋԱԿԵՏԵՐԻՑ ՀԵՏՈ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ

Կոմիտեերն

Ամբողջ աշխարհի հեղափոխական շարժման ղեկավարն է Յեր-
րորդ Կոմունիստական Ինտերնացիոնալը (Կոմիտեերն): Կոմունիստա-
կան Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեն գտնվում է Մոսկվայում:
Կոմունիստական Ինտերնացիոնալը Համաշխարհային Հեղափոխու-
թյան գլխավոր շտաբն է. Կոմիտեերնը հիմնվել է 1919 թվին:

Յ Ա Ն Կ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ. ԾԱՆՈԹԱՆԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

- 1-ին պարագմունք.— Ի՞նչ է ասել ընկեր Լենինը սո-
վորելու մասին . . . Կ. Ստեփանյան
2-րդ պարագմունք.— Ի՞նչպես աշխատել . . . Փոխ. ռուսերենից

Ա. Ռ. Ա. Ջ. Ի. Ն. Բ. Ա. Ժ. Ի. Ն.

ԱՄՐԱՅՆԵՆՔ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. 1-ԻՆ ՀԱՐՑ. ՆՈՐ
ԿՅԱՆՔ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ

- 3-րդ պարագմունք.— Սիրելի Արամ (համակ) . . . Ա. Բ. Գառապաճյան
4-րդ » Գեղջկուհին . . . *
5-րդ » Զարկիր, զարկիր, սալին մուրճ Գուչիզիլի
6-րդ » Մանիշը . . . *
7-րդ » Սա պատմական խոշոր անցք—
Արփաչալը — Շիրջրանցք . . . Խճկո Ապեր

2-ՐԴ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԵՏՔ Ե ԱՆՑՆԵԼ ՍԵՐՄԱՓՈԽՈՒԹՅԱՆ

- 8-րդ պարագմունք.— Սերմափոխությունը բարձրաց-
նում է բերքը . . . Փոխ. ռուս.
3-ՐԴ ՀԱՐՑ. ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ, ՄԱՔՐԱԾ ՍԵՐՄԸ, ՄԵՔԵՆԱՆԵՐԸ
ՅԵՎ ՇՈՒՏ ԳԱՐՆԱՆԱՎԱՐԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ԵՆ ԲԵՐՔԸ

- 9-րդ պարագմունք.— Աղբի և հողի բողոքները . . . Յալսացի
10-րդ » » » (շարունակ) »
11-րդ » Աշխատանքով — վոչ աղոթքով Խճկո Ապեր
12-րդ » Մեքենա գործածեք . . . » »

4-ՐԴ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՃՅՈՒՂԵՐՆ ԵԼ
ՉԱՐԳԱՅՆԵՆՔ

- 13-րդ պարագմունք.— Անասուններին լավ է ենք պա-
հում . . . Յալսացի
14-րդ » Անասուն. լավ է ենք պահ. (շար.) »
15-րդ » Անասունների կերի և հողի պա-
րարտացման համար վիկ ցանեցեք Ակսել Բակունց

- 16-րդ պարագմունք. Կարտոֆիլի գանգատը . . . Յալսացի
 » » Թըթուրն ուտի, զորանա՝ խեղճ
 բոստանչին չորանա . . . Խնկո Սպեր
 17-րդ » Գարո բիձու շերամապահու-
 թյունը. Հով. Թումանյան
 18-րդ » Պահպանենք անտառները . . . ըստ «Աշխատանք»-ի

5-րդ ՀԱՐՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՅՈՒՂԱՄԲԱԿՆԵՐԸ
 ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՆԵՐԸ ՆՊԱՏՏՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-
 ՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՐ ՁԵՎԵՐ ՄՏՅՆԵԼՈՒՆ

- 19-րդ պարագմունք. — Մեր խորհրդալին տնտեսու-
 թյուններն ոգնում են չքավոր
 գյուղացիներին Արագի
 20-րդ » Մեր գյուղի մեքակներն ու գյուղ-
 լիքիս դպրոցները գյուղատնտե-
 սական ցուցահանդեսներում ըստ «Մանկալ»-ի
 21-րդ » Գյուղատնտեսի զբուսյուններն ոգ-
 նացին Յալսացի

6-րդ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՊԵՏՔ Ե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
 ՄԻՋՈՅՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

- 22-րդ պարագմունք. — Կազմակերպենք մեքենադատա-
 դորձական ընկերություններ Փոխ. ուսու.
 23-րդ » Տրակտորի լիքը Հովիկ Մելիքյան
 24-րդ » Վարձակալան Ակսել Բակունց

7-րդ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՄԲԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱՏՎՈՒ-
 ԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈԳՆՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻՆ

- 25-րդ պարագմունք. — Վարկալին ընկերությունն աշ-
 խատավորին ազատում է վաշխառուների ճան-
 կերից փոխ. ուսու.

8-րդ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՊԱՌԿՈՈՊԸ ԳՅՈՒՂԱՅՈՒՆ ՏԱԼԻՍ Ե ԵԺԱՆ
 ՅԵՎ ԼԱՎ ԱՊՐԱՆՔ

- 26-րդ պարագմունք. — Կոոպերատիվը բացվեց—ման-
 րախանութը փակվեց Ա. Նուս
 27-րդ » Դուրը ներսից—լեզն լերդիկից . . . Խնկո Սպեր

9-րդ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆ
 ԱՐՏԵԼՆԵՐԸ, ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ԿՈՄՈՒՆԱՆԵՐԸ ԵՆ

- 28-րդ պարագմունք. — Կովդ ես կթել, տար կաթնարտիկ Խնկո Սպեր
 29-րդ » Լուկաչեն կոլեկտիվ տնտեսու-
 թյունը «Մանկալ»-ից
 30-րդ » Գեղ կանգնի՝ գերան կկոտրի . . . «Աշխատանք»-ից

Յ Ե Ր Կ Ը Ռ Դ Դ Ե Ա Ճ Ի Կ

ԲԱՐՁՐԱՅՆԵՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ. 1-ԻՆ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂ ՈՒ
 ԲԱՂԱՔ—ՈՒԺԸ ՀԱՎԱՔ

- 31-րդ պարագմունք. — Ի՞նչ է տալիս գյուղը քաղաքին
 և քաղաքը գյուղին Խնկո Սպեր
 32-րդ » Գյուղացու տուն » »
 33-րդ » Դիշերն անտառում «Աշխատանք»-ից

2-րդ ՀԱՐՑ. ՄԵՏԱՂՆ ՈՒ ՎԱՌԵԼԻՔԸ ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵ-
 ՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ ԵՆ

- 34-րդ պարագմունք. — Մտադարձյունաբերությունը—
 ամբողջ արդյունաբերության հիմքն է կազմում ըստ Մալիցի
 35-րդ » Նավթաշխարհում առաջ և հիմա Բանգոր Ղաթիբ
 » » Բալախանի Ս. Զուլաֆյան

3-րդ ՀԱՐՑ. ԿՍՈՒՈՒՅԵՆՔ ՆՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ՅԵՎ ՎԵՐԱ-
 ՍԱՐՔԱՎՈՐԵՆՔ ՀՆԵՐԸ

- 36-րդ պարագմունք. — Ի՞նչ ենք արել և ինչ պիտի
 անենք Ֆուլյան
 37-րդ » Տեքստիլ գործարանում Քարհաղ

4-րդ ՀԱՐՑ. ԵԼԵԿՏՐՈԿԱՅԱՆՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵ-
 ՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

- 38-րդ պարագմունք. — Չորագետ Ս. Աղեկյան
 39-րդ » Մեքենայով Ս. Տեր-Զաֆարյան

5-րդ ՀԱՐՑ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԴՊՐՈՅՆ Ե

- 40-րդ պարագմունք. — Բանվորի աշխատանքն արտա-
 դրություն մեջ ծանր է Բանգոր Արսա
 41-րդ » Արհմիությունները կոմունիզմի
 դպրոց են «Արհմիութ.» գրքից
 42-րդ » Յերկուշարթի որը Բագվում ցա-
 րի ժամանակ Մ. Մանգեկյան
 43-րդ » Արհմիությունները կոլտուրա-
 կան աշխատանք են տանում «Աշխատանք»-ից

Յ Ե Ր Կ Ը Ռ Դ Դ Ե Ա Ճ Ի Կ

ԱՄՐԱՅՆԵՔ ՄԵՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ. 1-ԻՆ ՀԱՐՑ. ԳՅՈՒՂԱՊԱՌՀՈՒՐԴՆԵՐԸ
 ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

- 44-րդ պարագմունք. — Գյուղի ուրիշի նորընտիր նա-
 խաղահը Հովիկ Մելիքյան
 45-րդ » Կինը հիմա ազատ քաղաքացի չէ
 46-րդ » Խուսափենք գրբացիներից և հե-
 քիմներից «Հայաստ. աշխատ.»

- 47-րդ » Տերտերն ու Պետապը Խճկո Ապեր
48-րդ » Ապահովագրութիւնն պարտա-
դիր—քիչ է, քիչ » »
49-րդ » Շրջիկ կինոն յենթաշէջ գլուղում Մկրտիչ Արմեն
50-րդ » Առաջ և հիմա «Ս. Երանանգ»-ից
51-րդ » Խորհրդային դատարանը պաշտ-
պանում է կնոջ իրավունքները «Հայաստ. Ա. Երանանգ»

2-րդ ՀԱՐՅ. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԼԱՅՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ
ԵՆ ՅԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

- 52-րդ պարագմունք.— Ո՞վ է զրկված ընտրական իրա-
վունքից —
53-րդ » Նոյեմբերի 29-ը Խճկո Ապեր
54-րդ » ՀՍԽՀ Կենտրոնականի նախագահ
ընկ. Սարգիս Կասյան —
» ՀՍԽՀ Ժողովում խորհի նախագահ
ընկ. Սահակ Տեր-Գաբրիելյան —

3-րդ ՀԱՐՅ ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 55-րդ պարագմունք.— Բազու Հ. Հակոբյան
» » Արցունոտ գիշերը Ալազան
56-րդ » Վրաց աշխատավոր գլուղացու
Վիճակն առաջ Դ. ձոնվան

4-րդ ՀԱՐՅ. ՄԵՐ ՖԵԴԵՐԱՅԻՆ

- 57-րդ պարագմունք.— ԱՍՖԽ Հանրապետութիւնը . . . «Կարմ. մարտ. ընթ.»

5-րդ ՀԱՐՅ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏԵՆՈՒՄ ԵՆ ՎԵՅ
ԱՆԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 58-րդ պարագմունք — ԽՍՀՄ աշխատավորութեան տըն-
տեսական, քաղաքական և ուղղման միութիւնն է . . . —
59-րդ » ԽՍՀՄ ազգութիւնների լիզ-
բայրական միութիւնն է «Կարմ. մարտ. ընթ.»
60-րդ » Ո՞վ է Կալինինը «Մանկալ»-ից
» » Պատգամավորը Սանգրո Եռուի

Ձ Ո Ր Ր Ո Ր Դ Բ Ա Ճ Ի Ն

ՊԱՇՏՊԱՆԵՑԵՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ. 1-ԻՆ ՀԱՐՅ. ՄԵՆՔ
ԳՏՆՎՈՒՄ ԵՆՔ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

- 61-րդ պարագմունք.— Ամերիկան ամենահարուստ լեր-
կերն է —
62-րդ » Անգլիան շահագործում է տառ-
նչակ լերկերների ու ազգութիւնների միլիոնա-
վոր աշխատավորներին Խճկո Ապեր
» » Ֆրանսիան իր շահագործումով
լիտ չի ֆնում Անգլիայից —

- 63-րդ » Գերմանիայում կապիտալիզմն
ուժեղանում է —

2-րդ ՀԱՐՅ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԳՏՆՎՈՒՄ Ե ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿԱԼՎԱՍՏԱՆԵՐԻ ԶԵՌՔՈՒՄ

- 64-րդ պարագմունք — Ի՞նչպես են ապրում բանվոր-
ներն ու գլուղացիները կապիտալիստական լեր-
կերներում Համ. Կենցործկումի
Մանիքեսից
» » Բանվորունու որորը Ալ. Մասուրյան
65-րդ » Ի՞նչ է ՄՈՊՐ-ը և ի՞նչ է ոգնում նա . . . —

3-րդ ՀԱՐՅ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՃՆՇՈՒՄ ԵՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

- 66-րդ պարագմունք — Չինացի գլուղացին ստրուկ է
67-րդ » Անգլիացիները Չինաստանում
ճնշում են ապստամբութիւնը Ա. Վոսնեի
68-րդ » Զահը (առակ ըստ Դեմ. Բեդնու) Խճկո Ապեր
4-րդ ՀԱՐՅ. ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՏԱՃԿԱՍՏԱՆ
ՅԵՎ ՊԱՐԱԿԱՍՏԱՆ

- 69-րդ պարագմունք.— Արևելյան ժողովուրդները մեր
բարեկամներն են «Կարմ. մարտ. ընթ.»

5-րդ ՀԱՐՅ. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎԱՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

- 70-րդ պարագմունք.— Ազգերի լիզա—գալիերի լիզա . Դեմ. Դեմիրճյան
71-րդ » Անգլիայի դժգոհութիւնը ԽՍՀՄ-ից Խճկո Ապեր

6-րդ ՀԱՐՅ. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՆ Ե

- 72-րդ պարագմունք.— Կադրային և լերկրային զո-
րամասեր —
73-րդ » Կարմիր լերկում «Կարմ. ուղմ. հուլ.»
» » Կարմիր լերկում լերկը »
74-րդ » Բարով գնաս—լիտ չիմաս . . . Խճկո Ապեր
75-րդ » Տպավորութիւններ կոմիերի-
տական զորաշարժից Գ. Դավթյան
76-րդ » ՊԱՋԸ—Ավիաբիմը խաղաղ աշ-
խատանքի և պաշտպանութեան հենարանն է . . «Հայաստ. աշխ. ուղ.»

7-րդ ՀԱՐՅ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Ե

- 77-րդ պարագմունք.— Յոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին «Ի՞նչ պէտք է իմա-
նա կարմիր բանա-
կայիցը» գրքից
» » Կամուրջ գցենք Խճկո Ապեր
78-րդ » Ինտերնացիոնալ —
» » Հեղափոխական որեր «Կարմիր ուղմ. հուլ.»



ՀՀ Ազգային գրադարան



NL0249304

8060